

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԼՈՒՄԻՆԵ ՄԻՇԱՅԻ ԵԴԻԳԱՐՅԱՆ

ԱՐՏԱԴՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

## Ա Տ Ե Ն Ա Խ Ո Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մաս-  
նագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման համար

Գիտական ղեկավար՝  
տ.գ.դ., պրոֆ. Է. Ս. Ղազարյան

**ԵՐԵՎԱՆ - 2015**  
**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

	<b>ԱՌԱՋԱԲԱՆ -----</b>	<b>4</b>
<b>Գլուխ 1</b>	<b>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ -----</b>	<b>16</b>
	1.1. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների տեսական հարցերը -----	16
	1.2. ՀՀ գյուղատնտեսության առանձնահատկությունները և արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող գործոնները -----	28
	1.3. ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների առանձնահատկությունների բնութագիրը -----	42
<b>Գլուխ 2</b>	<b>ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ -----</b>	<b>54</b>
	2.1. ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի վերլուծությունը -----	54
	2.2. ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացման տնտեսագիտական հիմնախնդիրները -----	68
	2.3. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների միջազգային փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում-----	78
<b>Գլուխ 3</b>	<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ-----</b>	

<b>ՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ -----</b>	<b>92</b>
3.1. Գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի սարքինության մակարդակի և օգտագործման արդյունավետության վրա տարբեր գործոնների ազդեցության քանակական բնութագիրը -----	92
3.2. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների սակագների հաշվարկման մեթոդական մոտեցումները -----	103
3.3. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները -----	113
3.4. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը -----	123
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ -----</b>	<b>133</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ -----</b>	<b>146</b>

## ԱՌԱՋԱԲԱՆ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Ագրոպարենային համակարգի կենսագործունեությունը և զարգացումն անհնարին են առանց արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի բնականոն գործունեության և շուկայի պահանջներին համապատասխան դրանց կատարելագործան, որակական ու քանակական առումով մատուցվող ծառայությունների ընդլայնման:

Գյուղատնտեսության ճյուղի զարգացման հիմնարար ուղղություններից մեկը համալիր մեքենայացումն է: Վերջինս ագրարային ոլորտի մրցունակության բարձրացման, գյուղատնտեսական արտադրանքների արտադրության ավելացման և ճյուղի ներուժի լիարժեք օգտագործման հիմնական գործոններից է:

Վերջին երկու տասնամյակի ընթացքում գյուղատնտեսության մեքենատրակտորային հավաքակազմի նորացման տեմպերը խիստ ցածր են եղել, ուստի մաշվածության և սարքինության մակարդակի ցածր լինելու հետևանքով առկա տեխնիկայի օգտագործումը ցածր արտադրողական և ծախսատար է:

Միաժամանակ փոքր հողակտորների և դրանց մասնատվածության պայմաններում մեծանում է մեքենայական ագրեգատների պարապ ընթացքը և կրճատվում հիմնական աշխատանքի տևողությունը:

Հանրապետությունում 1991 թվականից հետո իրականացված տնտեսական վերափոխումների և սեփականաշնորհման գործընթացի արդյունքում հողերի մասնավորեցումն ուղեկցվել է նախկին 859 կոլտնտեսություններին, խորհրտնտեսություններին և միջտնտեսային կազմակերպություններին պատկանող գյուղատնտեսական տեխնիկայի սեփականաշնորհմամբ: Արդյունքում, ներկայումս գործում են շուրջ 339,2 հազ. գյուղացիական տնտեսություններ: Մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, որից 1.1 հա վարելահողեր<sup>1</sup>, որոնք իրենց հերթին բաժանվում են 3-4 հողակտորների: Տնտեսությունների փոքր չափերի պատճառով սեփական տեխնիկա ունենալը նպատակահարմար չէ, բացառությամբ

<sup>1</sup> Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին, 2006թ. հունվարի 1-ի դրությամբ: Վիճակագրական տեղեկագիր: ՀՀ ԱՎԾ, Երևան 2006թ.-էջ 3

յամբ այն դեպքերի, երբ տեխնիկայի սեփականատերը մեխանիզատոր է և իրականացնում է վճարովի ծառայություններ:

Քանի որ հողօգտագործողներն ազատ են մշակաբույսերի ընտրության հարցում և նույն հողազանգվածի տարբեր հատվածներում զբաղվում են տարբեր մշակաբույսերի արտադրությամբ, ապա որոշակի բանվորական գործընթացները կատարվում են ոչ մասիվ տարածությունների վրա, ընդ որում կարճ ժամանակահատվածում իրականացվում են տարբեր բնույթի մեքենայական աշխատանքներ:

Ագրարային ոլորտի արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի ձեռնարկությունների մասնավորեցումը և ապապետականացումը սկսվել էր դեռևս 1992 թվականից և ներկայումս ավարտված է:

Ներկա դրությամբ գյուղացիական տնտեսություններում բարձր է ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը, գյուղատնտեսությունում առաջնահերթ ռեսուրսների՝ պարտանյութի, պայքարի քիմիական միջոցների օգտագործման ծավալները զգալիորեն շեղված են ագրոտեխնիկական նորմերով պահանջվող ծավալներից:

Գյուղատնտեսական տեխնիկայի քանակը, գյուղատնտեսությունում իրականացված վերափոխումների սկզբին նախորդող ժամանակահատվածի հետ համեմատած, մեծ փոփոխություններ չի կրել: Առկա մեքենայական հավաքակազմը իր հզորություններով (մակնիշային կազմով) չի համապատասխանում տնտեսությունների չափերին: Գյուղատնտեսությունում իրականացված բարեփոխումների ժամանակահատվածում զգալիորեն իջել է գյուղատնտեսական արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակը:

Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման նորմատիվային ժամկետների գերազանցման, նորոգումների ու տեխնիկական սպասարկումների գործուն համակարգի բացակայության պայմաններում գնալով նվազում է դրանց սարքինության աստիճանը:

Մեքենայացված աշխատանքներով սպասարկումները գյուղատնտեսությունում գլխավորապես իրականացվում են տեխնիկայի սեփականատեր հանդիսացող մասնավոր տնտեսավարողների հետ գյուղացիական տնտեսությունների ազատ պայմանագրային փոխհարաբերություններով:

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ (անկախ սեփականության ձևից) հանրապետությունում առկա է 1356 միավոր հացահատիկահավաք կոմբայն, 405 միավոր

կերահավաք կոմբայն, 15063 միավոր բեռնատար ավտոմեքենա, գյուղատնտեսական նշանակության 15025 միավոր տարբեր տեսակի տրակտոր: Գյուղգործիքների քանակը կազմում է՝ տրակտորային կցասայլ՝ 6130, խոտհնձիչ՝ 2031, հատիկագտիչ մեքենա՝ 425, շարքացան՝ 1863, զուբան՝ 3903, կուլտիվատոր՝ 2279 միավոր և հավաքիչ-մամլիչ՝ 1664 միավոր<sup>2</sup>:

Գյուղատնտեսության տեխնիկական հավաքակայանի նորացման նպատակով 1976-1990թթ. տարեկան միջին հաշվով գյուղատնտեսական կազմակերպություններին է հատկացվել տարբեր մակնիշի շուրջ 900 տրակտոր, 90 հացահատիկահավաք կոմբայն: 1991թ. ներմուծվող տեխնիկայի քանակությունը կտրուկ կրճատվել է, տվյալ տարում հանրապետություն է ներմուծվել ընդամենը 507 միավոր տրակտոր, իսկ հացահատիկահավաք կոմբայն ընդհանրապես չի ներմուծվել: 1992թ. գրեթե դադարեցվել է տեխնիկայի ներմուծումը և ներմուծվել է ընդամենը 15 միավոր տրակտոր: 1993-1997թթ. տրակտոր ընդհանրապես հանրապետություն չի ներկրվել: 1997թ. ներկրվել է միայն 15 միավոր հացահատիկահավաք կոմբայն: Սկսած 1998թ., բացառությամբ 2009թ., հանրապետություն են ներկրվել փոքր խմբաքանակներով տրակտորներ, հացահատիկահավաք կոմբայններ և գյուղատնտեսական գործիքներ: Տեխնիկայի ներմուծումը վերջին տասնամյակում ակտիվ է եղել 2006թ., 2011թ., 2012թ., 2013թ. և 2014թ. տրակտորների ներմուծումը համապատասխանաբար կազմել է 246, 246, 326, 170 և 180 միավոր, իսկ հացահատիկահավաք կոմբայնների ներմուծումը ակտիվ է եղել 2006 և 2011թ., ներմուծվել է համապատասխանաբար 51 և 12 միավոր:

Վերջին 22 տարվա ընթացքում տեխնիկական միջոցների ներմուծման խմբաքանակների կտրուկ կրճատման պատճառով գյուղատնտեսության մեքենայական հավաքակազմի տարիքը մեծացել է, տեխնիկայի գերակշռող մասի համար անցել ամորտիզացիոն նորմաներով սահմանված ժամանակահատվածը:

Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակայանի տարիքային կազմի վերլուծությունից պարզվել է, որ օրինակ տրակտորների ընդհանուր թվի 28 %-ը շահագործվում է 34 տարուց ավելի, 28.3 %-ը՝ 29-33 տարի, 35.1 %-ը՝ 14-28 տարի և միայն 8,6%-ը՝ մինչև 13 տարի: Փաստորեն, շահագործվող տրակտորների 91.4%-ն օգտագործվում է 13 տարուց ավելի և անցել է ամորտիզացիայի համար սահմանված ժամկետները:

<sup>2</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2015թ. հունվարի 1-ի դրությամբ: Վիճակագրական տեղեկագիր: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ.-էջ 4-9

Հացահատիկահավաք կոմբայնների համար վիճակն առավել վատթար է, այսպես հացահատիկահավաք կոմբայնների 37.4 %-ը շահագործվում է 34 տարուց ավելի, 41.9 %-ը՝ 29-33 տարի, 14.5 %-ը՝ 14-28 տարի և միայն 6.2 %-ը՝ մինչև 13 տարի<sup>3</sup>: Մաշված տեխնիկայի շահագործումը հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի գերածախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում նորոգման և տեխսպասարկման աշխատանքները:

Երկար տարիներ տեխնիկական նոր միջոցներով գրեթե չհամալրվելու, եղածը բարոյապես և ֆիզիկապես մաշվելու, ժամանակին չնորոգվելու, տեխնիկական խնամքներով չապահովվելու հետևանքով աստիճանաբար նվազել է գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության մակարդակը: Առկա գյուղատնտեսական տեխնիկայի վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015 թվականի տարեսկզբին տեխնիկայի սարքինության ցուցանիշը կազմում էր՝ տրակտորներինը՝ 78.9, հացահատիկահավաք կոմբայններինը՝ 74.3, կերահավաք կոմբայններինը՝ 72.8, խոտհնձիչներինը՝ 84.4, տրակտորային կցասայլերինը՝ 87.1, գութաններինը՝ 88.3, կուլտիվատորներինը՝ 84.5 %<sup>4</sup>:

Գործող տեխնիկայի սահմանափակ քանակի և նոր ստեղծված գյուղացիական տնտեսությունների մեծ թվի հետևանքով դրանց միայն մի մասն է ապահովված սեփական միջոցներով: Ապահովվածության ցուցանիշը սարքին տեխնիկայի համար 100 գյուղացիական տնտեսության հաշվով կազմում է՝ հացահատիկահավաք կոմբայններինը՝ 0.3, տրակտորներինը՝ 3.3, տրակտորային կցասայլերինը՝ 1.5, գութաններինը՝ 1.0, շարքացաններինը՝ 0.5, խոտհնձիչներինը՝ 0.5, հավաքիչ-մամլիչներինը՝ 0.4 միավոր<sup>5</sup>:

Վերջին տարիներին, ըստ էության, բացի ՉԺՀ-ի, Ճապոնիայի և Հնդկաստանի կառավարությունների դրամաշնորհների հաշվին և «Գյուղատնտեսական բարեփոխումներին աջակցության» ԾԻԳ-ի կողմից իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում ներկրված գյուղատնտեսական տեխնիկայից, այլ ներկրումներ, եղել են փոքր խմբաքանակներով: Դրամաշնորհների հաշվին 1998-2011թթ. ընթացքում ներմուծվել են 116 հացահատիկահավաք կոմբայն և 885 տրակտոր՝ իրենց գյուղգործիքներով, երկարաժամկետ վարձակալության և աճուրդ-վաճառքի միջոցով դրանք հատկացվել են

<sup>3</sup> Հիմք է ընդունվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական տեխնիկայի ռեգիստրի տվյալները

<sup>4</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2015թ. հունվարի 1-ի դրությամբ: Վիճակագրական տեղեկագիր: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. - էջ 4-9

<sup>5</sup> Հաշվարկների համար հիմք է ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները

հողօգտագործողներին: Դրամաշնորհներով ստացված գյուղատնտեսական տեխնիկայի հետ ներմուծվել են գյուղատնտեսական գործիքներ և ընդհանուր արժեքի 10 %-ի չափով անհրաժեշտ պահեստամասեր<sup>6</sup>:

Շատ դեպքերում մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով ագրոտեխնիկական կանոններով պահանջվող մի շարք գործընթացներ չեն կատարվում կամ կատարվում են ձեռքով՝ խիստ բարձրացնելով մշակության աշխատատարությունը և խախտելով աշխատանքների կատարման լավագույն ժամկետները:

Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածության հետևանքով մեծացել են նորոգումների և տեխնիկական սպասարկումների ծախսերը, որի հետևանքով բարձրանում են նաև ծառայությունների սակագները:

Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակայանի վերազինման հարցում առկա դժվարություններն առնչվում են տեխնիկական շահագործող սուբյեկտների, սպասարկումների կարիք ունեցող գյուղացիական տնտեսությունների ֆինանսական սուղ հնարավորությունների, ներմուծվող մեքենայացման միջոցների և պահեստամասերի բարձր գների և այլ պատճառների հետ:

Տնտեսությունների ֆինանսական ռեսուրսների սղության, տեխնիկական միջոցներով դրանց անհամաչափ ապահովվածության հետևանքով դաշտային մեքենայացված աշխատանքները հաճախ չեն կատարվում ագրոտեխնիկական կանոններին համապատասխան սահմանված ժամկետներում, և այդ աշխատանքները որակի առումով բարելավման անհրաժեշտություն ունեն:

Գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման բարելավումը պահանջում է տեխնիկաօգտագործման ձևերի կատարելագործման միջոցով մեքենայացված աշխատանքների արդյունավետության բարձրացում, մասնավորապես՝ Հայաստանի ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների բարեփոխումների համատեքստում գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկման բարելաումը պահանջում է բաժնետիրական հիմունքներով մասնագիտացված կենտրոնների ձևավորում, կոոպերացիայի խթանում և լիզինգային սկզբունքով գյուղատնտեսական տեխնիկայի ներկրումների ավելացում<sup>7</sup>:

<sup>6</sup> ՀՀ գյուղատնտեսության նախարարության տվյալներով

<sup>7</sup> Խաչատրյան Ա.Ց., Ավետիսյան Ս.Ս. Արտադրատեխնիկական սպասարկման կենտրոնների ստեղծումը որպես ագրարային շուկայի զարգացման կարևոր օղակ: Շուկայական տնտեսության զարգացման հիմնահարցերը ՀՀ ագրարային ոլորտում, Երևան, 1998.-էջ 9-10:



ՉՅ առևտրային բանկերի կողմից լիզինգային հիմունքներով գյուղտեխնիկա հատկացնելու գործարքները դեռևս չափազանց քիչ են:

Տեխնիկական ապահովվածության անհամաչափության պատճառով, ըստ տարածաշրջանների, ներկայումս տեխնիկական միջոցները վարի, ցանքի և բերքահավաքի ժամանակ տեղափոխվում են լեռնային և նախալեռնային գոտիներից ցածրադիր գոտիներ և, այնուհետև՝ հակառակ ուղղությամբ: Նշվածի հետ մեկտեղ դեռևս բավարար չափով չլուծում չեն ստացել խաղողի, կարտոֆիլի, բանջարեղենի և կերային մշակաբույսերի մշակության ու բերքահավաքի մեքենայացման խնդիրները:

Գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների գերակշռող մասի փոքր չափերի հողաբաժինների հետևանքով անհրաժեշտություն է դառնում 30-50 ձիաուժ հզորության տրակտորների, օժանդակ (կցագործիքների), մասնավորապես՝ հերկող, ցանող, սրսկող, հնձող և այլ մեքենաների ու սարքավորումների ներմուծումը կամ հանրապետությունում դրանց արտադրության (հավաքման) կազմակերպումը:

Գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերի կողմից գյուղատնտեսության մեքենայացման ծառայությունները կանոնակարգված չեն: Դրանք կատարվում են փոխադարձ պայմանավորվածությամբ, աշխատանքների կատարման ժամանակահատվածում չեն գործում պայմանագրային հարաբերությունները: Դա երբեմն հանգեցնում է տեխնիկայի սեփականատերերի կողմից մեքենայացված աշխատանքների վարձավճարների (սակագների) չափերի միակողմանի թելադրման<sup>8</sup>:

Գյուղատնտեսության մեքենաօգտագործման բնագավառում առկա են մի շարք խնդիրներ, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են՝

- գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարողների տեխնիկական միջոցների ապահովվածության ցածր մակարդակը, հողօգտագործման ներկայիս չափերի համար մեքենայական ագրեգատների ցածր արտադրողականությունը և արդյունավետությունը,

---

<sup>8</sup> Ծայնեցյան Յ.Ս. Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսության պայմաններում: Երևան: Հեղինակային հրատարակություն, 2005թ.- էջ 52-53

- տեխնիկական միջոցների ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր մակարդակը, տեխնիկական սպասարկումների և նորոգումների իրականացման պահանջների անտեսումը,
- տեխնիկական միջոցներով սպասարկումներ կատարող տնտեսավարողների միջև անհավասար մրցակցությունը, տեխնիկաօգտագործման արդյունավետ ձևերի կիրառման բացակայությունը, տեխնիկայի թերբեռնվածությունը և ծանրաբեռնվածության անհավասարությունը,
- տեխնիկական միջոցների ապահովման տարբեր դրամաշնորհային ծրագրերի և լիզինգային մեխանիզմների կիրառման դանդաղ ընթացքը,
- առկա տեխնիկայի առավել արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառման, մասնավորապես՝ բնագավառում կոոպերացման սկզբունքների և այլ արդյունավետ կազմակերպման ձևերի ներդրման ձգձգումը,
- նորոգումների և տեխնիկական սպասարկումների բնագավառում համայնքների մակարդակով աշխատանքների կազմակերպման արդյունավետ մեխանիզմների կիրառման բացակայությունը:

Ագրարային ոլորտում շուկայական հարաբերությունների ներդրումը արմատական փոփոխություններ բերեց նաև գյուղատնտեսության նյութատեխնիկական ապահովման բնագավառում: Նյութատեխնիկական ապահովման կենտրոնացված պետական համակարգին փոխարինեց մասնավոր տնտեսավարողների և բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացվող նյութատեխնիկական ապահովումը, որը դեռևս կանոնակարգված չէ:

Տեխնիկական միջոցների համալրումը և նորացումը իրականացվում են չափազանց դանդաղ տեմպերով, ինչը խոչընդոտվում է մի շարք գործոններով. մասնավորապես՝

- գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության պատճառով սեփական միջոցներով տեխնիկական միջոցների ձեռք բերման անհնարինությունը,
- դրամաշնորհային ծրագրերով հանրապետություն ներկրվող տեխնիկական միջոցների փոքր խմբաքանակները (տարեկան 50-100 միավոր),
- տեխնիկական միջոցների բարձր գները, գյուղատնտեսական մթերքների գների աճի նկատմամբ արդյունաբերական ապրանքների գների առաջանցիկ աճը,

- տեխնիկական միջոցների մատակարարման մատչելի մեխանիզմների (լիզինգ, ապրանքային վարկեր) կիրառման գրեթե բացակայությունը:

Գյուղատնտեսական տեխնիկայի պահեստամասերի, նավթամթերքի և այլ նյութական ռեսուրսների մատակարարումը կրում է չհամակարգված բնույթ: Այս գործընթացը հիմնականում իրականացվում է մասնավոր տնտեսավարողների կողմից: Բնագավառում գրեթե չեն գործում գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների միջև պայմանագրային հարաբերությունները, այդ ռեսուրսները ձեռք են բերվում առքուվաճառքի ժամանակ ձևավորվող գներով, իսկ այդ պարագայում մատակարարները սովորաբար հանդես են գալիս գները թելադրողների դերում:

Վերջին տասնամյակում, պայմանավորված գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների ֆինանսական սուղ հնարավորությունների և փոխադրումների դժվարություններով, պարարտանյութերի օգտագործումը զգալիորեն նվազել է: Հանրապետության գյուղատնտեսության տարեկան պահանջարկը ազոտական պարարտանյութերի նկատմամբ գնահատվում է ավելի քան 60 - 70 հազ. տոննա, սակայն ներկայումս բավարարվում է պահանջարկի միայն 50 տոկոսը: Կալիումական և ֆոսֆորական պարարտանյութեր գրեթե չեն ներմուծվում: Իսկ դա իր բացասական ներգործությունն է ունեցել հողի բերրիության և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության վրա:

Պարարտանյութերի, ինչպես նաև թունաքիմիկատների ներմուծումը հանրապետությունում իրականացվում է մասնավոր հատվածի տարբեր ընկերությունների միջոցով: 2012-2014թթ. հանրապետությունում իրականացվել է ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի գների սուբսիդավորման ծրագիր:

Նշվածի հետ մեկտեղ պարարտանյութերի օգտագործման ծավալները չեն համապատասխանում ագրոտեխնիկական պահանջներով սահմանված նորմերին: Ըստ ուսումնասիրության արդյունքների, պարարտանյութերի օգտագործումը տնտեսություններում նկատելիորեն բևեռացված է:

Պարարտանյութերը հող մտցնելու (ներմուծման) համար նախատեսված մեքենաները գտնվում են տեխնիկական պատրաստության ցածր մակարդակի վրա, որի հետևանքով զգալիորեն ցածր է դրանց օգտագործման արդյունավետությունը: Գյուղա-

ցիական տնտեսությունների հիմնական մասը պարարտանյութերը հող է մտցնում առանց համապատասխան մեքենաներ օգտագործելու:

Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությունը հիմնականում իրականացվում է ներմուծվող թունանյութերի միջոցով:

Բույսերի վնասատուների և առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարի որոշ միջոցառումներ իրականացվում են կենտրոնացված կարգով, ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, սակայն աշխատանքների ծավալը, կապված ընդգրկման գոտիների հետ, դեռևս բավարար չէ:

Արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառում ստեղծված վիճակը և ծառայած խնդիրները պահանջում են տվյալ բնագավառում համակողմանի գիտական ուսումնասիրությունների իրականացում:

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի խնդիրների որոշ ուսումնասիրություններ իրականացվել են տնտեսագետներ Ս.Գ. Ղազարյանի, Ս.Ս. Ավետիսյանի, Հ.Ս. Ծպնեցյանի, Վ.Գ. Գրիգորյանի կողմից, սակայն գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ոլորտի զարգացման տնտեսագիտական հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների կանխորոշման ուղղությամբ վերջին տարիներին համակողմանի ուսումնասիրություններ չեն իրականացվել:

Հանրապետության գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ոլորտի զարգացման տնտեսագիտական հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների առաջադրումը պահանջում է տվյալ և դրան առնչվող բնագավառներում ստեղծված իրավիճակի համակողմանի ուսումնասիրություն և, վերջինիս արդյունքներից ելնելով, հիմնավորված լուծումների առաջադրում: Նշվածն էլ պայմանավորում է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, հրատապությունը և բխում է հանրապետության գյուղատնտեսության զարգացման ու երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունից:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրվող բնագավառին առնչվող մասնագիտական գրականության, տեղեկատվության, հայեցակարգային և ծրագրային փաստաթղթերի ուսումնասիրության և վերլուծության, ինչպես նաև սեփական դիտարկումների արդյունքում բացահայտել գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ոլորտի

զարգացման տնտեսագիտական հիմնախնդիրները և առաջարկել դրանց լուծման հիմնական ուղղությունները: Հետազոտության հիմնական խնդիրները բխում են առաջադրված նպատակից և հիմնականում հետևյալն են.

- ուսումնասիրել գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների տեսական հարցերը, ՀՀ գյուղատնտեսության առանձնահատկությունները և արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող գործոնները,
- ուսումնասիրել ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների առանձնահատկությունները և վիճակը,
- բացահայտել ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացման հիմնախնդիրները,
- ուսումնասիրել գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի միջազգային փորձը և բացահայտել դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում,
- բացահայտել գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի սարքինության մակարդակի վրա տարբեր գործոնների քանակական բնութագիրը,
- առաջարկել գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների սակագների հաշվարկման մեթոդական նոր մոտեցումներ,
- մշակել գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները, գնահատել առաջարկվող միջոցառումների արդյունավետությունը:

**Հետազոտության օբյեկտն ու առարկան:** Հետազոտության օբյեկտներն են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ճյուղը, մասնավորապես գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ոլորտը, արտադրատեխնիկական սպասարկումների գործառույթ իրականացնող կազմակերպական միավորները, տեխնիկա օգտագործողները, գյուղատնտեսությունում տնտեսավարողների և արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնողների հարաբերությունները, իսկ առարկան՝ հանրապետության գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների ոլորտի զարգացման տնտեսագիտական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:

**Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը:**

Ատենախոսության ուսումնասիրության տեսական հիմք են հանդիսացել ժամանակակից տնտեսագետների գիտական աշխատությունները, հրապարակումները, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների տարբեր կողմերը կարգավորող իրավա-օրենսդրական փաստաթղթերը: Ատենախոսության տեղեկատվական հիմքը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, Հայաստանում գործող մի շարք կազմակերպությունների կողմից հրատարակված վերլուծական-տեղեկատվական նյութերն են:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական և տրամաբանական, համեմատական ու գործոնային վերլուծությունների, ծրագրանպատակային մոտեցումների, գրաֆիկական գնահատումների, հարցում-հետազոտությունների և այլ մեթոդներ:

**Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը:** Հետազոտության հիմնական նորույթը կայանում է նրանում, որ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ոլորտի զարգացման տնտեսագիտական հիմնախնդիրների բացահայտման հիման վրա կանխորոշվել են դրանց լուծման հիմնական ուղղությունները: Հիմնական գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտության շրջանակներում առաջադրված խնդիրներով, մասնավորապես.

- բացահայտվել է գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող գործոնները, ՀՀ արտադրատեխնիկական սպասարկումների առանձնահատկությունները և զարգացման հիմնախնդիրները,
- բացահայտվել է գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի վիճակը բնութագրող ցուցանիշների վրա տարբեր գործոնների քանակական բնութագիրը, առաջարկվել է գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների սակագների հաշվարկման մեթոդական մոտեցումներ,
- մշակվել է գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները, գնահատվել է առաջարկվող միջոցառումների արդյունավետությունը:

**Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:** Ատենախոսության արդյունքներն ունեն տեսական և կիրառական նշանակություն, մասնավորապես այնպիսի հիմնախնդիրների լուծման գործում, որոնք վերաբերում են գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ոլորտի հիմնախնդիրների

բացահայտմանն և դրանց լուծմանը: Ատենախոսությունում տրվել են նաև գիտագործնական նշանակություն ունեցող առաջարկություններ ուղղված գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ոլորտի զարգացմանը: Տրված առաջարկությունները կարող են օգտակար լինել ագրարային ոլորտի նշված բնագավառում քաղաքականություն մշակող և իրականացվող պետական ու տարածքային կառավարման մարմինների, ինչպես նաև ատենախոսության թեմային առնչվող՝ գիտահետազոտական ուսումնասիրությունների և ուսումնական նպատակների համար:

**Չեռագոտական արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի կառավարման, Ագրոբիզնեսի կազմակերպման, Ագրոարդյունաբերական համալիրի էկոնոմիկայի ամբիոնների համատեղ նիստում:

Ատենախոսության հիմնական արդյունքերը հրապարակվել են չորս գիտական հոդվածներում:

**Ատենախոսության ծավալը և կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության ծավալը կազմում է 153 տպագրական էջ՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

**ԳԼՈՒԽ 1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱ-  
ԳԱՎԱՌԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**1.1. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների տեսա-  
կան հարցերը**

Գյուղատնտեսության մեջ տնտեսավարման բոլոր ձևերում արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ են բավարար քանակությամբ արտադրության միջոցներ: Վերջիններս, անկախ նրանից, թե ինչպիսի արտադրական գործընթացների են մասնակցում, բաղկացած են երկու մասից, այն է՝ աշխատանքի միջոցներից և աշխատանքի առարկաներից: Դրանք արտադրական միավորների նյութատեխնիկական բազայի առարկայական հիմքն են: Արտադրության միջոցներն ունեն ինչպես բնահրային (առարկայական), նույնպես և արժեքային (դրամական) արտահայտություն:

Գյուղատնտեսության մեջ արտադրության միջոցները (ֆոնդերը)՝ կախված ծառայության ժամկետներից և արտադրության գործընթացներին մասնակցության բնույթից՝ ստորաբաժանվում են հիմնական և շրջանառու միջոցների:

Հիմնական ֆոնդերը (մեքենաներ, սարքավորումներ, շենքեր և այլն) շրջանառու ֆոնդերից տարբերվում են արտադրության մեջ ունեցած դերով ու նշանակությամբ, վերարտադրության բնույթով և նոր արժեքի ստեղծմանը մասնակցելու եղանակով: Հիմնական ֆոնդերն առանց բնական տեսքը փոխելու մասնակցում են կրկնվող արտադրական գործընթացներին և իրենց արժեքը փոխանցում են արտադրանքին կամ կատարված աշխատանքներին մաս առ մաս, աստիճանաբար, ֆիզիկական մաշվածքին համապատասխան<sup>9</sup>:

Շրջանառու ֆոնդերը (էներգակիրներ, կերեր, սերմեր, պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլն) ամբողջությամբ օգտագործվում և սպառվում են արտադրության մեկ ցիկլում, փոխում են իրենց բնական տեսքը և իրենց արժեքը միանգամից, ամբողջությամբ փոխանցում են նոր ստեղծված արտադրանքին<sup>10</sup>:

<sup>9</sup> Գ. Դավթյան, Լ. Մարգարյան, Վ. Աբգարյան և ուրիշներ. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ ագրոպարենային ոլորտի տնտեսագիտական, ագրոնոմիական ու ճարտարագիտական մասնագիտությունների ուսանողների համար: Երևան: Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004.-էջ 92

<sup>10</sup> Գ. Դավթյան, Լ. Մարգարյան, Վ. Աբգարյան և ուրիշներ. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ ագրոպարենային ոլորտի տնտեսագիտական, ագրոնոմիական ու



Չհիմնական և շրջանառու ֆոնդերի (ամբողջությամբ վերցրած) և նրանց առանձին առարկայական տարրերի միջև պետք է սահմանել որոշակի հիմնավորված հարաբերակցություն: Գյուղատնտեսական ձեռնարկություններում, կախված մասնագիտացումից և այլ գործոններից, այդ հարաբերակցությունը տատանվում է 60-70% և 35-45 % սահմաններում<sup>11</sup>:

Չհիմնական և շրջանառու ֆոնդերի, չափերի և կառուցվածքային մասերի համամասնության պահպանումն արտադրության ռացիոնալ կազմակերպման կարևոր պայմաններից մեկն է:

Գյուղատնտեսության ճյուղի, մասնավորապես գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների բնականոն գործունեության անհրաժեշտ պայմանն արդյունաբերության կողմից արտադրվող և մատակարարվող ռեսուրսների ապահովումն է:

Նշված ռեսուրսները դասակարգվում են ըստ հետևյալ հիմնական ապրանքային խմբերի՝

- ավտոմեքենաներ և դրանց կցասայլեր,
- տրակտորներ և դրանց կցասայլեր,
- հողափոր և ճանապարհաշինարարական մեքենաներ,
- գյուղատնտեսական մեքենաներ և անասնապահական սարքավորումներ,
- էլեկտրասարքավորումներ և նյութեր,
- գործիքներ,
- մետաղական շինվածքներ,
- շինանյութ և անտառանյութ,
- ռետինատեխնիկական շինվածքներ,
- նավթամթերքներ և այլ տիպի վառելիք,
- արտադրական նշանակության տնտեսական և այլ ապրանքներ,
- տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների, ավտոմեքենաների, հողափոր մեքենաների, ստացիոնար շարժիչների պահուստամասեր և այլն:

---

Ճարտարագիտական մասնագիտությունների ուսանողների համար: Երևան: Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004թ.-էջ 92

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 95

Արտադրության այն միջոցները, որոնք ունեն առավել կարևոր նշանակություն, տարանջատվում են նշված խմբերից առանձին անվանացանկով<sup>12</sup>:

Հիմնական միջոցների առավել ակտիվ մասը տեխնիկան է: Տնտեսագիտության տեսությունը այն դիտում է որպես առարկայացված ուժ, ձեռքի աշխատանքի փոխարինում մեքենայականով, թողարկվող արտադրանքի էժանացման, հասարակական աշխատանքի ծախսերի տնտեսման միջոց և այլն<sup>13</sup>:

Գյուղատնտեսության ինտենսիվացումը խիստ կերպով պայմանավորված է ագրոնոմիական, քիմիական, տեխնիկական, տնտեսական և այլ հարակից գիտությունների արդյունքների ներդրման հետ: Այդ խնդրում կարևոր դեր ունի արտադրատեխնիկական սպասարկումները, մասնավորապես արտադրության աշխատատար գործընթացների համալիր մեքենայացումը, էլեկտրաֆիկացումը և ավտոմատացումը:

Աշխատանքի արտադրողականության բարձրացման առաջին գլխավոր պայմանը հանդիսանում է տեխնիկայով գյուղատնտեսության հագեցվածության տեմպի արագացումն ու մակարդակի բարձրացումը: Հաշվարկները ցույց են տվել, որ աշխատանքի արտադրողականության ընդհանուր աճի 50%-ն ապահովվում է մեքենայացման հաշվին:

Մեքենայացումը դա ձեռքի աշխատանքի մասնակի, համալիր մեքենայացման և մեքենաների ավտոմատացման համակարգով փոխարինման գործընթաց է: Մասնակի դեպքում մեքենայացվում են արտադրության միայն առանձին գործընթացները, համալիրի դեպքում՝ ամբողջը, իսկ ավտոմատացված համակարգի դեպքում արտադրությունն իրականացվում է ավտոմատների օգնությամբ՝ մարդու հսկողության ներքո<sup>14</sup>:

Մեքենայացման մակարդակը որոշվում է մեխանիկական շարժիչներով իրականացվող մեքենայացված աշխատանքների ծավալի ( $\bar{D}_v$ ) և ընդհանուր աշխատանքների ( $\bar{D}_r$ ) հարաբերակցությամբ<sup>15</sup>:

<sup>12</sup> Шакиров Д. К., Удалов В. А., Грядов С. И. и др., Под. ред. Ф. К. Шакирова, Организация сельскохозяйственного производства, М.: Колос, 2000.-с. 449

<sup>13</sup> Գ. Դավթյան, Լ. Մարգարյան, Վ. Աբգարյան և ուրիշներ. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում: ՈՒՏՈՒՄՆԱԿԱՆ ձեռնարկ ագրոպարենային ոլորտի տնտեսագիտական, ագրոնոմիական ու ճարտարագիտական մասնագիտությունների ուսանողների համար: Երևան: Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004թ.-էջ 101

<sup>14</sup> Հակոբյան Լ.Լ., Ճեպեճյան Շ.Ա. Գյուղատնտեսության էկոնոմիկա: ՈՒՏՈՒՄՆԱԿԱՆ ձեռնարկ ԲՈՒՀ-երի համար: Երևան: ՀՊԱՀ, 2012թ.-էջ 79-80

<sup>15</sup> Экономика сельского хозяйства: Учебник для студентов высших учебных заведений/ Н.Я. Коваленко, Ю.И. Агрибов, Н.А. Серова и др.-М.: ЮРКНИГА, 2004.- с.132-133

$$U = \frac{\bar{O}_d}{\bar{O}_p} \cdot 100\% \quad (1.1.1)$$

Տվյալ դեպքում տարասեռ աշխատանքների (վար, ցանք, կուլտիվացիա, սրսկում և այլն) համար մեքենայացված աշխատանքները վեր են ածվում համապատասխան էտալոնային հեկտարների:

Անասնապահությունում առանձին արտադրական գործընթացների համար մեքենայացման մակարդակը հաշվարկվում է մեքենաների օգնությամբ սպասարկվող գլխաքանակի ( $Q_d$ ) և ընդհանուր գլխաքանակի ( $Q_p$ ) հարաբերությամբ.

$$U_{\text{անաս.}} = \frac{Q_d}{Q_p} \cdot 100\% \quad (1.1.2)$$

Համալիր մեքենայացման ենթարկել որևէ կուլտուրայի մշակումը նշանակում է մեքենաների օգնությամբ կատարել ագրոհամալիրի տեխնոլոգիական բոլոր գործողությունները և առավելագույն թեթևացնել գյուղատնտեսությունում տնտեսավարողների ձեռքի աշխատանքը:

Մեքենաների ներդրման շնորհիվ բարձրանում է արտադրողականությունը: Հաճախ մեքենան փոխարինում է 150-200 մարդու, ինչպես դա տեղի է ունենում կոմբայններով հացահատիկի բերքահավաքի ժամանակ: Մեքենաների կիրառման շնորհիվ բարձրանում է մթերքների որակը:

Վարը, փոցխումը, ցանքը և այլ գործընթացներ մեքենաներով կատարում են ավելի արագ և բարձր որակով, քան ձեռքով: Աշխատանքը կատարվում է կարճ ժամանակամիջոցում, հետևաբար նշված բոլոր հանգամանքները դրական են ազդում բերքատվության բարձրացման և արտադրության արդյունավետության վրա:

Մեքենաների լայն կիրառումը գյուղատնտեսության մեջ ամենամեծ ազդակն է վերակառուցելու ոչ միայն տնտեսությունների արտադրության կազմակերպումը, այլ նաև վերափոխում է մարդու վերաբերմունքը դեպի արտադրությունը:

Գյուղատնտեսական տեխնիկան բարձր արտադրողականությամբ օգտագործելու համար կիրառում են գյուղատնտեսական ագրեգատներ, որոնք կոմպլեկտավորվում են տրակտորներով և գյուղատնտեսական մեքենաներով:

Գյուղատնտեսության մեջ մեքենաների կիրառումը բարձրացնում է տնտեսությանների ինտենսիվացման մակարդակը, կրճատում է ձեռքի աշխատանքը գյուղատնտեսական կուլտուրաների մշակման և բերքահավաքի տեխնոլոգիական գործընթացների վրա, աշխատանքների առավել որակով և կարճ ժամանակահատվածում իրականացումը բարձրացնում է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը:

Մեքենայական ագրեգատը դա էներգետիկ աղբյուրների և աշխատանքային մեքենաների ռացիոնալ միացությունն է, որը տալիս է մեխանիկական օգտակար աշխատանք:

Մեքենայական ագրեգատները դասակարգվում են հետևյալ ձևով`

- **Ըստ աշխատանքի բնույթի և մշանակության** լինում են դաշտային` շարժական վարի, նախացանքային մշակումների, պարարտանյութերի մատուցման, ցանքի միջշարային մշակումների, բերքահավաքի և այ գործընթացների իրականացման համար:
- **Ստացիոնար** լինում են կալսման, խոտի մամլման, դեզ դնելու, բեռներ բարձելու և բեռնաթափելու, հատիկային և հացազգի կուլտուրաների սերմերի զտման և տեսակավորման, մաքրման, չորացման և այլ աշխատանքների համար:
- **Բեռների տեղափոխման ագրեգատներ**, որոնք տեղափոխում են սերմեր, պարարտանյութեր, բերք, անասնակեր, վառելանյութ, պահեստամասեր, մեքենաներ և շինանյութեր:

Գյուղատնտեսական մեքենատրակտորային ագրեգատներին ներկայացվում են մի շարք պահանջներ, որպեսզի տեխնոլոգիական գործընթացները կատարվեն ագրոտեխնիկական պահանջների սահմաններում, բարձր որակով կատարեն վարը, փոցխումը, կուլտիվացիան, հողի փխրեցումը, պարարտացումը, ցանքը, միջշարքային մշակումները, բերքահավաքը և այլն, պահպանվեն հողի հիմնական և մակերեսային մշակման խորությունները, որակը, պարարտանյութերի մատուցման և ցանքի նորմաները, հողի տակ սերմերի և պարարտանյութերի ծածկումը, բերքահավաքը կատարվի առանց կորուստների և այլն: Մեքենատրակտորային ագրեգատները պետք է լրիվ կերպով օգտագործեն իրենց հզորությունը և քարշի ուժը` օգտակար աշխատանքներ կատարելու:

րելու, արտադրողականությունը բարձրացնելու և շահագործական ծախսերը նվազագույնի հասցնելու համար:

Մեքենատարակտորային ագրեգատների շահագործման հիմնական ցուցանիշներն են՝ արտադրողականությունը, վառելանյութի ծախսը, աշխատատարությունը և ուղղակի շահագործման ծախսերը:

Դաշտային շարժական աշխատանքներ՝ վար, փոցխում, կուլտիվացիա, ցանք, հունձ, բերքահավաք և այլ օպերացիաներ կատարելիս մեքենատարակտորային ագրեգատների արտադրողականությունը չափվում է հա/ժամ, հա/հերթ., հա/օր և հա/սեզոն միավորներով: Ստացիոնար աշխատանքների ժամանակ արտադրողականությունը չափվում է տ/ժամ, տ/հերթ., տ/օր չափողականության միավորներով: Գյուղատնտեսական բեռների փոխադրամիջոցների արտադրողականությունը չափվում է հետևյալ միավորներով տ.կմ/հերթ., տ.կմ/օր, տ.կմ/սեզոն և այլն:

Արտադրողականությունը լինում է տեսական, առանց կորուստների և փաստացի՝ կորուստների հաշվառումով:

Տեսական արտադրողականությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_t = \frac{B \cdot V_{\text{տ}} \cdot 10000}{10000} = 0.1 \cdot B \cdot V_{\text{տ}} \text{ հա/ժ (արագությունը տրված է կմ/ժամ), (1.1.3)}$$

որտեղ՝  $B$ -ն՝ ագրեգատի ընդգրկյալ լայնությունն է, մ,

$V_{\text{տ}}$ -ն՝ ագրեգատի շարժման տեսական արագությունը:

Ջերթափոխային արտադրողականությունն առանց կորուստների.

$$W_h = 0.1 \cdot B \cdot V_{\text{տ}} \cdot T_h, \text{ հա/հերթ.}, \quad (1.1.4)$$

որտեղ՝  $T_h$ -ն՝ հերթափոխի ժամակահատվածն է, ժամ:

Աշխատանքի ընթացքում փոփոխության է ենթարկվում ագրեգատի ընդգրկման լայնությունը (վերածածկի չմշակված տեղերը բաց թողնելու և ոչ ճիշտ ագրեգատավորման հետևանքով): Աշխատանքային ընդգրկման լայնությունը որոշվում է հետևյալ ձևով՝

$$B_p = \beta \cdot B, \text{ մ} \quad (1.1.5) \quad \beta = \frac{B_p}{B}, \quad (1.1.6)$$

որտեղ՝  $\beta$ -ն՝ ընդգրկման լայնության օգտագործման գործակիցն է ( $\beta = 0.95 - 1.05$ ):

Ագրեգատի շարժման տեսական արագությունը նույնպես ենթարկվում է փոփոխության:

Աշխատանքային արագությունը որոշվում է՝

$$V_p = V_{un} \cdot \varepsilon, \text{ կմ/ժամ,} \quad (1.1.7)$$

որտեղ՝  $\varepsilon$ -ն՝ արագության օգտագործման գործակիցն է.

$$\varepsilon = 1 - \frac{\delta}{100}, \quad (1.1.8)$$

որտեղ՝  $\delta$ -ն՝ տանող օրգանների տեղապտույտի գործակիցն է, %-ով:

Չերթափոխի մաքուր աշխատաժամանակը կլինի՝

$$T_p = T_h \cdot \tau, \text{ ժամ} \quad (1.1.9)$$

որտեղ՝  $\tau = \frac{T_p}{T_h}$  ժամանակի օգտագործման գործակիցն է:

Ագրեգատների փաստացի տեխնիկական արտադրողականությունը կլինի.

$$W_\sigma = 0.1 \cdot B_p \cdot V_p \cdot \tau, \text{ հա/ժամ} \quad (1.1.10)$$

$$W_h = 0.1 \cdot B_p \cdot V_p \cdot \tau \cdot T_h, \text{ հա/հերթ,} \quad (1.1.11)$$

որտեղ՝  $T_h$ -ն՝ հերթափոխի ժամերի թիվն է:

Չերթափոխի ժամանակի հաշվեկշիռը հետևյալն է՝

$$T_h = T_p + t_{uy} + t_{un.u.} + t_{un.tu.} + t_{yt.g.}, \text{ ժամ,} \quad (1.1.12)$$

որտեղ՝  $T_h$ -ն՝ հերթափոխի ժամերի քանակն է, որն ընդունվում է 7, 8 և 10 ժամ,

$t_p$ -ն՝ հերթափոխության բանվորական մաքուր ժամանակը, ժամ,

$t_{uy}$ -ն՝ պարապ ընթացքների վրա ծախսված ժամանակը,

$t_{un.u.}$ -ն՝ ագրեգատների տեխնոլոգիական սպասարկման ժամանակը,

$t_{un.tu.}$ -ն՝ հերթափոխի ընթացքում ագրեգատի տեխնիկական վիճակի ստուգման և խնամքի վրա ծախսվող ժամանակը,

$t_{yt.g.}$ -ն՝ ագրեգատը սպասարկող անձնակազմի կենցաղային պահանջների վրա ծախսվող ժամանակը:

Մեքենատրակտորային ագրեգատների արտադրողականության փոփոխության վրա մեծ ազդեցություն է գործում հետևյալ պարամետրերի՝  $B_p, V_p$  և  $T_p$  փոփոխությունները:

Մեքենայացված աշխատանքների ինքնարժեքը որոշվում է հետևյալ բանա-ձևով՝

$$C = \frac{S_w + S_g + S_{in} \cdot n + S_{cl} + S_{wz} + S_{սյուբ.}}{W_{\phi}} = \frac{S_{\phi}}{W_{\phi}} \text{ դրամ/հա} \quad (1.1.13)$$

որտեղ  $S_{\phi}$ -ն՝ ընդհանուր շահագործական դրամային ծախսումներն են, որը բաղկացած է անորտիզացիան հատկացումներից ( $S_w$ ), հիմնական և ընթացիկ նորոգումներից ( $S_g$ ), տեխնիկական սպասարկումներից ( $S_{in}$ ), վառելանյութերի քայուղերի ( $S_{cl}$ ), աշխատավարձի ( $S_{wz}$ ), պահպանման և օժանդակ նյութերի ( $S_{սյուբ.}$ ) վրա կատարվող ծախսումներից, դրամ/ժամ:

Գյուղատնտեսական մեքենաներին կամ նրա մեջ մտնող առանձին մեքենաներին ներկայացվում են մի շարք պահանջներ, որոնք սովորաբար տարանջատվում են բնական, ագրոտեխնիկական, շահագործման, տեխնիկաէներգետիկական պահանջների: Նշված պահանջների համառոտ բնութագիրը հետևյալն է՝

**Բնական պահանջներ:** Գյուղատնտեսական այս կամ այն մեքենայի ընտրությունը պայմանավորող բնական գործոնները, առաջին հերթին, պետք է հաշվի առնեն հողի մեխանիկական կազմը, խոնավությունը, մշակվող դաշտերի և առանձին տեղամասերի չափերը, հողահատվածի կոնֆիգուրացիան, ռելիեֆը և այլ առանձնահատկություններ:

Բնակլիմայական գործոնների ազդեցությունը բավականին ճշգրտությամբ կարելի է ի հայտ բերել՝ տնտեսությունները խմբավորելով ըստ բնակլիմայական պայմանների և մեքենաօգտագործման հարմարությունների: Որպես խմբավորման ընդհանրացնող չափանիշ ամենից նպատակահարմար է ընդունել ցանքատարածությունների տեսակարար կշիռը ընդհանուր հողատարածությունների մեջ: Այդ չափանիշով կարելի է պատկերացում կազմել հողատարածքների կտրտվածության և մասնատվածության, դաշտերի և առանձին տեղամասերի չափերի, հողային և այլ առանձնահատկությունների մասին<sup>16</sup>:

Նշված խմբավորումները կարող են հիմք ծառայել մեքենաօգտագործման հետ կապված ցուցանիշների գնահատման համար:

<sup>16</sup> Գ. Դավթյան, Լ. Մարգարյան, Վ. Աբգարյան և ուրիշներ. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ ագրոպարենային ոլորտի տնտեսագիտական, ագրոնոմիական ու ճարտարագիտական մասնագիտությունների ուսանողների համար: Երևան: Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004թ.-էջ 102

**Ազրոտեխնիկական պահանջները** հողի մշակման մեքենաների համար, այն է՝ վարի խորությունը, հողաշերտի շրջվելը, հողի տեղաշարժը և միախառնվելը, մուխտերի կտրումը, հանքային և օրգանական պարարտանյութերի սնուցման խորությունը և այլն: Ցանքի մեքենաների համար ներկայացվող պահանջներն են՝ շարքերում և բներում սերմերի ցանքի խորությունը և որակը, միջշարային լայնության, բնագոյացման ճշտությունը, ցանքի նորմերի պահպանումը և այլն:

**Շահագործման պահանջներ:** Նշվածին վերաբերում են՝ մեքենայի աշխատանքի անընդհատությունը, արտադրողականության բարձրացումը, սպասարկող անձնակազմի թվի կրճատումը, մեքենաների մանկրականությունը, աշխատանքի անվտանգությունը, հարմարությունը, օժանդակ նյութերի ծախսի կրճատումը, առանձին դետալների ունիֆիկացիան, մեքենաների հարմարեցումը տեղից տեղ փոխադրելուն և այլն:

Առավել կարևոր ենք համարում **տնտեսական արդյունավետության ապահովման պահանջները:** Տնտեսական արդյունավետության պահանջների մեջ են սինթեզվում բոլոր վերը նշված պահանջները: Տնտեսական հիմնական պահանջներն են՝ աշխատանքի արտադրողականության բարձրացումը և արտադրանքի ինքնարժեքի իջեցումը:

Հայաստանի համար, որտեղ բացարձակ գերակշռող են փոքր գյուղացիական տնտեսությունները, կարևոր նշանակություն է ստանում առանձին մեքենաների համակարգի մշակումը: Վերջինս պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին, որոնք հիմնականում հետևյալն են՝

- հարմարվածությունը արտադրության փոքր չափերին,
- լինի ունիվերսալ,
- ագրեգատները սպասարկվեն մարդկանց նվազագույն քանակով,
- ունենա բարձր դիմացկանություն, տեխնիկական սպասարկումները լինեն ոչ բարդ և քիչ աշխատատար:

Էներգետիկ ռեսուրսները հանդիսանում են գյուղատնտեսության նյութական ռեսուրսների առավել ակտիվ մասը: Դրանք են մեխանիկական, էլեկտրական շարժիչները և էլեկտրասարքավորումները, ինչպես նաև բանող անասունները՝ վերահաշվարկված մեխանիկական ուժով (ծիաուժերով): Էներգետիկ ռեսուրսների կառուցվածքում բարձր տեսակարար կշիռ ունեն տրակտորների, կոմբայնների և ավտոմեքենաների շարժիչների հզորությունները. տրակտորային շարժիչներինը՝ մոտ 35, ավտոմե-



քենաներինը՝ 29, կոմբայններինը՝ 12, իսկ էլեկտրաշարժիչներինն ու էլեկտրասարքավորումներինը՝ մոտ 23 %<sup>17</sup>:

Գյուղատնտեսության մեջ էներգետիկ ռեսուրսներով ապահովվածության հիմնական ցուցանիշներն են՝ էներգոապահովվածությունն ու էներգազինվածությունը:

**Էներգաապահովվածություն** ( $E_w$ ), որը ցույց է տալիս 1 հեկտար ցանովի (մշակովի) տարածության ( $Հ$ ) հաշվով էներգետիկ հզորությունը ( $E_h$ ): Այն չափվում է ձիաուժերով.

$$E_w = \frac{E_h}{Հ} \quad (1.1.14)$$

որտեղ՝  $E_h$  - էներգետիկ հզորությունն է. ձիաուժ,

$Հ$ -ն ցանքատարածությունը, հա:

Էներգազինվածությունը ցույց է տալիս մեկ աշխատողի հաշվով տնտեսության միջին տարեկան էներգետիկ հզորությունների քանակը:

$$E_q = \frac{E_h}{U_p} \quad (1.1.15)$$

որտեղ՝  $U_p$  -ն տնտեսության միջին տարեկան աշխատողների թիվն է, մարդ<sup>18</sup>:

Այս ցուցանիշները լայնորեն կիրառվում են գյուղատնտեսության ինտենսիվացման գործընթացի բնութագրման ժամանակ: Էներգաապահովվածության և էներգազինվածության մակարդակի բարձրացումը նպաստում է ճյուղում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Գյուղատնտեսության մեջ մեքենա-տրակտորային հավաքակայանի օգտագործման արդյունավետությունը բնորոշվում է բնեղեն և արժեքային ցուցանիշներով:

Բնեղեն ցուցանիշներն են՝

- տրակտորների և կոմբայնների սեզոնային և տարեկան արտադրանքը,
- ժամային, հերթափոխային և օրական արտադրանքը,
- աշխատած մեքենա-օրերի և հերթափոխերի քանակը տարվա ընթացքում,
- հերթափոխության գործակիցը:

<sup>17</sup> Экономика сельского хозяйства: Учебник для студентов высших учебных заведений/ Н.Я. Коваленко, Ю.И. Агрибов, Н.А. Серова и др.-М.: ЮРКНИГА, 2004.-с.131

<sup>18</sup> Հակոբյան Լ.Լ., Ճեպեճյան Շ.Ա. Գյուղատնտեսության էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի համար: Երևան: ՀՊԱՀ, 2012թ.-էջ 79

Արժեքային ցուցանիշներն են՝

- հերթափոխում արտադրված արտադրանքը, տոննա կամ դրամ,
- միավոր արտադրանքի կամ կատարված աշխատանքների համար շահագործական ծախսերը, դրամ
- պայմանական էտալոնային հեկտարի և ֆիզիկական հեկտարի ինքնարժեքը, դրամ
- բերովի ծախսերը 1 ց արտադրանքի և 1 հա-ի հաշվով, դրամ
- մեքենաների ձեռքբերման նպատակով կատարված կապիտալ ներդրումների փոխհատուցման ժամկետը, տարի:

Գյուղատնտեսության մեջ գործող և նոր մեքենաների համակարգերի համեմատության ժամանակ հաշվարկվում են հետևյալ ցուցանիշները՝

1. Մեքենայացման մակարդակը՝ բանաձև 1.1.1,
2. Նոր տեխնիկայի ներդրման արդյունավետության ցուցանիշներն են՝

ա) աշխատանքային ծախսումների իջեցումը ( $U_{\delta}$ )

$$U_{\delta} = \frac{U_{\delta q} - U_{\delta \text{ն}}}{U_{\delta q}} \cdot 100\% \quad (1.1.16)$$

որտեղ՝  $U_{\delta q}$  և  $U_{\delta \text{ն}}$ -ն՝ գործող և նոր տեխնիկայի օգտագործման պայմաններում աշխատանքային ծախսումներն են 1 հա-ի և 1 տոննայի հաշվով, մարդ-ժամ,

բ) շահագործական ծախսերի իջեցումը ( $C_{\delta}$ )

$$C_{\delta} = \frac{C_{\delta q} - C_{\delta \text{ն}}}{C_{\delta q}} \cdot 100\% \quad (1.1.17)$$

որտեղ՝  $C_{\delta q}$  և  $C_{\delta \text{ն}}$ -ն՝ գործող և նոր տեխնիկայի օգտագործման շահագործական ծախսերն են, դրամ,

գ) տեսակարար կապիտալ ներդրումների իջեցումը ( $H_{\text{կն}}$ )՝

$$H_{\text{կն}} = \frac{H_{\text{կն} q} - H_{\text{կն} \text{ն}}}{H_{\text{կն} q}} \cdot 100\% \quad (1.1.18)$$

որտեղ՝  $H_{\text{կն} q}$  և  $H_{\text{կն} \text{ն}}$ -ն՝ գործող և նոր տեխնիկայի օգտագործման ժամանակ կապիտալ ներդրումներն են, դրամ,

դ) լրացուցիչ կապիտալ ներդրումների փոխհատուցման ժամկետը ( $\Phi_{\rho}$ )

$$\Phi_{\sigma} = \frac{y_{\sigma} - y_{\sigma_0}}{r_{\sigma_0} - r_{\sigma}} \quad (1.1.19)$$

որտեղ՝  $y_{\sigma}$  և  $y_{\sigma_0}$ -ն՝ նոր և գործող տեխնիկայի պայմաններում կապիտալ ներդրումներն են, դրամ,

$r_{\sigma_0}$  և  $r_{\sigma}$ -ն՝ նոր և գործող տեխնիկայի պայմաններում կապիտալ ներդրումներն են, դրամ:

Կատարված ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին վերլուծել գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների տեսական դրույթները, մասնավորապես՝ տրվել են գյուղատնտեսության արտադրության միջոցների ստորաբաժանման մոտեցումները, գյուղատնտեսության մեջ օգտագործվող ռեսուրսների դասակարգումը, դիտարկվել է տեխնիկական հագեցվածությունը՝ որպես աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր գործոն:

Կարևորվել է արտադրատեխնիկական սպասարկումների դերը տնտեսությունների ինտենսիվացման մակարդակի, գյուղատնտեսական կուլտուրաների մշակության և բերքահավաքի տեխնոլոգիական գործընթացում ձեռքի աշխատանքի կրճատման, մշակաբույսերի բերքատվության և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացման գործում:

Տրվել է մեքենայական ագրեգատների բնորոշումը և դրանց դասակարգման ժամանակ կիրառվող մոտեցումները: Մեկնաբանվել է մեքենատարակտորային ագրեգատների շահագործման հիմնական ցուցանիշների՝ արտադրողականության, աշխատատարության և ուղղակի շահագործման ծախսերի էությունը:

Անդրադարձ է արվել գյուղատնտեսական մեքենաներին կամ նրա մեջ մտնող առանձին մեքենաներին ներկայացվող պահանջներին, որը տարանջատվել է բնական, ագրոտեխնիկական, շահագործման, տեխնիկաէներգետիկական պահանջների: Մեկնաբանվել են դրանց առանձնահատկությունները: Առավել կարևորվել են տնտեսական արդյունավետության ապահովման պահանջները: Տնտեսական արդյունավետության հիմնական պահանջներն են համարվել աշխատանքի արտադրողականության բարձրացումը և արտադրանքի ինքնարժեքի իջեցումը:

Անդրադարձ է արվել գյուղատնտեսության մեջ էներգետիկ ռեսուրսներով ապահովվածության հիմնական ցուցանիշների բնորոշմանը, ինչպես նաև գյուղա-

տնտեսության մեջ մեքենատրակտորային հավաքակայանի օգտագործման արդյունավետությունը բնորոշող ցուցանիշներին՝ վերջիններս տարանջատելով բնեղենի և արժեքայինի: Անդրադարձ է արվել նաև գյուղատնտեսության մեջ գործող և նոր մեքենաների համակարգերի համեմատության ժամանակ կիրառվող ցուցանիշների համակարգին:

Բաժնի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները ելակետ են հանդիսացել գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի հիմնախնդիրների բացահայտման համար:

## **1.2 ՀՀ գյուղատնտեսության առանձնահատկությունները և արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող գործոնները**

Գյուղատնտեսության մեջ գործում են նույն տնտեսական օրենքները, որոնք գոյություն ունեն նաև տնտեսության իրական հատվածի մյուս ճյուղերում: Սակայն, դրանք գյուղատնտեսությունում դրսևորվում են ոլորտին հատուկ առանձնահատկություններին համապատասխան, որոնք հիմնականում հետևյալն են:

Գյուղատնտեսությունը ներառում է մի շարք ճյուղեր, որոնք իրարից տարբերվում են բնական գործոններով, արտադրության տեխնոլոգիայով, անհրաժեշտ մեքենաների համակարգով, աշխատանքի և աշխատանքային գործընթացների կազմակերպմամբ:

Հողը գյուղատնտեսական արտադրության համար անփոխարինելի արտադրամիջոց է և, ի տարբերություն մնացած հիմնական արտադրամիջոցների, ոչ միայն չի մաշվում, այլ նաև ագրոտեխնիկական և կազմակերպատնտեսական միջոցառումների շնորհիվ բարձրացնում է իր բերրիությունը: Գյուղատնտեսության մեջ հողն ունի երկակի բնույթ. մի դեպքում արտադրության գլխավոր միջոց է, իսկ մյուս դեպքում՝ աշխատանքի գլխավոր առարկա:

Գյուղատնտեսությունում արտադրության միջոցներն են կենդանիները և բույսերը, որոնք զարգանում են կենսաբանական օրենքների հիման վրա: Հետևաբար, այստեղ վերարտադրության տնտեսական գործընթացը սերտորեն միահյուսվում է կենդանի օրգանիզմների զարգացման բնական գործընթացի հետ<sup>19</sup>:

<sup>19</sup> Экономика сельского хозяйства: Учебник для студентов высших учебных заведений/ Н.Я. Коваленко, Ю.И. Агрибов, Н.А. Серова и др.-М.: ЮРКНИГА, 2004.- с.10

Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունն իրականացվում է մեծ տարածությունների վրա և տեղաբաշխված է ըստ տարբեր կլիմայական գոտիների: Վերջնական արդյունքը մեծապես կախված է ոչ միայն օգտագործվող ռեսուրսների քանակից և որակից, այլ արտադրության կոնկրետ պայմաններից:

Գյուղատնտեսական արտադրության տարածքային տեղաբաշխումը կապված է ինչպես արտադրված արտադրանքի (հացահատիկ, կարտոֆիլ, բանջարեղեն, կաթ, միս և այլն) այնպես էլ տեխնիկայի և նյութատեխնիկական ռեսուրսների (վառելանյութ, քսայուղեր, հանքային պարարտանյութեր) մեծ ծավալի փոխադրումների հետ:

Գյուղատնտեսության կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ արտադրանքի ստեղծման գործընթացում արտադրված արտադրանքի մի մասն առանց շրջանառության ոլորտ մտնելու մասնակցում է արտադրության հետագա գործընթացներին: Որպես արտադրության միջոց օգտագործվում են սերմերը, տնկանյութերը (հացահատիկային մշակաբույսեր, կարտոֆիլ և այլն), կերատեսակները, ինչպես նաև անասնազխաքանակի զգալի մասը՝ հոտի պարզ և ընդլայնված վերարտադրության համար: Այդ ամենը պահանջում է լրացուցիչ նյութական ռեսուրսներ՝ արտադրական նշանակության շենքերի և օբյեկտների (անասնաշենքեր, կերի պահեստներ, սերմերի և տնկանյութի պահպանման պահեստարաններ և այլն) ձևով:

Գյուղատնտեսության կարևոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այստեղ աշխատանքի ժամանակահատվածը չի համընկնում արտադրանքի արտադրության ժամանակահատվածի հետ: Գյուղատնտեսությունում արտադրության ժամանակահատվածը գոյանում է այն գործընթացների ժամանակից, որոնք իրականացվում են մարդու աշխատանքի ներգործության (հողի վար, մշակում, ցանք, տնկում, բույսերի խնամք, բերքահավաք և այլն) և այն գործընթացների ժամանակից, որոնք իրականացվում են անմիջական բնական գործոնների ներգործությամբ (բուսական կուլտուրաների աճ, բերքի ձևավորում և այլն):

Արտադրության և աշխատանքի ժամանակահատվածի անհամապատասխանությունը պայմանավորում է գյուղատնտեսական արտադրության սեզոնայնությունը: Վերջինս էական ազդեցություն է ունենում արտադրության կազմակերպման, արտադրատեխնիկական սպասարկումների, մասնավորապես՝ տեխնիկայի, աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և ընդհանուր գյուղատնտեսական արտադրության վրա:

Գյուղատնտեսությունում աշխատանքի բաժանումը, հետևաբար նաև արտադրության մասնագիտացումն ի տարբերություն արդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի, ի հայտ է գալիս այլ ձևով: Հողային, աշխատանքային և նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով այստեղ անհրաժեշտ է հասնել բուսաբուծության և անասնապահության ճյուղերի օպտիմալ զուգակցման, ինչպես նաև օժանդակ արտադրության և արհեստների զարգացման: Աշխատանքի հասարակական բաժանման ժամանակ պետք է հաշվի առնել կոնկրետ գոտիների առանձնահատուկ պայմանները:

Անկասկած, գյուղատնտեսության գլխավոր առանձնահատկություններից մեկը տեխնիկայի կատարելության մակարդակն է և նրա օգտագործման պայմանները: Դրա հետ կապված՝ գյուղատնտեսությունում, որպես կանոն, շարժվում են արտադրության գործիքները (մեքենաները, կոմբայնները, գյուղատնտեսական տեխնիկան), իսկ աշխատանքի առարկաները (բույսերը) գտնվում են մեկ տեղում: Այս առումով գյուղատնտեսության տեխնիկական զինվածության բնույթն էականորեն տարբերվում է արդյունաբերության ճյուղից: Էներգետիկ ռեսուրսների նկատմամբ այստեղ պահանջարկն առավել մեծ է՝ համեմատած արդյունաբերության ճյուղի հետ: Այդ դեպքում գյուղատնտեսության տարածքային տեղաբաշխումը և արտադրության սեզոնային բնույթը պահանջում են տեխնիկայի և արատադրության հիմնական միջոցների պահանջարկի մեծացում<sup>20</sup>:

Գյուղատնտեսության առանձնահատկությունները կապված են նաև հիմնական ճյուղերում աշխատանքային գործընթացների կազմակերպման հետ:

Բուսաբուծությունում աշխատանքային գործընթացներն այլ կերպ են կազմակերպվում: Ի տարբերություն արդյունաբերական ճյուղերի՝ այս ճյուղերում աշխատողը հիմնական աշխատատեղ չունի: Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության գործընթացում՝ կախված տարվա ժամանակահատվածից և մշակաբույսի մշակության յուրահատկությունից՝ դաշտային աշխատողները և մեխանիզատորները կատարում են տարբեր տեսակի աշխատանքներ: Մեխանիզատորը պրակտիկորեն պետք է կարողանա աշխատել բոլոր տեսակի մեքենաների և ագրեգատների վրա, իսկ դաշտային աշխատողները պետք է անպայման կարողանան կատարել սերմերի և տնկանյութի նախա-

---

<sup>20</sup> Экономика сельского хозяйства: Учебник для студентов высших учебных заведений/ Н.Я. Коваленко, Ю.И. Агрибов, Н.А. Серова и др.-М.: ЮРКНИГА, 2004.-с.11

պատրաստման, բույսերի խնամքի, կերերի նախապատրաստման, բերքահավաքի աշխատանքները: Այս դեպքում աշխատանքի տեսակը կարող է փոխվել ոչ միայն ամեն օր, այլ, կախված պայմաններից, մեկ աշխատանքային օրվա ընթացքում<sup>21</sup>:

Գյուղատնտեսական ձեռնարկությունների գործունեության վերջնական ցուցանիշները կախված են ոչ միայն կազմակերպատնտեսական, այլև տեղի բնական գործոններից (հողի բերրիություն, կլիմա և այլն), որոնք հաճախ անկառավարելի են մարդու կողմից: Որպես կանոն, անբարենպաստ պայմանները խիստ վնասում են արտադրությանը, իջեցնում են ոչ միայն դրա արդյունավետությունը, այլև առաջարկի ու պահանջարկի միջև ստեղծում են անհավասարակշռվածություն:

Գյուղատնտեսական արտադրանքը քիչ փոխադրահարմար ու շուտ փչացող է, այդ իսկ պատճառով, արտադրանքի պահպանման, վերամշակման և իրացման համար պահանջվում են հատուկ պայմաններ: Ռեստի, կարևոր նշանակություն է ստանում գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության ինտեգրումը<sup>22</sup>:

Գյուղատնտեսությունը, հատկապես մեր հանրապետությունում, չի մտնում խոշոր մենաշնորհների մեջ, դրա հետևանքով շարունակաբար գտնվում է տարբեր մրցակիցների, հատկապես՝ նյութատեխնիկական մատակարարման, արտադրատեխնիկական սպասարկումների, վերամշակող ընկերությունների ազդեցության ներքո: Գյուղատնտեսությունում առանձին տնտեսավարողները, որոնց քանակը բազմահազար է, չեն կարող ներազդել գյուղատնտեսական մթերքների առաջարկի և պահանջարկի մակարդակի վրա:

Գյուղատնտեսության վերոհիշյալ և մի շարք այլ առանձնահատկություններն էական ազդեցություն են թողնում արտադրության կազմակերպման վրա, հետևաբար պահանջվում է առավելագույն չափով հաշվի առնել տեղի կլիմայական ու տնտեսական պայմանները, ստեղծագործական մոտեցում ցուցաբերել ինչպես բնական, այնպես էլ տնտեսական օրենքները կիրառելիս:

Վերը նշված ընդհանուր առանձնահատկությունների հետ մեկտեղ Հայաստանի գյուղատնտեսությունը բնորոշ են այլ առանձնահատկություններ, որոնք նույնպես պայ-

<sup>21</sup> Հակոբյան Լ.Լ., Ճեպեճյան Շ.Ա. Գյուղատնտեսության էկոնոմիկա: Ռեսուրսային ձեռնարկ ԲՈՒՀ-երի համար: Երևան: ՀՊԱՀ, 2012թ.-էջ 13-14

<sup>22</sup> Գ. Դավթյան, Լ. Մարգարյան, Վ. Աբգարյան և ուրիշներ. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում: Ռեսուրսային ձեռնարկ ագրոպարենային ոլորտի տնտեսագիտական, ագրոնոմիական ու ճարտարագիտական մասնագիտությունների ուսանողների համար: Երևան: Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004թ.-էջ 9

մանավորում են գյուղատնտեսության արտադրատեխնիկական հարաբերությունների վրա ազդող գործոնները: Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունների և նշված գործոնների առավել համակողմանի գնահատման համար կատարվել է Հայաստանի գյուղատնտեսության ուժեղ և թույլ կողմերի, խոչընդոտների և հնարավորությունների վերլուծություն: Վերջինիս արդյունքները հետևյալն են:

**Ուժեղ կողմերն են.**

- ագրոպարենային ոլորտում տնտեսավարման ձևերի բազմազանությունը, մասնավորապես՝ գործում են գյուղացիական տնտեսությունները, գյուղատնտեսական մթերքներ արտադրող և սպասարկող առևտրային կազմակերպությունները (ՍՊԸ, ՓԲԸ, ԲԲԸ), գյուղատնտեսական կոոպերատիվները, գյուղատնտեսական մթերքների վերամշակման բնագավառում՝ խոշոր, միջին և փոքր տարբեր կարգավիճակում գտնվող ընկերությունները,
- գյուղատնտեսությունում և գյուղատնտեսական մթերքների վերամշակող արդյունաբերությունում արտադրվող արտադրատեսակների (գյուղատնտեսական մթերքներ, վերամշակված արտադրատեսակներ) բազմազանությունը,
- առաջին անհրաժեշտության, կենսականորեն անհրաժեշտ գյուղատնտեսական մթերքներով գյուղացիական տնտեսությունների պահանջների բավարարման բարձր մակարդակը (էներգետիկ արժեքով գնահատված կարևորագույն պարենամթերքների ինքնաբավության մակարդակը կազմում է գրեթե 60%),
- գյուղատնտեսությունում զբաղվածության բարձր մակարդակի ապահովումը (տնտեսության ընդհանուր զբաղվածության մեջ գյուղատնտեսությանը 2013թ. տվյալներով բաժին է ընկնում 36.3 %<sup>23</sup>),
- գյուղատնտեսական արտադրության ապրանքայնության որոշակի մակարդակի ապահովումը (2014թ. տվյալներով 56.2 %<sup>24</sup>), որը գյուղացիական տնտեսություններին հնարավորություն է ընձեռում վերարտադրության համար,
- գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության արտադրության և մթերումների ծավալների աճի միտումը, մթերված գյուղատնտեսական մթերքի դիմաց վճարումների երաշխավորվածությունը,

<sup>23</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ԱՎԾ, Երևան 2014թ.-էջ 57

<sup>24</sup> Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից: Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ.-էջ 1



- գյուղատնտեսական մթերքների և գյուղատնտեսական մթերքների վերամշակու-մից ստացվող արտադրատեսակների արտահանման ծավալների ավելացումը, արտահանվող ապրանքների կառուցվածքում պարենամթերքների տեսակարար կշռի կայուն դիրքի ապահովումը և դրա ավելացման միտումը,
- գյուղացիական տնտեսությունների անդամների մասնագիտական հմտությունների առկայությունը, որը հնարավորություն է տալիս միջին մակարդակով կազմակերպելու գյուղատնտեսական արտադրությունը, օգտագործել գյուղատնտեսական տեխնիկա,
- գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների՝ տեխնիկական միջոցների, պարարտանյութերի, թունաքիմիկատների, պահեստամասերի, վառելանյութ-քսանյութերի՝ ներքին շուկայում առկայությունը:

**Թույլ կողմերն են.**

- դեռևս ցածր է գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը, այն զգալիորեն բնամթերային բնույթ է կրում: Այն հատկապես դրսևորվում է հեռավոր մարզերում: Վերջինս պայմանավորված է արտադրանքի իրացման բարդություններով, որի վրա ազդում են հետևյալ գործոնները՝ քաղաքային բնակավայրերից հեռու գտնվելը, տեղափոխման բարձր ծախսերը, տնտեսավարման տարբեր ձևերով գործող գյուղատնտեսական մթերքների իրացման գործառույթ ունեցող կառույցների (կոոպերատիվների) բացակայությունը, վերամշակող ձեռնարկությունների անբավարար գործունեությունը,
- գյուղացիական տնտեսություններում արտադրության ինտենսիվացման և արդյունավետության ցածր մակարդակը, որը հանգեցնում է մշակաբույսերի բերքատվության և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության նվազեցմանը, վերջինս իր հերթին պայմանավորված է կազմակերպական տարբեր ձևերով գործող արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող սերմնաբուծական, ագրոքիմիական, տոհմաբուծական, անասնաբուժական կառույցների անբավարար գործունեությամբ,
- ցածր է գյուղատնտեսությունում արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակը,
- գյուղացիական տնտեսությունները և գյուղատնտեսական առևտրային կազմակերպություններն ունեն փոքր չափեր, միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությունը և առևտրային կազմակերպությունները որպես սեփականություն տնօրինում են

- 1.43 հա գյուղատնտեսական հողատեսքեր և 1.11 հա վարելահող<sup>25</sup>: Տնտեսությունների նման փոքր չափերը գործնականում հնարավորություն չեն տալիս բարձր արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, արտադրության մեքենայացված աշխատանքներով սպասարկման, աշխատուժի արդյունավետ օգտագործման համար,
- ամբողջությամբ գյուղատնտեսական շրջանառության մեջ չեն ներառված առկա վարելահողերը (2014թ. դրությամբ վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը կազմում է 74.2 %<sup>26</sup>), արդյունավետ չեն օգտագործվում խոտհարքները և արոտները,
  - ցածր է աշխատուժի օգտագործման արդյունավետությունը, բոլոր մարզերում այն օգտագործվում է թերբեռնվածությամբ: Գյուղական բնակավայրերում աշխատուժի թերբեռնված օգտագործումն իր հերթին պայմանավորված է տնտեսավարման տարբեր ձևերի անկատարությամբ,
  - գյուղացիական տնտեսությունները, գյուղատնտեսական առևտրային կազմակերպությունները և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ընկերություններն ունեն փոխառու միջոցների պակաս, ներկայիս վարկավորման համակարգը տոկոսադրույքի, վարկավորման ժամկետների և գրավադրման պայմանների առունով մատչելի չէ, վերջինս հնարավորություն չի տալիս տեխնիկական վերազինման համար,
  - գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրավական կարգավիճակը հստակեցված չէ, ներկայիս իրավական դաշտը նպաստավոր պայմաններ չի ստեղծում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման, այդ թվում՝ արտադրատեխնիկական սպասարկումների գործառույթ ունեցողներ գյուղատնտեսական կոոպերատիվների խթանման համար,
  - գրեթե գոյություն չունեն գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող մասնագիտացված կազմակերպություններ (ընկերություններ),

<sup>25</sup> Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին, 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ: Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2006թ.

<sup>26</sup> 2014 թվականի բերքի տակ կատարված ցանքատարածությունների համատարած հաշվառման հանրագումարները: Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2014թ.-էջ 7

- ցածր է գյուղատնտեսական հավաքակազմի մեջ ներառվող տեխնիկական միջոցների սարքինության մակարդակը, մեքենայական հավաքակազմի բացարձակ գերակշռող մասի համար անցել է ծառայության ժամկետները, հետևանքը մեքենայացված աշխատանքների բարձր ծախսերն են և ծառայությունների սակագները,
- գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերի և գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև գոյություն չունեն ձևավորված փոխշահավետ պայմանագրային հարաբերություններ:

### Յնարավորություններն են.

- գյուղացիական տնտեսությունների մասնագիտացման համար նպաստավոր պայմաններից ելնելով՝ համապատասխան մշակաբույսի ծավալների և անասնազխաքանակի ավելացումը,
- կոոպերացիայի տարբեր ձևերի կիրառման համար նախապայմանների ստեղծումը, այդ գործընթացում տնտեսություններին աջակցությունը, իրավական դաշտի կատարելագործումը: Վերջինս հնարավորություն է տալիս կոոպերատիվ սկզբունքով գործող կառույցների միջոցով լուծել արտադրական և սպասարկման բազմակի խնդիրներ, մասնավորապես՝ արտադրատեխնիկական սպասարկումների խնդիրները,
- գյուղատնտեսությունում գոյություն ունեցող արտադրական և սպասարկող միավորների կատարելագործումը՝ դրանց կազմակերպական ձևի հստակեցման ճանապարհով,
- գյուղացիական տնտեսությունների կողմից օգտագործվող հողատարածքի ընդլայնումը՝ հողատեսքերի փոխանակման, զման, վարձակալման, համատեղ օգտագործման և այլ մեխանիզմների կիրառման միջոցով,
- փոխառու միջոցների ստացման մատչելիության ապահովման ճանապարհով՝ գյուղատնտեսական արտադրության գործընթացում ագրոտեխնիկական և զոոտեխնիկական պահանջների պահպանման, ներդրումների իրականացման, մասնավորապես՝ տեխնիկական համալրման ու վերազինման, հետևաբար նաև արտադրության ինտենսիվացման համար նախապայմանների ստեղծումը,
- տնտեսությունների համալրումը իրենց չափերին համապատասխան տեխնիկական միջոցներով և շուկայի պահանջները բավարարող տեխնոլոգիաներով,

- արտադրության մեջ գիտական հետազոտությունների, մասնավորապես՝ արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի հետազոտությունների արդյունքների ներդրման գործուն մեխանիզմների մշակումը և կիրառումը,
- զբաղվածության մակարդակի բարձրացման և համաչափ օգտագործման նպատակով գյուղական բնակավայրերում ագրարային ոլորտի սպասարկող կառույցների ձևավորումը, գյուղատնտեսությունից բացի, նաև այլ ոլորտներում աշխատատեղերի հնարավորության ստեղծումը, փոքր ու միջին գործարարության զարգացումը:

**խոչընդոտներն են.**

- նշված հնարավորությունների իրականացման համար գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական մթերքների վերամշակող ընկերությունների սեփական միջոցների բացակայությունը,
- տվյալ տնտեսավարողների համար (փոխառու) վարկային միջոցների սղությունը և դրանց ձեռքբերման մատչելիության ցածր մակարդակը,
- հանրապետության ազգաբնակչության ցածր եկամուտների հետևանքով գյուղատնտեսական և գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացված արտադրանքի նկատմամբ վճարունակ պահանջարկի ցածր մակարդակը,
- գյուղացիական տնտեսությունների տեղեկատվության պակասը,
- ներքին շուկայում գյուղատնտեսական մթերքների իրացման մեծածախ շուկաների տարերային ձևավորումը և շուկայական օրենքներին չհամապատասխանող կանոններով դրանց գործունեությունը,
- արտադրանքի արտահանման համար տնտեսությունների սակավ հնարավորությունները և դրա իրականացմամբ զբաղվող կառույցների բացակայությունը:

Ակնհայտ է, որ վերը թվարկված հիմնական խոչընդոտները որոշակիորեն պայմանավորված են հանրապետության գյուղատնտեսության ոլորտի արտադրատեխնիկական սպասարկումների վիճակով և դրա արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ: Վերջինիս իրականացման կարևորագույն նախապայմաններից է արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող գործոնների ճիշտ գնահատումը և դրանց ճիշտ օգտագործումը գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների կազմակերպման բնագավառում:

Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունների վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտել արտադրատեխնիկական սպասար-

կումների հարաբերությունները պայմանավորող հիմնական գործոնները: Ըստ կատարված ուսումնասիրությունների՝ դրանք հետևյալն են.

- Գյուղատնտեսությունում տնտեսավարողների և գյուղացիական տնտեսությունների՝ տեխնիկական միջոցներով ապահովվածության մակարդակը:
- Հանրապետության գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի մակնիշային կազմը, կառուցվածքը և ծառայության ժամկետը: Տեխնիկական միջոցների միավորների քանակը:
- Ըստ հանրապետության մարզերի և տարածաշրջանների՝ տեխնիկական միջոցների ապահովվածությունը:
- Տրակտորային հավաքակազմի թվակազմի և գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների համապատասխանությունը:
- Գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի սարքինության մակարդակը:
- Գյուղատնտեսությունում մեքենայացված աշխատանքների սպասարկումներ իրականացնող տարբեր կազմակերպական ձևերով գործող կառույցների (ընկերություններ, կոոպերատիվներ, համատեղ գործունեության պայմանագրով միավորված տնտեսավարող սուբյեկտներ և այլն) առկայությունը:
- Գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակությունը՝ գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքների ծառայությունների փոխհատուցման, ինչպես նաև տեխնիկական միջոցների ձեռքբերման ու համալրման համար:
- Գյուղատնտեսությունում արտադրական գործընթացների իրականացման համար մեքենայացված աշխատանքների (վար, ցանք, կուլտիվացիա, սրսկում, փոշոտում, հացահատիկային և կերային մշակաբույսերի բերքահավաք, տրանսպորտային աշխատանքներ և այլն) համար ձևավորված սակագների մակարդակը:
- Գյուղատնտեսական մշակաբույսերի փաստացի ցանքատարածությունները և բազմամյա տնկարկների տարածքները, ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների կառուցվածքը, անասնապահության մասնագիտացումը:
- Որպես սեփականություն գյուղացիական տնտեսություններին պատկանող և օգտագործվող գյուղատնտեսական հողատեսքերի միջին տարածքը (չափերը) և անասնագլխաքանակը:


- Գյուղատնտեսությունում տեխնիկական վերազինման տարբեր մեխանիզմների (լիզինգ, ապրանքային վարկեր, դրամաշնորհներ, տարաժամկետ վճարում և այլն) կիրառմամբ ծրագրերի առկայությունը:

Այսպիսով, փորձ արվեց ներկայացնել գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող հիմնական գործոնները, որի սխեմատիկ պատկերը ներկայացվում է 1-ին գծապատկերում:

Այսպիսով, տվյալ բաժնում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին ներկայացնել գյուղատնտեսության ընդհանուր առանձնահատկությունները, ինչպես նաև հանրապետության գյուղատնտեսությանը բնորոշ առանձնահատկությունները, որը թույլ տվեց բացահայտել արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունների վրա ազդող գործոնները:

Գյուղատնտեսության գլխավոր առանձնահատկություններից է նաև տեխնիկայի կատարելության մակարդակը և նրա օգտագործման պայմանները:

Գյուղատնտեսության ընդհանուր առանձնահատկությունների հետ մեկտեղ Հայաստանի գյուղատնտեսությանը բնորոշ են այլ առանձնահատկություններ, որոնք նույնպես պայմանավորում են գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վրա ազդող գործոնները:



→	Գյուղատնտեսությունում մեքենայացված աշխատանքների սպասարկումներ իրականացնող տարբեր կազմակերպական ձևով գործող կառույցների (ընկերություններ, կոոպերատիվներ, համատեղ գործունեության պայմանագրով միավորված տնտեսավարող սուբյեկտներ և այլն) առկայությունը
→	Գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակությունը՝ գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքների ծառայությունների փոխհատուցման, ինչպես նաև տեխնիկական միջոցների ձեռքբերման ու համալրման համար
→	Գյուղատնտեսությունում արտադրական գործընթացների իրականացման համար մեքենայացված աշխատանքների (վար, ցանք, կուլտիվացիա, սրսկում, փոշոտում, հացահատիկային և կերային մշակաբույսերի բերքահավաք, տրանսպորտային աշխատանքներ և այլն) համար ձևավորված սակագների մակարդակը
→	Գյուղատնտեսական մշակաբույսերի փաստացի ցանքատարածությունները և բազմամյա տնկարկների տարածքները, ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների կառուցվածքը, անասնապահության մասնագիտացումը
→	Որպես սեփականություն գյուղացիական տնտեսություններին պատկանող և օգտագործվող գյուղատնտեսական հողատեսքերի միջին տարածքը (չափերը) և անասնազխաքանակը
→	Գյուղատնտեսությունում տեխնիկական վերագինման տարբեր մեխանիզմների (լիզինգ, ապրանքային վարկեր, դրամաշնորհներ, տարածամկետ վճարում և այլն) կիրառմամբ ծրագրերի առկայությունը

**Գծապատկեր 1. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող հիմնական գործոնները**

Մասնավորապես՝ արտադրատեխնիկական սպասարկումների հետ առնչվող ուժեղ կողմ է դիտարկվել միայն գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների՝ տեխնիկական միջոցների, պարարտանյութերի, թունաքիմիկատների, պահեստամասերի, վառելանյութ-քսանյութերի՝ ներքին շուկայում առկայությունը:

Ինչ վերաբերում է թույլ կողմերին, ապա դրանք առավել ընդգծված են, մասնավորապես՝ գյուղատնտեսությունում արտադրական գործընթացների մեքենայացման ցածր մակարդակը, տնտեսությունների փոքր չափերը, ինչը գործնականում հնարավորություն չի տալիս բարձր արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, մեքենայացված աշխատանքներով արտադրության սպասարկման, աշխատուժի արդյունավետ օգտագործման համար:

Մատչելի փոխառու (վարկային) միջոցների սղությունը հնարավորություն չի տալիս տեխնիկական վերազինման համար, իսկ ներկայիս իրավական դաշտը նպաստավոր պայմաններ չի ստեղծում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման, այդ թվում՝ արտադրատեխնիկական սպասարկումների գործառույթ ունեցող կառույցների խթանման համար: Գրեթե գոյություն չունեն գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող մասնագիտացված կազմակերպություններ (ընկերություններ): Ցածր է գյուղատնտեսական հավաքակազմի մեջ ներառվող տեխնիկական միջոցների սարքինության մակարդակը, մեքենայական հավաքակազմի բացարձակ գերակշռող մասի համար անցել են ծառայության ժամկետները, հետևանքը մեքենայացված աշխատանքների բարձր ծախսերն են և ծառայությունների սակագները: Գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերի և գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև գոյություն չունեն ձևավորված փոխշահավետ պայմանագրային հարաբերություններ:

Արտադրատեխնիկական սպասարկումների բարելավման առումով հնարավորությունների շարքում ներառված է՝ կոոպերացիայի տարբեր եղանակների ձևավորման համար նախապայմանների ստեղծումը, այդ գործընթացում տնտեսություններին աջակցությունը, իրավական դաշտի կատարելագործումը: Վերջինս հնարավորություն է տալիս կոոպերատիվ սկզբունքով գործող կառույցների միջոցով լուծել արտադրական և սպասարկման բազմակի խնդիրներ, մասնավորապես՝ արտադրատեխնիկական սպասարկումների խնդիրները: Դիտարկվել է նաև գյուղատնտեսությունում գոյություն ունեցող արտադրական և սպասարկող միավորների կատարելագործումը՝ դրանց կազմակերպական ձևի հստակեցման և փոխառու միջոցների ստացման մատչելիության ապահովման, գյուղատնտեսական արտադրության գործընթացում ագրոտեխնիկական և գոտտեխնիկական պահանջների պահպանման, ներդրումների իրականացման, մասնավորապես՝ տեխնիկական համալրման ու վերազինման ճանապարհով: Որպես հնարավորություն է դիտարկվել նաև՝ տնտեսությունների համալրումը իրենց չափերին համապատասխան տեխնիկական միջոցներով և շուկայի պահանջները բավարարող տեխնոլոգիաներով, գիտական հետազոտությունների, մասնավորապես՝ արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի հետազոտությունների արդյունքների՝ արտադրության մեջ ներդրման գործուն մեխանիզմների մշակումը և կիրառումը, ինչպես նաև զբաղվածության մակարդակի բարձ-



րացման և համաչափ օգտագործման նպատակով՝ գյուղական բնակավայրերում ագրարային ոլորտի սպասարկող կառույցների ձևավորումը: Որպես խոչընդոտող հիմնական կողմ է դիտարկվել՝ հնարավորությունների օգտագործման համար սեփական միջոցների բացակայությունը:

Հետևություն է արվում, որ գյուղատնտեսության զարգացման հիմնական խոչընդոտները մեծապես պայմանավորված են հանրապետության գյուղատնտեսության ոլորտի արտադրատեխնիկական սպասարկումների վիճակով և դրա արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:

Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունների վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտել արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող հիմնական գործոնները, որոնք տարանջատվել են 11 խմբերի:

Տվյալ բաժնում կատարված ուսումնասիրությունները ելակետ են հանդիսացել հանրապետության գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների առանձնահատկությունների գնահատման համար<sup>27</sup>:

### **1.3. ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների առանձնահատկությունների բնութագիրը**

Ինչպես նշվել է, Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականից հետո իրականացված բարեփոխումների և սեփականաշնորհման գործընթացի արդյունքում հողերի մասնավորեցումն ուղեկցվել է նախկին 859 կոլտնտեսություններին, խորհրդատնտեսություններին և միջտնտեսային կազմակերպություններին պատկանող գյուղատնտեսական տեխնիկայի սեփականաշնորհմամբ: Արդյունքում, ներկայումս գործում են շուրջ 340 հազ. գյուղացիական տնտեսություններ: Մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, որից 1.1 հա՝ վարելահողեր, որոնք իրենց հերթին բաժանվում են 3-4 հողակտորների:

<sup>27</sup> Եղիզարյան Լ.Ս. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները և արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող գործոնները: Ֆինանսներ և էկոնոմիկա, 7 (157), հունիս 2013.-էջ 20-22

Տնտեսությունների փոքր չափերի պատճառով սեփական տեխնիկա ունենալը նպատակահարմար չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեխնիկայի սեփականատերը մեխանիզատոր է և իրականացնում է վճարովի ծառայություններ:

Քանի որ հողօգտագործողներն ազատ են մշակաբույսերի ընտրության հարցում և նույն հողազանգվածի տարբեր հատվածներում զբաղվում են տարբեր մշակաբույսերի արտադրությամբ, ապա որոշակի բանվորական գործընթացները կատարվում են ոչ մասիվ տարածությունների վրա և կարճ ժամանակահատվածում իրականացվում են տարբեր բնույթի մեքենայական աշխատանքներ:

Գյուղատնտեսական հիմնական տեխնիկայի առկայության վերաբերյալ տվյալները ներկայացված են 1.3.1 աղյուսակում:

Տրակտորների և բեռնատար ավտոմեքենաների թվաքանակի ավելացումը հիմնականում պայմանավորված է հանրապետության տնտեսության մյուս ճյուղերի՝ տվյալ տեսակի տեխնիկական միջոցները գյուղատնտեսությունում օգտագործելու և հանգույցների հավաքման միջոցով նոր տեխնիկա կոմպլեկտավորելու հանգամանքով: Կերահավաք կոմբայնների կրճատումը հիմնականում կերային մշակաբույսերի տարածքների կտրուկ կրճատման և հանրապետությունից այդ տեխնիկայի դուրսբերման հետևանք է:

Հայաստանի Հանրապետությունում առկա հիմնական գյուղատնտեսական տեխնիկայի քանակության և տարիքային կազմի վերաբերյալ պատկերացում են տալիս 1.3.2 աղյուսակի տվյալները:

Գյուղատնտեսական հիմնական տեխնիկայի առկայության վերաբերյալ տվյալները 1991-2015թթ.

(հունվարի 1-ի դրությամբ)<sup>28,29,30,31, 32, 33, 34, 35</sup>

*միավոր*

	Տարեթվերը									
	1991	1996	2001	2005	2010	2011	2012	2013	2014	2015
Տրակտորներ	13897	12600	13122	14331	14777	14832	14558	14683	14783	15025
Բեռնատար ավտոմեքենաներ	11316	10045	12706	14437	15337	15600	15600	15294	15251	15063
Հացահատիկահավաք կոմբայններ	1430	1413	1312	1397	1412	1413	1367	1362	1366	1356
Տրակտորային կցասայլեր	*	5363	6156	6109	6134	6108	6026	6075	6099	6130
Տրակտորային խոտհնձիչներ	*	2023	1354	1610	1866	1909	1922	1971	2030	2031
Կերահավաք կոմբայններ	*1082**	620	419	312	307	315	324	347	376	405
Հատիկագտիչ մեքենաներ	*	625	475	480	445	445	433	432	427	425
Տրակտորային շարքացաններ	2381	1976	1601	1833	1839	1833	1839	1866	1856	1863
Տրակտորային գութաններ	*4812**	3380	3643	3686	3772	3704	3716	3809	3843	3903
Կուլտիվատորներ	2839	2178	2037	1977	2129	2085	2138	2210	2244	2279

\*տվյալները բացակայում են\* 1992թ. տվյալներով

<sup>28</sup> Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999թթ., վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001թ. էջ 151-156

<sup>29</sup> Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005թթ., վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2006թ. էջ 143-148

<sup>30</sup> Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2006-2010թթ., վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ. էջ 143-148

<sup>31</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ: ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ. էջ 4-9

<sup>32</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2012թ. հունվարի 1-ի դրությամբ: ՀՀ ԱՎԾ, Երևան 2012թ. էջ 4-9

<sup>33</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2013թ. հունվարի 1-ի դրությամբ: ՀՀ ԱՎԾ, Երևան 2013թ. էջ 4-9

<sup>34</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2014թ. հունվարի 1-ի դրությամբ: ՀՀ ԱՎԾ, Երևան 2014թ. էջ 4-9

<sup>35</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2015թ. հունվարի 1-ի դրությամբ: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ. էջ 4-9

Հայաստանի Հանրապետությունում առկա հիմնական գյուղատնտեսական տեխնիկայի քանակը և տարիքային կազմը<sup>36</sup>

Թողարկման տարեթիվը	Տրակտորներ				Ընդամենը տրակտորներ		Հացահատիկահավաք կոմբայններ	
	Թրթուրավոր		Անիվավոր					
	հատ	%-ը ընդ. նկատմամբ	հատ	%-ը ընդ. նկատմամբ	հատ	%-ը ընդ. նկատմամբ	հատ	%-ը ընդ. նկատմամբ
1	2	3	4	5	6	7	8	9
1976	222		285		507		98	
1977	181		621		802		110	
1978	320		642		962		114	
1979	453		599		1052		112	
1980	414		594		1008		100	
	<b>1590</b>	<b>31.9</b>	<b>2741</b>	<b>25.3</b>	<b>4331</b>	<b>27.4</b>	<b>534</b>	<b>37,3</b>
1981	514		461		975		121	
1982	294		596		890		152	
1983	265		640		905		116	
1984	229		471		700		99	
1985	292		613		905		110	
	<b>1594</b>	<b>32.0</b>	<b>2781</b>	<b>25.7</b>	<b>4375</b>	<b>27.7</b>	<b>598</b>	<b>41,7</b>
1986	375		530		905		54	
1987	334		680		1014		38	
1988	301		723		1024		50	
1989	303		808		1111		12	
1990	147		463		610		8	
	<b>1460</b>	<b>29.3</b>	<b>3204</b>	<b>29.6</b>	<b>4664</b>	<b>29.5</b>	<b>162</b>	<b>11,3</b>
1991	329		178		507		-	
1992	3		12		15		-	
1993	-		-		-		-	
1994	-		-		-		-	
1995	-		-		-		-	
	<b>332</b>	<b>6.7</b>	<b>190</b>	<b>1.7</b>	<b>522</b>	<b>3.3</b>	<b>-</b>	<b>0</b>
1996	-		-		-		-	
1997	-		-		-		15	
1998	-		25		25		18	
1999	-		50		50		13	
2000	-		156		156		-	
	<b>-</b>	<b>-</b>	<b>231</b>	<b>2.1</b>	<b>231</b>	<b>1.4</b>	<b>46</b>	<b>3.2</b>

<sup>36</sup> ՀՀ գյուղատնտեսության մախարարության տեխնիկայի պետական տեսչության տվյալներով

աղյուսակ 1.3.2-ի շարունակությունը

1	2	3	4	5	6	7	8	9
2001	-		45		45		-	
2002	-		28		28		7	
2003	-		40		40		-	
2004	-		51		51		-	
2005	-		109		109		-	
	-	-	<b>273</b>	<b>2.5</b>	<b>273</b>	<b>1.7</b>	<b>7</b>	<b>0.5</b>
2006	-		246		246		51	
2007	-		11		11		5	
2008	-		79		79		7	
2009	-		-		-		-	
2010			161		161		2	
2011	4		242		246		12	
2012	-		326		326		5	
2013	-		170		170		0	
2014	-		180		180		4	
	4	0.1	<b>1415</b>	<b>13.1</b>	<b>1419</b>	<b>9.0</b>	<b>86</b>	<b>6.0</b>
<b>Ընդամենը</b>	<b>4980</b>	<b>100.0</b>	<b>1083 5</b>	<b>100.0</b>	<b>15815</b>	<b>100.0</b>	<b>1433</b>	<b>100.0</b>

Աղյուսակում ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ գյուղատնտեսության տեխնիկական հավաքակայանի նորացման նպատակով 1976-1990թթ. տարեկան միջին հաշվով գյուղատնտեսական կազմակերպություններին է հատկացվել տարբեր մակնիշի շուրջ 900 տրակտոր, 90 հացահատիկահավաք կոմբայն: 1991թ. ներմուծվող տեխնիկայի քանակությունը կտրուկ կրճատվել է, տվյալ տարում հանրապետություն է ներմուծվել ընդամենը 507 միավոր տրակտոր, իսկ հացահատիկահավաք կոմբայն ընդհանրապես չի ներմուծվել: 1992թ. գրեթե դադարեցվել է տեխնիկայի ներմուծումը և ներմուծվել է ընդամենը 15 միավոր տրակտոր: 1993-1997թթ. տրակտոր ընդհանրապես հանրապետություն չի ներկրվել: 1997թ. ներկրվել է միայն 15 միավոր հացահատիկահավաք կոմբայն: Սկսած 1998թ.-ից, բացառությամբ 2009թ., հանրապետություն են ներկրվել փոքր խմբաքանակներով տրակտորներ, հացահատիկահավաք կոմբայններ և գյուղատնտեսական գործիքներ: Տեխնիկայի ներմուծումը վերջին տասնամյակում ակտիվ է եղել, մասնավորապես՝ 2006, 2011, 2012, 2013 և 2014թթ., տրակտորների ներմուծումը համապատասխանաբար կազմել է 246, 246, 326, 170 և 180 միավոր, իսկ հացահատիկահավաք կոմբայնների ներմուծումը ակտիվ է եղել 2006 և 2011թ.-ին, համապատասխանաբար ներմուծվել է 51 և 12 միավոր:

Վերջին 22 տարվա ընթացքում տեխնիկական միջոցների ներմուծման խմբաքանակների կտրուկ կրճատման պատճառով գյուղատնտեսության մեքենայական հավաքակազմի տարիքը մեծացել է, տեխնիկայի գերակշռող մասի համար անցել է ամորտիզացիոն նորմաներով սահմանված ժամանակահատվածը:

Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի տարիքային կազմի վերլուծությունից պարզվել է, որ, օրինակ, տրակտորների ընդհանուր թվի 28%-ը շահագործվում է 34 տարուց ավելի, 28.3 %-ը՝ 29-33 տարի, 35.1 %-ը՝ 14-28 տարի և միայն 8,6%-ը՝ մինչև 13 տարի: Փաստորեն, շահագործվող տրակտորների 91.4%-ն օգտագործվում է 13 տարուց ավելի և անցել են ամորտիզացիայի համար սահմանված ժամկետները: Հացահատիկահավաք կոմբայնների համար վիճակն առավել վատթար է, այսպես՝ հացահատիկահավաք կոմբայնների 37.4%-ը շահագործվում է 34 տարուց ավելի, 41.9%-ը՝ 29-33 տարի, 14.5 %-ը՝ 14-28 տարի և միայն 6.2 %-ը՝ մինչև 13 տարի<sup>37</sup>: Մաշված տեխնիկայի շահագործումը հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի գերածախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում նորոգման և տեխսպասարկման աշխատանքները:

Երկար տարիներ տեխնիկական նոր միջոցներով գրեթե չհամալրվելու, եղածը բարոյապես և ֆիզիկապես մաշվելու, ժամանակին չնորոգվելու, տեխնիկական խնամքներով չապահովվելու հետևանքով աստիճանաբար նվազել է գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության մակարդակը:

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ (անկախ սեփականության ձևից) հանրապետությունում առկա է 1356 միավոր հացահատիկահավաք կոմբայն, 405 միավոր կերահավաք կոմբայն, 15063 միավոր բեռնատար ավտոմեքենաներ, գյուղատնտեսական նշանակության 15025 միավոր տարբեր տեսակի տրակտորներ:

Առկա գյուղատնտեսական տեխնիկայի վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015 թվականի տարեսկզբին տեխնիկայի սարքինության ցուցանիշը կազմում էր՝ տրակտորներինը՝ 78.9, հացահատիկահավաք կոմբայններինը՝ 74.3, կերահավաք կոմբայններինը՝ 72.8, խոտհնձիչներինը՝ 84.4, տրակտորային կցասայլերինը՝ 87.1, գութաններինը՝ 88.3, կուլտիվատորներինը՝ 84.5 %<sup>38</sup> (աղյուսակ 1.3.3):

<sup>37</sup> Հիմք է ընդունվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական տեխնիկայի ռեգիստրի տվյալները

<sup>38</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2015թ. հունվարի 1-ի դրությամբ: Վիճակագրական տեղեկագիր: ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ.-էջ 4-9

**Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հիմնական տեխնիկայի առկայությունը և սարքինության մակարդակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ<sup>39</sup>**

Տեխնիկայի տեսակը	Առկա քանակը, միավոր	Որից՝ սարքին վիճակում, միավոր	Սարքինության մակարդակը, %
Տրակտորներ	15025	11862	78.9
Բեռնատար ավտոմեքենաներ	15063	11383	75.6
Հացահատիկահավաք կոմբայններ	1356	1007	74.3
Տրակտորային կցասայլեր	6130	5337	87.1
Տրակտորային խոտհնձիչներ	2031	1714	84.4
Կերահավաք կոմբայններ	405	295	72.9
Հատիկագտիչ մեքենաներ	425	362	85.2
Տրակտորային շարքացաններ	1863	1597	85.7
Տրակտորային գութաններ	3903	3447	88.3
Կուլտիվատորներ	2279	1926	84.5
Հավաքիչ-մամլիչներ	1664	1397	84.0

Մաշված տեխնիկայի շահագործումը հանգեցնում է վառելանյութի և քայուղերի գերածախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում նորոգման և տեխսպասարկման աշխատանքները:

Վերջին տարիներին, բացի ՉԺՀ-ի, ճապոնիայի և Հնդկաստանի կառավարությունների դրամաշնորհների հաշվին և «Գյուղատնտեսական բարեփոխումներին աջակցության» ԾԻԳ-ի կողմից իրականացվող վարկային ծրագրի շրջանակներում ներկրված գյուղատնտեսական տեխնիկայից, այլ ներկրումները զգալիորեն քիչ են եղել: Դրամաշնորհների հաշվին 1997-2011թթ. ընթացքում ներմուծվել է 116 հացահատիկահավաք կոմբայն և 885 տրակտոր՝ իրենց գյուղագործիքներով, որոնք երկարաժամկետ վարձակալության և աճուրդ-վաճառքի միջոցով հատկացվել են հողօգտագործողներին: Դրամաշնորհներով ստացված գյուղատնտեսական տեխնիկայի հետ ներմուծվել են գյուղատնտեսական գործիքներ և ընդհանուր արժեքի 10%-ի չափով անհրաժեշտ պահեստամասեր: Փոքր խմբաքանակով տրակտորներ է ներմուծվել նաև «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի «Ձրից դեպի շուկա» բաղադրիչի շրջանակներում (մատչելի մեխանիզմներով գյուղատնտեսությունում տնտեսա-

<sup>39</sup> Հիմք է ընդունվել՝ Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, վիճակագրական տեղեկագրի տվյալները, Երևան 2015.-էջ 4-9

վարողներին է տրամադրվել 32 միավոր անվավոր տրակտոր): Որոշակի քանակությամբ գյուղատնտեսական տեխնիկա ներմուծվել է Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության բարձրացման» ծրագրով: Վերջինիս շրջանակներում 2015թ. մայիսի 15-ի դրությամբ ՀՀ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի մարզերի 91 համայնքի արոտօգտագործողների սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 550 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 124 անիվավոր տրակտոր: Ծրագրի շրջանակներում տեխնիկայի մատակարարման գործընթացը շարունակվում է:

Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության բնագավառում ստեղծված վիճակի հետևանքով հաճախ մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով ագրոտեխնիկական կանոններով պահանջվող մի շարք գործընթացներ չեն կատարվում կամ կատարվում են ձեռքով՝ խիստ բարձրացնելով մշակության աշխատատարությունը և խախտելով աշխատանքների կատարման լավագույն ժամկետները: Գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածության հետևանքով մեծացել են նորոգումների և տեխնիկական սպասարկումների ծախսերը, որի հետևանքով բարձրանում են նաև ծառայությունների սակագները:

Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակայանի վերազինման հարցում առկա դժվարություններն առնչվում են տեխնիկական շահագործող սուբյեկտների, սպասարկումների կարիք ունեցող գյուղացիական տնտեսությունների ֆինանսական սուղ հնարավորությունների, ներմուծվող մեքենայացման միջոցների և պահեստամասերի բարձր գների և այլ պատճառների հետ:

Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում տեխնիկական միջոցների օգտագործման ուղղությամբ կատարված ուսումնասիրություններից բացահայտվել է, որ այդ բնագավառի գործունեությունը պայմանավորված է մի շարք գործոններով:

Գյուղացիական տնտեսությունների տեխնիկական ապահովվածության և մեքենաօգտագործման վիճակի գնահատման նպատակով ուսումնասիրվել է գյուղացիական տնտեսությունների՝ հիմնական տեխնիկական միջոցներով ապահովվածության և դրանց ծանրաբեռնվածության վիճակը: Արդյունքները ներկայացված է 1.3.4 և 1.3.5 աղյուսակներում:



Գյուղացիական տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների՝ տեխնիկական միջոցներով ապահովվածության մակարդակը (2015թ. տվյալներով)<sup>40</sup>

Գյուղատնտեսական տեխնիկայի տեսակը	Առկա քանակը 100 գյուղացիական տնտեսության և առևտրային կազմակերպության հաշվով	Սարքին քանակը 100 գյուղացիական տնտեսության և առևտրային կազմակերպության հաշվով
Տրակտորներ	4.43	3.50
Բեռնատար ավտոմեքենաներ	4.44	3.36
Հացահատիկահավաք կոմբայններ	0.40	0.30
Կերահավաք կոմբայններ	0.12	0.09
Տրակտորային կցասայլեր	1.81	1.57
Տրակտորային խոտհնձիչներ	0.60	0.51
Տրակտորային շարքացաններ	0.55	0.47
Տրակտորային գութաններ	1.15	1.02
Կուլտիվատորներ	0.67	0.57
Հավաքիչ-մամլիչներ	0.49	0.41

Գյուղացիական տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների՝ տեխնիկական միջոցներով ապահովվածության տվյալներից ակնհայտ է, որ վերջինիս մակարդակը չափազանց ցածր է, այսպես՝ 100 տնտեսության հաշվով տրակտորների ապահովվածությունը կազմում է 4.43, իսկ բեռնատար ավտոմեքենաներինը՝ 4.44: Մնացած տեխնիկական միջոցներով ապահովվածությունն առավել ցածր է: Պարզ է, որ սարքին տեխնիկայով ապահովվածության մակարդակն առավել ցածր է: Առկա իրավիճակը զգալի բարդություններ է առաջացնում մեքենայացված աշխատանքներով սպասարկումներ կազմակերպելիս՝ անհավասար պայմաններ ստեղծելով տեխնիկայի սեփականատերերի և գյուղացիական տնտեսությունների միջև:

Տեխնիկական միջոցների օգտագործման արդյունավետությունը գնահատելու համար կատարվել են հաշվարկներ, որոնք ուղղված են հիմնական տեխնիկական միջոցների տարեկան ծանրաբեռնվածությունների բացահայտմանը: Արդյունքները ներկայացված են 1.3.5 աղյուսակում:

<sup>40</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ վիճակագրության տվյալները

**Հիմնական տեխնիկական միջոցների ծանրաբեռնվածության մակարդակը 2011թ.  
համար<sup>41</sup>**

Հանրապետության մարզերը	Մեկ տրակտորի հաշվով		Մեկ տրակտորային գութանի հաշվով ցանքատարածությունը և բազմամյա տնկարկը, հա	Մեկ հացահատիկահավաք կոմբայնի հաշվով հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունը, հա
	ցանքատարածությունը, հա	ցանքատարածությունը և բազմամյա տնկարկների տարածությունը հա		
Արագածոտն	25.55	30.62	109.75	129.23
Արարատ	16.81	26.24	85.84	130.08
Արմավիր	15.70	24.15	81.15	97.49
Գեղարքունիք	27.21	27.77	172.31	141.60
Լոռի	13.39	14.89	63.52	82.38
Կոտայք	18.13	24.14	71.08	114.39
Շիրակ	31.97	32.24	95.49	120.14
Սյունիք	21.95	24.41	78.44	94.89
Վայոց Ձոր	5.61	9.39	66.63	62.85
Տավուշ	12.16	15.43	57.40	101.34
Ք. Երևան	0.22	2.88	58.42	1.06
<b>ԸՆդամենը</b>	19.23	22.86	91.54	111.69

Կատարված հաշվարկներից բացահայտվել է, որ տեխնիկական միջոցներից տրակտորների փաստացի ծանրաբեռնվածությունը, համեմատած տարեկան ծանրաբեռնվածության կողմնորոշիչ նորմաների հետ, զգալիորեն ցածր է (ընդհանուր նշանակության տրակտորների համար այն տատանվում է 1320-2673 էտալոնային հեկտարի սահմաններում), նույն իրավիճակն է նաև տրակտորային գութանների գծով, միջին


<sup>41</sup> Է. Ղազարյան, Հ. Ծպնեցյան Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության հիմնախնդիրները: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր). գիրք 1, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012թ.-էջ 186

ծանրաբեռնվածությունը կազմում է 91.5 ֆիզիկական հեկտար (կողմնորոշիչ նորման ընդհանուր նշանակության գութանների համար կազմում է 125 հեկտար)<sup>42</sup>: Հացահատիկահավաք կոմբայնների համար վիճակն այլ է՝ մի շարք մարզերում դրանց ծանրաբեռնվածությունը զգալիորեն գերազանցում է կողմնորոշիչ նորմաներին (119 հեկտար), այն հատկապես բարձր է ՀՀ Գեղարքունիքի, Արարատի և Արագածոտնի մարզերում: Ստեղծված իրավիճակը պահանջում է՝ բերքահավաքի ժամկետներից կախված՝ հացահատիկահավաք կոմբայնների տեղափոխման կազմակերպումը: Բացի այդ, առկա է նաև կոմբայնների ֆիզիկական մաշվածության խնդիրը՝ կապված հացահատիկի բերքահավաքի ընթացքում մեծ կորուստների առկայության հետ:


Հանրապետության գյուղատնտեսությունում տեխնիկական միջոցների օգտագործման արդյունավետությունը գնահատելու համար՝ կատարված ուսումնասիրություններից ելնելով՝ տնտեսագետների կողմից իրականացվել են հաշվարկներ վարի տրակտորային ագրեգատի (ԴՏ-75, ՊԼՆ-4-35) և հացահատիկահավաք կոմբայնի (ՍԿ-5 «Նիվա») արտադրողականության գնահատման ուղղությամբ՝ կախված մշակվող տարածքի և բերքահավաքի տարածքի չափերից: Հաշվարկները կատարվել են 0.02 մինչև 18 հա միջակայքի հողակտորների համար՝ գոնի երկարությունը 20-ից մինչև 600 մ: Հաշվարկների կատարման համար հողակտորի կոնֆիգուրացիան ընդունվել է ուղղանկյունաձև (1x2 հարաբերակցությամբ): Ուսումնասիրությունների և հաշվարկների հիման վրա գնահատվել է տվյալ արտադրական գործընթացների համար աշխատանքային ժամանակի օգտագործման գործակիցը՝ նշված միջակայքում գտնվող հողակտորների համար (ելնելով շրջադարձի երկարությունից, թվաքանակից, ինչպես նաև նախապատրաստական ու այլ գործընթացների վրա ծախսվող ժամանակի գնահատականներից): Մեքենայական և բերքահավաքի ագրեգատների արտադրողականության կախվածությունը մշակվող հողակտորի չափերից ներկայացված է գրաֆիկորեն (2-րդ և 3-րդ գծապատկեր)

---

<sup>42</sup> Ա.Յ. Համբարձումյան, Հ.Ս. Ծպնեցյան Գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքների գնահատումը, Երևան, Ասողիկ- 2001թ.- էջ17-19



Գծապատկեր 2: Վարի ագրեգատի (ՂՏ-75, ՊԼՆ-4-35) արտադրողականության կախվածությունը մշակվող հողամասի չափերից<sup>43</sup>



Գծապատկեր 3: Հացահատիկային կոմբայնի ((ՍԿ-5) «Նիվա») արտադրողականության կախվածությունը մշակվող հողամասի չափերից<sup>44</sup>

<sup>43</sup> Ծպնեցյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսության պայմաններում: Երևան: Հեղինակային հրատարակություն, 2005թ.-էջ 99

<sup>44</sup> Առյճ տեղում, էջ 100

Ներկայացված գրաֆիկներից ակնառու է, որ մեքենայական ագրեգատների արդյունավետությունը մեծապես կախված է մշակվող և բերքահավաքի ենթակա հողակտորի չափերից: Այսպես՝ հաշվարկները ցույց են տալիս, որ հանրապետության գյուղացիական տնտեսություններին պատկանող վարելահողերի և մշակվող հացահատիկային մշակաբույսերի տարածքների միջին չափը համապատասխանաբար կազմում է 1.1 և 0.6 հա:

Հաշվի առնելով այն, որ նշված տարածքը կարող է բաժանվել առնվազն 2 հողակտորի, ուստի գյուղացիական տնտեսությունների կողմից մշակվող հողակտորների միջին չափը կկազմի համապատասխանաբար 0.55 և 0.3 հա, որտեղ ագրեգատների արտադրողականությունը, հետևաբար նաև արդյունավետությունը առավել ցածր է:

Մեքենաօգտագործման ներկա վիճակից ակնհայտ է հողերի մշակությունը համատեղ օգտագործման սկզբունքով կազմակերպելու խնդրի հրատապությունը և այդ ուղղությամբ համապատասխան մեխանիզմների, միջոցառումների մշակման և ներդրման անհրաժեշտությունը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների տեխնիկական միջոցներով ապահովվածության ցածր մակարդակի հետևանքով արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառում մշտապես ծագում են դժվարություններ և ոչ հավասար պայմաններ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական տեխնիկական տնօրինող սեփականատերերի միջև: Տեխնիկական միջոցների ցածր արտադրողականությունը ևս բացասական ներգործություն է ունենում գյուղատնտեսական արտադրության արդյունավետության վրա:

Տվյալ բաժնում կատարված ուսումնասիրությունները ելակետ են հանդիսացել գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի հիմնախնդիրների բացահայտման համար<sup>45</sup>:

---

<sup>45</sup> Երիզարյան Լ.Մ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների առանձնահատկությունները: Ֆինանսներ և էկոնոմիկա, 7 (157), հունիս 2013.-էջ 16-20

## **ԳԼՈՒԽ 2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

### **2.1. ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի վերլուծությունը**

Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների գործընթացն իրականացվում է սարքին վիճակում գտնվող առկա 11327 տրակտորների, 3351 տրակտորային գութանների, 1609 տրակտորային շարքացանների, 1826 կուլտիվատորների, 1054 հացահատիկահավաք կոմբայնների, 230 կերահավաք կոմբայնների և այլ մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի միջոցով: Արտադրատեխնիկական սպասարկումների բացարձակ գերակշռող մասն իրականացվում է առանձին տեխնիկայի սեփականատեր հանդիսացող անձանց և գյուղացիական տնտեսությունների միջև փոխադարձ պայմանավորվածության հիման վրա: Սպասարկումները, որպես կանոն, հիմնականում իրականացվում են չհամակարգված, չեն գործում պայմանագրային հարաբերությունները և գոյություն չունեն անգամ աշխատանքների կազմակերպման պարզեցված գրաֆիկներ: Տվյալ պայմաններում տեխնիկայի սեփականատերերը հանդես են գալիս ինչպես արտադրատեխնիկական սպասարկումների սակագների, այնպես էլ դրանց կատարման ժամկետների և այլ պայմանների թելադրող:

Ստեղծված վիճակի արդյունքում հանրապետության տարբեր մարզերում և տարածաշրջաններում ձևավորվում են գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների սպասարկման տարբեր մակարդակներ ունեցող սակագներ, որոնք էականորեն տարբերվում են միմյանցից:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետության մարզերում մեքենայացված աշխատանքների սակագներն էականորեն տարբերվում են միմյանցից: Հանրապետության մարզերում առանձին դիտարկումները և հարցումները հնարավորություն են տվել բացահայտել գյուղատնտեսությունում առանձին մեքենայացված աշխատանքների ձևավորված միջին սակագները և գնահատել դրանց տարբերությունները: Դիտարկումների արդյունքերը ներկայացված են 2.1.1 աղյուսակում:

**Մեքենայացված աշխատանքների 1 հա-ի հաշվով սակագների ձևավորված միջին տվյալները 2013 թվականի ուսումնասիրություններով, ըստ ՀՀ մարզերի<sup>46</sup>**

(հազ. դրամ)

Մեքենայացված աշխատանքների տեսակը	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Վար	25.0	35.0	37.5	30.0	30.0	25.0	28.0	20.0	25.0	27.0
Ցանք	15.0	20.0	20.0	15.0	15.0	12.0	13.0	10.0	12.0	15.0
Կուլտիվացիա	15.5	25.0	20.0	15.0	12.0	10.0	15.0	10.0	12.0	15.0
Հունձ	16.0	30.0	13.0	20.0	15.0	15.0	16.0	10.0	15.0	20.0
Սրսկում	12.5	17.5	17.5	7.0	7.5	15.0	6.5	-	10.0	22.0
Հացահատիկի բերքահավաք	25.0	25.5	27.5	27.5	24.0	28.0	25.0	23.5	26.0	24.0

Ներկայացված տվյալներից ակնհայտ է, որ վարի համար ձևավորված սակագինը 1 հա-ի համար տատանվում է 20.0-37.5 հազ. դրամի սահմաններում, այն հատկապես բարձր մակարդակ ունի ՀՀ Արմավիրի, Արարատի մարզերում, ցածր մակարդակ է գրանցվել ՀՀ Սյունիքի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերում: Ցանքի աշխատանքների համար 1 հա-ի սակագինը տատանվում է 12-20 հազ. դրամի սահմաններում: Այն հատկապես բարձր է ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում, առավել ցածր մակարդակ է գրանցված ՀՀ Սյունիքի, Կոտայքի, Վայոց ձորի և Շիրակի մարզերում: Ինչ վերաբերում է կուլտիվացիայի աշխատանքների սակագնին, ապա այն տատանվում է համեմատաբար մեծ սահմաններում՝ 10.0-25.0 հազ. դրամ: Կուլտիվացիայի աշխատանքների բարձր սակագին գոյություն ունի ՀՀ Արարատի, այնուհետև Արմավիրի մարզերում: Հունձի աշխատանքների սակագները տատանվում են առավել մեծ սահմաններում՝ 10.0-30.0 հազ. դրամ, այն հատկապես բարձր մակարդակ ունի ՀՀ Արարատի մարզում, առավել ցածր մակարդակ է գրանցվել ՀՀ Սյունիքի մարզում: Սրսկման արտադրական գործընթացի սակագները նույնպես տատանվում են մեծ միջակայքում՝ 6.5-22.0 հազ. դրամի սահմաններում: Ըստ ուսումնասիրությունների, Արարատյան դաշտավայրում պտղատու այգիներում սրսկման սակագինը տատանվում է 10.0-15.0 հազ. դրամի սահմաններում, իսկ խաղողի այգիների համար՝ 20.0-25.0 հազ. դրամի սահմաններում: Հացահատիկի կոմբայնային բերքահավաքի սակագինը տատանվում է 23.5-28.0 հազ. դրամի սահ-

<sup>46</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ մարզերում կատարված ուսումնասիրությունների հիման վրա

մաններում: Սակագնի առավել բարձր մակարդակ գոյություն ունի ՀՀ կոտայքի մարզում, ամենացածրը՝ ՀՀ Սյունիքի մարզում:

Ըստ ՀՀ մարզերի գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների սակագների նման տատանումները, բացի հողի մեխանիկական վիճակից, տեղանքի բարձրությունից կախված վառելանյութի համեմատաբար մեծ ծախսերից, պայմանավորված են մի շարք այլ գործոններով, որոնք հիմնականում հետևյալն են՝

- գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության մակարդակը,
- սարքինության մակարդակը,
- գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների իրականացման պահանջարկը,
- մշակվող հողատեսքերի չափերը,
- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և բազմամյա տնկարկների տարածքները,
- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների կառուցվածքը,
- հացահատիկային և կերային մշակաբույսերի բերքատվության մակարդակը:

Ինչպես նշվել էր, արտադրատեխնիկական սպասարկումները գյուղատնտեսությունում հիմնականում իրականացվում են գյուղատնտեսական տեխնիկայի մասնավոր սեփականատերերի կողմից: Նշվածի հետ մեկտեղ որոշակի ծավալներով արտադրատեխնիկական սպասարկումներ են իրականացնում «Ագրոսպասարկում» և «Բերրիություն» բաժնետիրական ընկերությունների սեփականաշնորհումից հետո իրավահաջորդ հանդիսացող մասնավորեցված կազմակերպությունները: Սակայն պետք է նշել, որ դրանց բացարձակ գերակշռող մասը փոխել և դադարեցրել են գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների գործունեությունը:

Ներկայումս արտադրատեխնիկական սպասարկումների ուղղվածություն ունեն 13 ընկերություններ, որոնց ցանկը և կարգավիճակը ներկայացվում է 2.1.2 աղյուսակում:



**Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումներով զբաղվող ընկերությունների ցանկը<sup>47</sup>**

<b>ՀՀ մարզերը</b>	<b>Անվանումը</b>	<b>Գտնվելու վայրը</b>
Արմավիր	Արմավիրի «Ագրոսպասարկում» ԲԲԸ	քաղաք Արմավիր
	Վաղարշապատի «Ագրոսպասարկում» ԲԲԸ	քաղաք Էջմիածին
Գեղարքունիք	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Սևանի շրջանային միավորում» ԲԲԸ	քաղաք Սևան
	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Վարդենիսի շրջանային միավորում» ԲԲԸ	քաղաք Վարդենիս
Լոռի	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Սպիտակի շրջանային միավորում» ԲԲԸ	քաղաք Սպիտակ
Կոտայք	Նաիրիի «Բերրիություն» ՍՊԸ	քաղաք Եղվարդ
	Կոտայքի «Բերրիություն» ԲԲԸ	քաղաք Աբովյան
	«Նուռնուս» ՍՊԸ	քաղաք Բյուրեղավան
Շիրակ	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Աշոցքի շրջանային միավորում» ԲԲԸ	քաղաք Աշոցք
	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Ախուրյանի շրջանային միավորում» ԲԲԸ	քաղաք Ախուրյան
Սյունիք	Կապանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ	քաղաք Կապան
Վայոց ձոր	«Վայք Գրուպ» ՓԲԸ	քաղաք Վայք
Տավուշ	«Ագրոսպասարկում» ԱՄ-ի Իջևանի շրջանային միավորում» ԲԲԸ	քաղաք Իջևան

Պետք է նշել, որ այդ ընկերությունների գերակշռող մասը ներկայումս տեխնիկական միջոցների չի տնօրինում և գործունեություն չի իրականացնում: Մասնավորապես՝ նշված ընկերություններից տեխնիկա տնօրինում և օգտագործում են հետևյալները՝ Նաիրիի «Բերրիություն» ՍՊԸ-ն տնօրինում է 30 միավոր գյուղատնտեսական տրակտորներ, «Նուռնուս» ՍՊԸ-ն՝ 3 միավոր տրակտոր և 3 միավոր հացահատիկահավաք կոմբայն, «Ագրոսպասարկում» ԱՄ-ի Աշոցքի շրջանային միավորում» ԲԲԸ-ն՝ 2 միավոր տրակտոր և 1 էքսկավատոր, Կոտայքի «Բերրիություն» ԲԲԸ-ն՝ 10 միավոր տրակտոր և 2 հացահատիկահավաք կոմբայն, «Վայք Գրուպ» ՓԲԸ-ն՝ 10 միավոր տրակ-

<sup>47</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ ՀՀ մարզերում կատարված ուսումնասիրությունների հիման վրա


տոր, 8 միավոր էքսկավատոր, 3 միավոր հացահատիկահավաք կոմբայն, «Ագրոսպասարկում» ԱՄ-ի Իջևանի շրջանային միավորում» ԲԲԸ-ն՝ 3 միավոր տրակտոր և 3 միավոր կոմբայն, Կապանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ-ն՝ 2 տրակտոր և 1 կոմբայն:

Այսպիսով, մասնագիտացված կազակերպությունները հիմնականում տնօրինում և օգտագործում են շուրջ 70 միավոր տրակտոր և 12 միավոր հացահատիկահավաք կոմբայն: Վերջինս համապատասխանաբար կազմում է հանրապետության տրակտորային հավաքակազմի 0.5 և կոմբայնների 0.9%-ը: Նշվածը կրկին վկայում է, որ հանրապետության գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումները գլխավորապես իրականացվում են տեխնիկա տնօրինող մասնավոր տնտեսավարողների կողմից:

Արտադրատեխնիկական սպասարկումների ոչ մեծ ծավալներ իրականացնում են մասնագիտացված գյուղատնտեսական կոոպերատիվները, մասնավորապես՝ սպառողական կոոպերատիվները և համատեղ գործունեության պայմանագրով միավորված տնտեսավարող սուբյեկտները՝ իրենց անդամների տնտեսությունների համար:

Գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումները գլխավորապես իրականացվում են առանց պայմանագրային հարաբերություններ ձևավորելու, այն իրականացվում է փոխադարձ պայմանավորվածությունների հիման վրա, որի դեպքում հաճախ տեխնիկայի սեփականատերերը հանդես են գալիս ինչպես գները, այնպես էլ աշխատանքների կատարման պայմանները թելադրող: Հետևանքը լինում է այն, որ խախտվում է աշխատանքների կատարման ագրոտեխնիկական ժամկետները և գյուղատնտեսությունում տնտեսավարողներն ունենում են զգալի կորուստներ՝ կապված ինչպես զարման գյուղատնտեսական, այնպես էլ բերքահավաքի աշխատանքների ժամկետների ձգձգման հետ:

Գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների գործընթացի սխեմատիկ պատկերը ներկայացված է 4-րդ գծապատկերում:



Գծապատկեր 4. ՀՀ գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների կազմակերպման սխեման

Ըստ ներկայացված սխեմայի՝ արտադրատեխնիկական սպասարկումները գյուղատնտեսությունում իրականացվում են հետևյալ մեխանիզմով: Սխեմայում առանձնացված են գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող հետևյալ միավորները՝ տեխնիկայի սեփականատեր հանդիսացող մասնավոր տնտեսավարողներ, արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող մասնագիտացված ընկերություններ, արտադրատեխնիկական սպասարկումների գործընթացում մասնագիտացված կոոպերատիվներ, համատեղ գործունեության պայմանագրով միավորված տնտեսավարող սուբյեկտներ: Սխեմայում առանձնացված է արտադրատեխնիկական սպասարկումների գործընթացը:

Ըստ ներկայացված սխեմայի՝ պայմանականորեն նշանակված և թվով գյուղացիական տնտեսությունները փոխհարաբերությունների մեջ են մտնում արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացվող տնտեսավարողների հետ: Սպասարկումների համար պայմանավորվածությունը լինում է բացարձակապես բանավոր, պայմանավորվածության առարկա են՝ կոնկրետ աշխատանքի տեսակը, սակագինը, սակագնի վճարման ձևը (հիմնականում դրամային, երբեմն դիզելային վառելանյութի հետ զուգորդված և որոշ դեպքերում՝ բնամթերքով փոխատուցմամբ): Մասնագիտացված կոոպերատիվները սպասարկումներն իրականացնում են ինչպես կոոպերատիվի անդամների կարիքների, այնպես էլ այլ գյուղացիական տնտեսությունների համար: Տեխնիկա տնօրինող համատեղ գործունեության պայմանագրով միավորված տնտեսավարող սուբյեկտները սպասարկումները հիմնականում իրականացնում են իրենց անդամների համար: Սպառողական կոոպերատիվները գլխավորապես արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնում են իրենց անդամների համար: Գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության պատճառով արտադրատեխնիկական սպասարկումների համար վճարումները երբեմն կատարվում են տարաժամկետ, ինչպես նաև բնամթերային ձևով, որը հնարավորություն է ստեղծում տեխնիկայի սեփականատերերի կողմից պայմանների՝ սակագնի, աշխատանքի կատարման ժամկետների թելադրման համար:

Հարկ է նշել, որ գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությունը հանգեցնում է մեքենայացված աշխատանքների ծախսերի ավելացմանը (հատկապես դիզելային վառելանյութի), սակագների բարձրացմանը, ինչպես նաև բերքահավաքի ժամանակ մեծ կորուստների: ՀՀ-ում անիվավոր և թրթուրավոր տրակտորների շահագործման ծախ-

սերի, արտադրողականության և վառելանյութի ծախսի փոփոխությունն ըստ շահագործման ժամկետների ներկայացվում է 2.1.3 աղյուսակում:

Աղյուսակ 2.1.3

**ՀՀ-ում անիվավոր և թրթուրավոր տրակտորների շահագործման ծախսերի, արտադրողականության և վառելանյութի ծախսի փոփոխությունն ըստ շահագործման ժամկետների<sup>48</sup>**

Խմբերը	Շահագործման ժամկետները, տարի	Տրակտորների թիվը, տարի	Տեսակարար կշիռը, %	Շահագործման ծախսերի փոփոխությունը, %	Ժամային արտադրողականության փոփոխությունը, %	1 էտալոնային հեկտարի հաշվով վառելիքի ծախսը, կգ
I	1-10	830	5.6	100	100	18
II	11-20	2243	15.2	115	89	21
III	21-25	4558	31	122	80	25
IV	26-30	4830	32.8	148	71	28
V	30-ից ավելի	2271	15.4	155	60	30
<b>Ընդամենը</b>		<b>14732</b>	<b>100</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>24,4</b>

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ շահագործման ծախսերը՝ տեխնիկայի շահագործման ժամկետներով պայմանավորված, ավելանում են ավելի քան 50 %-ով, արտադրողականությունը կրճատվում է 40 %-ով, իսկ վառելանյութի ծախսը 1 էտալոնային հա-ի հաշվով՝ գրեթե 67.0 %-ով:

Գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բնորոշման ցուցանիշներից է համարվում գյուղատնտեսական համապատասխան մեքենաներով գյուղատնտեսական տրակտորների ապահովվածության մակարդակը (ապահովվածության գործակիցը): Վերջինիս վերաբերյալ ամփոփ տվյալները ներկայացվում են 2.1.4 աղյուսակում:

<sup>48</sup> Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգ (ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի N43 արձանագրային որոշում, հավելված 3)

**ՀՀ-ում գյուղատնտեսական համապատասխան մեքենաներով գյուղատնտեսական տրակտորների ապահովվածության մակարդակը 2014թ. հունվարի 1-ի տվյալներով (հաշվարկները կատարվել են սարքին տեխնիկայի համար)<sup>49</sup>**

	Տրակտորային գույքաներով տրակտորների ապահովվածության գործակիցը	Կուլտիվատորներով տրակտորների ապահովվածության գործակիցը	Տրակտորային շարքացաններով տրակտորների ապահովվածության գործակիցը	Տրակտորային գույքաներով թրթուրավոր տրակտորների ապահովվածության գործակիցը	Կուլտիվատորներով անիվավոր տրակտորների ապահովվածության գործակիցը	Հավաքիչ-մանլիչներով անիվավոր տրակտորների ապահովվածության գործակիցը	Տրակտորային շարքացաններով անիվավոր տրակտորների ապահովվածության գործակիցը
Արագածոտն	0.32	0.21	0.19	0.98	0.33	0.21	0.30
Արարատ	0.35	0.25	0.15	1.06	0.38	0.13	0.22
Արմավիր	0.34	0.24	0.12	1.01	0.32	0.10	0.18
Գեղարքունիք	0.18	0.08	0.14	0.58	0.12	0.16	0.20
Լոռի	0.26	0.13	0.09	0.80	0.20	0.12	0.14
Կոտայք	0.35	0.15	0.15	1.14	0.23	0.29	0.25
Շիրակ	0.45	0.29	0.27	1.35	0.42	0.22	0.41
Սյունիք	0.37	0.13	0.20	1.15	0.18	0.36	0.31
Վայոց Ձոր	0.20	0.11	0.02	0.55	0.16	0.17	0.02
Տավուշ	0.35	0.11	0.11	0.99	0.17	0.10	0.16
Ք. Երևան	0.05	0.02	0.01	0.18	0.03	0.01	0.02
Ընդամենը	0.29	0.16	0.14	0.90	0.24	0.17	0.21

\*Հաշվարկների համար հիմք են ընդունվել ՀՀ ազգային վիճակագրության ծառայության տվյալները

<sup>49</sup> Կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ վիճակագրության տվյալները

Աղյուսակում ներկայացված գործակիցները ցույց են տալիս տրակտորների հետ ագրեգատավորվող հիմնական գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության մակարդակը: Հաշվարկները կատարվել են սարքին վիճակում գտնվող տեխնիկական հավաքակազմի համար: Հաշվի առնելով Երևան քաղաքում գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման այլ պայմանները՝ վերջինիս ցուցանիշների վերլուծությանը չենք անրադառնա:

Տրակտորային գութաններով տրակտորների ապահովվածության գործակիցը հանրապետության մարզերում տատանվում է 0.18-0.45-ի սահմաններում: Ապահովվածության բարձր մակարդակ գոյություն ունի ՀՀ Շիրակի, Սյունիքի մարզերում: Ըստ մարզերի նշված ցուցանիշներն էականորեն տարբերվում են: Վերջինս էլ որոշակիորեն պայմանավորում է նաև վարի աշխատանքների սակագնի փոփոխությունը՝ ըստ մարզերի:

Տրակտորային գութաններով թրթուրավոր տրակտորների ապահովվածության մակարդակը հանրապետության մարզերում տատանվում է 0.55-1.35-ի սահմաններում: Ապահովվածության առավել բարձր մակարդակ է գրանցված Շիրակի մարզում, իսկ առավել ցածր մակարդակ գրանցված է Վայոց ձորի մարզում:

Կուլտիվատորներով տրակտորների ապահովվածության գործակիցը հանրապետության մարզերում տատանվում է 0.08-0.29-ի սահմաններում: Ապահովվածության համեմատաբար բարձր մակարդակ գոյություն ունի Շիրակի, Արարատի, Արագածոտնի և Արմավիրի մարզերում: Համեմատաբար ցածր մակարդակ է գրանցված Գեղարքունիքի մարզում:

Տրակտորային շարքացաններով տրակտորների ապահովվածության գործակիցն ըստ հանրապետության մարզերի տատանվում է 0.02-0.27-ի սահմաններում: Ապահովվածության առավել բարձր մակարդակ գոյություն ունի Շիրակի մարզում, իսկ նվազագույն մակարդակ գոյություն ունի Վայոց Ձորի մարզում:

Կուլտիվատորներով անհիվավոր տրակտորների ապահովվածության մակարդակը տատանվում է 0.12-ից 0.42-ի սահմաններում:

Հավաքիչ մանլիչներով անհիվավոր տրակտորների ապահովվածության մակարդակը հանրապետության մարզերում տատանվում է 0.1-0.36-ի սահմաններում:

Ինչ վերաբերում է ընդհանուր առմամբ տրակտորային շարքացաններով անհիվավոր տրակտորների ապահովվածությանը, ապա այն տատանվում է 0.02-0.3-ի սահ-

մաններում: Վերջիններս վկայում են նշված տեխնիկական միջոցներով ապահովվածության անհավասար մակարդակի մասին:

Ներկայացված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսական տեխնիկայով տրակտորների ապահովվածության համեմատաբար բարձր մակարդակ գոյություն ունի ՀՀ Շիրակի, Սյունիքի, Արարատի և Արմավիրի մարզերում:

Ագրարային ոլորտում բարեփոխումների արդյունքում շուկայական հարաբերությունների ներդրումն արմատական փոփոխությունների հանգեցրեց գյուղատնտեսության նյութատեխնիկական ապահովման բնագավառում և վերջիններիս իրականացման մեխանիզմների առումով: Նյութատեխնիկական ապահովման կենտրոնացված պետական համակարգին փոխարինեց մասնավոր տնտեսավարողների և բաժնետիրական ընկերությունների կողմից իրականացվող նյութատեխնիկական ապահովումը, որը կրում է չկանոնակարգված բնույթ<sup>50</sup>:

Նյութատեխնիկական մատակարարումների բնագավառում կարևոր է համարվում գյուղատնտեսության՝ տեխնիկական միջոցներով մատակարարումը և այդ բնագավառում կիրառվող մեխանիզմները: Գյուղատնտեսության տեխնիկական միջոցների սարքինության, տարիքային կազմի ուսումնասիրությունը վկայում է, որ այս բնագավառում վիճակը մեղմ ասած վատթար է: Այդ են վկայում նաև այս բնագավառում տարբեր ուսումնասիրությունների արդյունքները, մասնավորապես՝ Հ. Ծպնեցյանը նշում է, որ տեխնիկական միջոցների համալրումը և նորացումը իրականացվում է չափազանց դանդաղ տեմպերով, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով. մասնավորապես՝

- գյուղացիական տնտեսությունների ցածր վճարունակության պատճառով սեփական հնարավորություններով տեխնիկական միջոցների ձեռքբերման անհնարինությունը,
- դրամաշնորհային ծրագրերով հանրապետություն ներկրվող տեխնիկական միջոցների փոքր խմբաքանակները (տարեկան 50-100 միավոր),
- տեխնիկական միջոցների բարձր գները, գյուղատնտեսական մթերքների գների աճի նկատմամբ արդյունաբերական ապրանքների գների առաջանցիկ աճը,

<sup>50</sup> Ծպնեցյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսության պայմաններում: Երևան: Հեղինակային հրատարակություն, 2005թ.-էջ 53



- տեխնիկական միջոցների մատակարարման մատչելի մեխանիզմների (լիզինգ, ապրանքային վարկեր) կիրառման գրեթե բացակայությունը<sup>51</sup>:

Գյուղատնտեսական տեխնիկայի պահեստամասերի, նավթամթերքի և այլ նյութական ռեսուրսների մատակարարումը կրում է չհամակարգված բնույթ: Այս գործընթացը հիմնականում իրականացվում է մասնավոր տնտեսավարողների կողմից: Բնագավառում գրեթե չեն գործում գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների միջև պայմանագրային հարաբերությունները, այդ ռեսուրսները ձեռք են բերվում առքուվաճառքի ժամանակ ձևավորվող գներով, իսկ այդ պարագայում մատակարարները սովորաբար հանդես են գալիս գները թելադրողների դերում:

Պայմանավորված գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների ֆինանսական սուղ հնարավորությունների և փոխադրումների դժվարություններով՝ պարարտանյութերի օգտագործումը զգալիորեն նվազել է: Հանրապետության գյուղատնտեսության տարեկան պահանջարկը ազոտական պարարտանյութերի նկատմամբ գնահատվում է ավելի քան 60-70 հազ. տոննա, սակայն ներկայումս բավարարվում է պահանջարկի միայն 50-60%-ը: Կալիումական և ֆոսֆորական պարարտանյութեր գրեթե չեն ներմուծվում, իսկ դա իր բացասական ներգործությունն է ունեցել հողի բերրիության և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության վրա:

Պարարտանյութերի, ինչպես նաև թունաքիմիկատների ներմուծումն իրականացվում է մասնավոր տնտեսավարողների կողմից:

Պարարտանյութերի օգտագործման ծավալները չեն համապատասխանում ագրոտեխնիկական պահանջներով սահմանված նորմերին: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ պարարտանյութերի օգտագործումը տնտեսություններում նկատելիորեն բևեռացված է:

Հանքային պարարտանյութերի ներմուծման ծավալների մասին պատկերացում է տալիս 2.1.5 աղյուսակում ներկայացված տվյալները:

---

<sup>51</sup> Ծանեցյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսության պայմաններում: Երևան: Հեղինակային հրատարակություն, 2005թ.-էջ 53-54

**Հայաստանի Հանրապետություն հանքային պարարտանյութերի ներմուծման  
ծավալները 2000-2013թթ.<sup>52</sup>**

(տոննա)

Տարիները	Ներմուծման ծավալները
2000	31199.4
2001	27648.6
2002	41249.0
2003	39391.6
2004	48670.5
2005	46128.9
2006	58393.1
2007	27226.6
2008	24654.9
2009	40134.9
2010	31325.0
2011	36832.3
2012	59670.1
2013	60654.5

2012թ. պարարտանյութերի ներմուծման ծավալների կտրուկ ավելացումը պայմանավորված է տվյալ տարում 2 փուլով՝ զարմանը՝ 25.0 հազ. տոննա և աշնանը՝ 5.7 հազ. տոննա, ամոնիակային սելիտրայի ներմուծման պետական աջակցության ծրագրով, որի արդյունքում պարարտանյութը գյուղական համայնքներում մատակարարվել է շուկայականից զգալիորեն ցածր գներով (1 պարկը 6000 դրամ՝ ներառյալ փոխադրման ծախսերը): Ծրագիրը շարունակվել է նաև հետագա տարիներին:

Պարարտանյութերը հող մտցնելու (ներմուծման) համար նախատեսված մեքենաները գտնվում են տեխնիկական պատրաստության ցածր մակարդակի վրա, որի հետևանքով զգալիորեն ցածր է դրանց օգտագործման արդյունավետությունը: Գյուղացիական տնտեսությունների հիմնական մասը պարարտանյութերը հող է մտցնում առանց համապատասխան մեքենաներ օգտագործելու:

Գյուղացիական տնտեսությունները և գյուղատնտեսությունում այլ տնտեսավարողները բավարար չափերով իրազեկված չեն ցանքաշրջանառության արդյունքների և առավելությունների մասին: Համապատասխան խորհրդատվական ծառայությունները դեռևս անհրաժեշտ աշխատանք չեն տանում ցանքաշրջանառության առավելու-

<sup>52</sup> Հիմք է ընդունվել <http://www.armstat.am/am/> տվյալները

թյունների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցման, մասնավորապես՝ ցանքաշրջանառության և պարարտանյութերի միաժամանակյա կիրառման հնարավորությունների ու դրանց արդյունքների ուղղությամբ:

Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությունը հիմնականում իրականացվում է ներմուծվող թունանյութերի միջոցով: Բույսերի պաշտպանության միջոցների գրանցումը, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներմուծման կարգը և այլ հարաբերությունները կարգավորվում են «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքով<sup>53</sup>, որը ընդունվել է 2006թ., սակայն բազմաթիվ փոփոխություններ է եղել հետագա տարիներին:

Բույսերի պաշտպանության միջոցները գլխավորապես իրականացվում են բուսաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների կամ մասնագիտացված սպասարկումներ իրականացնող տեխնիկայի սեփականատերերի կողմից:

Բույսերի վնասատուների և առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարի որոշ միջոցառումներ իրականացվում են կենտրոնացված կարգով՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին, սակայն աշխատանքների ծավալը՝ կապված ընդգրկման գոտիների հետ, դեռևս բավարար չէ: Պետական ծրագրերով աշխատանքները հիմնականում ընդգրկում են մկնանման կրծողների դեմ պայքարը, երբեմն՝ մորեխների և ծղրիղների դեմ պայքարը, ինչպես նաև պայքարը անտառի վնասատուների դեմ:

Բնագավառի զարգացման կարևորագույն խնդիրներից է սպասարկումների ոլորտում մրցակցային միջավայրի ստեղծմանն ուղղված օրենսդրական դաշտի ձևավորումը: Քանի որ թունանյութերը, բուժանյութերը, էներգակիրները, պարարտանյութերը և գյուղտեխնիկան հիմնականում ներմուծվում են արտերկրից, հարկավոր է վարել հարկային և մաքսային ճկուն քաղաքականություն՝ ելակետ ունենալով գյուղացիական տնտեսությունների համար ինչպես սպասարկումների մատչելիությունը, այնպես էլ ներքին շուկայի պաշտպանության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը:

<sup>53</sup> «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-209-Ն

## 2.2. ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացման տնտեսագիտական հիմնախնդիրները

Ագրոպարենային համակարգի կենսագործունեությունը և զարգացումը անհնարին է առանց արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի բնականոն գործունեության և շուկայի պահանջներին համապատասխան դրանց կատարելագործան, որակական ու քանակական առումով մատուցվող ծառայությունների ընդլայնման:

Ագրարային ոլորտի արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի ձեռնարկությունների մասնավորեցումը և ապապետականացումը սկսվել էր դեռևս 1992 թվականից, մինչև 2005-2006թթ. դեռևս գործում էին 34% պետական բաժնեմաս ունեցող ընկերություններ: Նշված ժամանակահատվածից հետո արտադրատեխնիկական սպասարկումների գործառույթ ունեցող ընկերություններն անբողջությամբ մասնավորեցվեցին:

Ներկայումս գյուղացիական տնտեսություններում բարձր է ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը, գյուղատնտեսությունում առաջնահերթ ռեսուրսների՝ պարարտանյութի, պայքարի քիմիական միջոցների օգտագործման ծավալները զգալիորեն շեղված են ագրոտեխնիկական նորմերով պահանջվող ծավալներից:

Գյուղատնտեսական տեխնիկայի քանակը՝ գյուղատնտեսությունում իրականացված բարեփոխումների սկզբին նախորդող ժամանակահատվածի հետ համեմատած, մեծ փոփոխություններ չի կրել: Տրակտորային հավաքակազմի ներկայիս քանակը զիջում է 1986թ. համապատասխան ցուցանիշներին 14-15%-ով: Առկա մեքենայական հավաքակազմը իր հզորություններով (մակնիշային կազմով) չի համապատասխանում տնտեսությունների չափերին:

Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման նորմատիվային ժամկետների գերազանցման, նորոգումների ու տեխնիկական սպասարկումների գործուն համակարգի բացակայության պայմաններում գնալով նվազում է դրանց սարքինության աստիճանը: Իրատեսական գնահատումներով այս ցուցանիշը, միջին հաշվով, կազմում է 60-70%, սակայն, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով այն զգալիորեն բարձր է: Այսպես՝ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, տրակտորների համար այն կազմում է 78.9, բեռնատար ավտոմեքենաների համար՝ 75.6, հացահատիկահավաք

կոմբայնների համար՝ 74.3, տրակտորային շարքացանների համար՝ 85.7, տրակտորային խոտհնձիչներինը՝ 84.4, գութաններինը՝ 88.3, կուլտիվատորներինը՝ 84.5%<sup>54</sup>:

Ինչպես նշել էինք, մեքենայացված աշխատանքներով սպասարկումները գյուղատնտեսությունում գլխավորապես իրականացվում են տեխնիկայի սեփականատեր հանդիսացող մասնավոր տնտեսավարողների հետ գյուղացիական տնտեսությունների ազատ պայմանագրային փոխհարաբերություններով:

Տնտեսությունների ֆինանսական ռեսուրսների սղության, տեխնիկական միջոցներով դրանց անհամաչափ ապահովվածության հետևանքով դաշտային մեքենայացված աշխատանքները հաճախ չեն կատարվում ագրոտեխնիկական կանոններին համապատասխան սահմանված ժամկետներում և այդ աշխատանքները որակի առումով բարելավման անհրաժեշտություն ունեն:

Գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման բարելավումը պահանջում է տեխնիկաօգտագործման ձևերի կատարելագործման միջոցով մեքենայացված աշխատանքների արդյունավետության բարձրացում:

Տեխնիկայի սեփականատերերը դժվարությունների առաջ են կանգնում նաև պահեստամասեր ձեռքբերելիս:

Տեխնիկական հագեցվածության համակարգը կատարելագործման անհրաժեշտություն ունի: Այդ բնագավառում որոշակի ծրագրեր մինչև 2010թ. եղել են դրամաշնորհների (Ճապոնիա, Չինաստան) շնորհիվ՝ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման ուղղությամբ:

ՀՀ առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների կողմից լիզինգային հիմունքներով գյուղտեխնիկա հատկացնելու գործարքները դեռևս չափազանց քիչ են: Դեռևս չեն շրջանառվում արտերկրից օգտագործված, սակայն աշխատունակ և էժան տեխնիկայի ներմուծման հնարավորությունները:

Հողի սեփականաշնորհումը չի զուգորդվել մեքենայական հավաքակայանների լիարժեք մասնավորեցմամբ: Այդ իմաստով բնագավառում մասնավոր հատվածի կայացումն ընթացել է առավել դանդաղ տեմպերով:

Տեխնիկական ապահովվածության անհամաչափության պատճառով ըստ տարածաշրջանների ներկայումս տեխնիկական միջոցները վարի, ցանքի և բերքահավաքի

<sup>54</sup> Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության մասին՝ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, վիճակագրական տեղեկագիր: Երևան, 2015թ.-էջ 4-9

ժամանակ տեղափոխվում են լեռնային և նախալեռնային գոտիներից ցածրադիր գոտիներ և, այնուհետև՝ հակառակ ուղղությամբ: Նշվածի հետ մեկտեղ դեռևս բավարար չափով լուծում չեն ստացել խաղողի, կարտոֆիլի, բանջարեղենի և կերային մշակաբույսերի մշակության ու բերքահավաքի մեքենայացման խնդիրները:

Գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությունում տնտեսավարող սուբյեկտների գերակշռող մասի փոքր չափերի հողաբաժինների հետևանքով անհրաժեշտություն է դառնում 30-50 ձիաուժ հզորության տրակտորների, օժանդակ (կցագործիքների), մասնավորապես՝ հերկող, ցանող, սրսկող, հնձող և այլ մեքենաների ու սարքավորումների ներմուծումը կամ հանրապետությունում դրանց արտադրության (հավաքման) կազմակերպումը:

Գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերի կողմից գյուղատնտեսության մեքենայացման ծառայությունները կանոնակարգված չեն:

Կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ մեքենաօգտագործման բնագավառի զարգացման բնագավառում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են՝

- գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարողների տեխնիկական միջոցների ապահովվածության ցածր մակարդակը, հողօգտագործման ներկայիս չափերի համար մեքենայական ագրեգատների ցածր արտադրողականությունը և արդյունավետությունը,
- տեխնիկական միջոցների ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր մակարդակը, տեխնիկական սպասարկումների և նորոգումների իրականացման պահանջների անտեսումը,
- տեխնիկական միջոցներով սպասարկումներ կատարող տնտեսավարողների միջև անհավասար մրցակցությունը, տեխնիկաօգտագործման արդյունավետ ձևերի կիրառման բացակայությունը, տեխնիկայի թերբեռնվածությունը և ծանրաբեռնվածության անհավասարությունը,
- տեխնիկական միջոցների ապահովման տարբեր դրամաշնորհային ծրագրերի և լիզինգային մեխանիզմների կիրառման դանդաղ ընթացքը,
- առկա տեխնիկայի առավել արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառման, մասնավորապես՝ բնագավառում կոոպերացման սկզբունքների և այլ արդյունավետ կազմակերպման ձևերի ներդրման դանդաղ ընթացքը,

- նորոգումների և տեխնիկական սպասարկումների բնագավառում, համայնքների մակարդակով, աշխատանքների կազմակերպման արդյունավետ մեխանիզմների կիրառման բացակայությունը:

Ինչպես նշել էինք, ագրարային ոլորտում շուկայական հարաբերությունների ներդրումը արմատական փոփոխություններ բերեց գյուղատնտեսության նյութատեխնիկական ապահովման բնագավառում:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեքենատրակտորային հավաքակայանի, անասնապահական ֆերմաների սարքավորումների տեխնիկական սպասարկումներն (նորոգումները և տեխնիկական խնամքը) իրականացվում են անմիջապես գյուղացիական տնտեսություններում, գյուղատնտեսությունում գործող առևտրային կազմակերպություններում, ինչպես նաև հանրապետության մարզերում գործող մասնագիտացված եզակի ընկերություններում՝ առևտրային հիմունքներով: Նշված աշխատանքների կազմակերպումը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ սեփական նորոգման և տեխնիկական խնամքի կարողությունների առկայությամբ և ամենակարևորներից մեկով՝ գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերի վճարունակությամբ:

Ներկայումս հանրապետությունում գոյություն ունեցող գյուղատնտեսական տեխնիկայի սպասարկումներ (նորոգումներ և տեխնիկական խնամք) իրականացնող «Ագրոսպասարկում» ՊՓԲԸ-ի, «Ագրոքիմիա» ՊՓԲԸ-ի համակարգում նախկինում գործող, ներկայումս մասնավորեցված տարածաշրջանային բաժնետիրական ընկերությունները, որոնք ունեին նորոգումների և տեխնիկական սպասարկումների արտադրական կարողություններ, ներկայումս գրեթե գործունեություն չեն իրականացնում: Փոքր ծավալներով գործունեություն է իրականացնում «Մասիսի տարածաշրջանի Ագրոսպասարկում» ԲԲԸ-ն: Սպասարկումները և նորոգումները գերազանցապես իրականացվում են տեխնիկայի սեփականատերերի և առանձին գործունեություն իրականացնող մասնագետների կողմից:

Կատարված ուսումնասիրություններից բացահայտվել են գյուղատնտեսության տեխնիկական միջոցների սպասարկումների (նորոգում և տեխնիկական խնամք) բնագավառում ծառացած շատ խնդիրներ, որոնց բնութագիրը ամփոփ ձևով հետևյալն է՝

- գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերի ցածր վճարունակության հետևանքով նրանց կողմից հիմնականում չեն պահպանվում նորոգումների և տեխ-

- նիկական սպասարկումների անցկացման սահմանված պահանջներն ինչպես պարբերականության, այնպես էլ աշխատանքների ամբողջական կատարման առումով,
- մի շարք գործոններով (սպասարկումների բարձր գներ, ցածր որակ, մասնագիտացված եզակի ընկերությունների հեռավորություն և այլն) պայմանավորված՝ գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերը հիմնականում չեն դիմում տեխնիկական սպասարկումների և նորոգումների գործառույթ իրականացնող տնտեսավարողների, այլ այն գերադասում են կատարել իրենց ուժերով,
  - հանրապետության համայնքներում կազմալուծվել և չեն գործում նախկին տնտեսությունների նորոգման արհեստանոցները և չեն ձևավորվում նման գործառույթ ունեցող գործող կառույցներ,
  - տեխնիկական միջոցների ծառայության ժամկետներն անցել են սահմանված նորմաները, նորոգումների ու տեխնիկական սպասարկումների ծախսերը լինում են զգալիորեն բարձր, իսկ հետևանքը այդ աշխատանքների ցածր արդյունավետությունն է:

Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի վիճակի ուսումնասիրությունները հնարավորություն են տվել բացահայտել նշված ոլորտի զարգացման հիմնախնդիրները, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

- Գյուղատնտեսական տեխնիկական հավաքակազմի (ներառյալ տրակտորները, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայնները, գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները) նորացման, տեխնիկական վերազինման տեմպերի արագացումը: Գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմն ունի ծառայության երկար ժամկետ և բարձր մաշվածության աստիճան (ինչպես նշվել է, տրակտորների ընդհանուր թվի 28%-ը շահագործվում է 34 տարուց ավելի, 28.3 %-ը՝ 29-33 տարի, 35.1 %-ը՝ 14-28 տարի և միայն 8,6%-ը՝ մինչև 13 տարի), որի հետևանքով բարձր է գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների վրա կատարվող ծախսերը և սպասարկումների սակագները, ցածր է մեքենայացված աշխատանքների տնտեսական արդյունավետությունը:
- Գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակության և հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկություններին համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրումը:




- Գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումների գործառույթ ունեցող տնտեսավարողների, տեխնիկայի առանձին սեփականատերերի և գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների արմատավորումը:
- Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող տարբեր կազմակերպական ձևեր ունեցող մասնագիտացված կառույցների՝ կոոպերատիվների, ընկերությունների ձևավորումը և դրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումը:
- Գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական ռեսուրսների (պահեստամասեր, դիզելային վառելանյութ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլն) մատակարարման արդյունավետ գործող համակարգի ձևավորումը:
- Գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական սպասարկումների գործունեության բարելավումը և կատարելագործումը:

Տվյալ բաժնի շրջանակներում փորձել ենք գնահատել արտադրատեխնիկական սպասարկումների զարգացման վերը նշված հիմնախնդիրների լուծման հնարավորությունները: Վերջինս առավել պատկերավոր ներկայացնելու համար փորձ ենք արել ցույց տալ սխեմատիկ ձևով (գծապատկեր 5):

Այսպիսով, գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացման 6 հիմնախնդիրների համար առաջադրվում են լուծման թվով 17 հնարավորություններ, որոնք, մասնավորապես, հետևյալն են՝

- Գյուղատնտեսական տեխնիկական հավաքակազմի (ներառյալ տրակտորները, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայնները, գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները) նորացման, տեխնիկական վերազինման տեմպերի արագացումը.
- գյուղատնտեսական տեխնիկա արտադրող և մատակարարող (ֆինանսական) արտերկրի ընկերությունների հետ մատչելի պայմաններով տեխնիկական միջոցների ներմուծման համար բանակցությունների վարումը
- դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար տեխնիկայի մատակարարման ակնկալիքով տարբեր երկրների համար հայտերի նախապատրաստում և ներկայացում,





**Գծապատկեր 5. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների գարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավորությունները**

- տրակտորներ, կոմբայններ արտադրող արտերկրի առաջատար ընկերությունների (Ռուսաստանի, Բելոռուսի, Չինաստանի և այլն) կողմից արտադրված հիմնական հանգույցների հիման վրա Հայաստանում դրանց հավաքման կազմակերպում
- **Գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակության և հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկություններին համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրումը.**
  - գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման լիզինգային մեխանիզմների կիրառման հնարավորությունների ընդլայնում,
  - պետության մասնակցությամբ տեխնիկայի մատակարարման մատչելի լիզինգային մեխանիզմների կիրառում (կանխավճարի մի մասի փոխհատուցում, տոկոսադրույքի սուբսիդավորում),
  - գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման համար նպատակային մատչելի վարկերի տրամադրում:
- **Գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումների գործառույթ ունեցող տնտեսավարողների, տեխնիկայի առանձին սեփականատերերի և գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների արմատավորումը.**
  - արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող սուբյեկտների և գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև կողմերի պատասխանատվությունը և իրավունքները ներառող օրինակելի պայմանագրի մշակում և խորհրդատվական համակարգի միջոցով դրանց կիրառման առավելությունների մասին իրազեկում և դրանց ներդրմանը նպաստում,
  - արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող սուբյեկտների՝ նպատակային վարկերից, դրամաշնորհային ծրագրերից օգտվելու համար սպասարկումների պայմանագրի առկայություն, նախապայմանների պարտադիր կիրառում,
  - արտադրատեխնիկական սպասարկումների գործառույթ ունեցող կոոպերատիվների միջոցով սպասարկումների գործընթացի կազմակերպում՝ պայմանագրային հիմունքներով,
  - արտադրատեխնիկական սպասարկումների հիմնավորված սակագների հաշվարկման մեթոդիկայի և սակագների մշակում, պայմանագրերում դրանց կիրառում:

- **Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող տարբեր կազմակերպական ձևեր ունեցող մասնագիտացված կառույցների՝ կոոպերատիվների, ընկերությունների ձևավորումը և դրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումը.**
  - դրամաշնորհային ծրագրերով, մատչելի՝ պետության մասնակցությամբ լիզինգային մեխանիզմներով ներմուծված գյուղատնտեսական տեխնիկական առաջնահերթ արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող կոոպերատիվներին տրամադրում,
  - տեխնիկական հագեցվածության պետական աջակցությամբ ծրագրերի (վարկային ծրագրեր, մրցակցային դրամաշնորհային ծրագրեր)՝ կոոպերատիվների միջոցով իրականացում,
  - օրենսդրական փոփոխությունների կիրառմամբ գյուղատնտեսական կոոպերատիվների համար ավելացված արժեքի հարկի չհարկվող նվազագույն շեմի՝ կոոպերատիվի անդամների թվից կախվածության մեջ գտնվող մեխանիզմների կիրառում:
- **Գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական ռեսուրսների (պահեստամասեր, դիզելային վառելանյութ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլն) մատակարարման արդյունավետ գործող համակարգի ձևավորումը.**
  - գյուղատնտեսության մեջ օգտագործվող նյութական ռեսուրսներ մատակարարող տնտեսավարողների տեղաբաշխման ճշգրտում, առավել պահանջարկ ունեցող ռեսուրսների վերաբերյալ մատակարարներին տեղեկատվության տրամադրում և շուկայում ռեսուրսների առկայության և դրանց իրացման պայմանների վերաբերյալ իրազեկում,
  - միջպետական մակարդակով արտերկրի ռեսուրսներ արտադրող և մատակարարող ընկերությունների հետ կապերի հաստատում և մատակարարման նպաստավոր պայմանների ստեղծում:
- **Գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական սպասարկումների գործունեության բարելավում և կատարելագործում.**
  - գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական սպասարկումների և նորոգումների գործընթացում մասնագիտացված կարողությունների հաշվառում, դրանց կարիքների գնահատում և դրանց աշխատանքի բարելավման մեխանիզմների մշակում,

- տեխնիկա արտադրող և մատակարարող ընկերությունների կողմից Հայաստանում ներկայացուցչությունների և տեխնիկական սպասարկման կետերի հիմնում<sup>55</sup>:

### **2.3. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների միջազգային փորձը և դրա կիրառման հնարավորությունները ՀՀ-ում**

Տարբեր երկրներում գյուղատնտեսության ոլորտի արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառում բարեփոխումները եղել են ագրարային բարեփոխումների կարևորագույն բաղկացուցիչը:

Ձարգացող երկրներում ագրարային բարեփոխումների գործընթացին զուգահեռ մշակվել և իրականացվել են պետական սոցիալ-տնտեսական բնույթի խոշոր միջոցառումների ամբողջական համակարգեր, որոնք ուղղված են եղել նաև գյուղացիներին մեքենաներով, պարարտանյութերով, վառելանյութերով և այլ ռեսուրսներով մատակարարելուն, գյուղատնտեսության վարման ագրոտեխնիկական մակարդակի բարձրացմանը և տարբեր ծրագրերի իրականացմանը:

Ձարգացած գյուղատնտեսական արտադրություն ունեցող երկրներում, հողի նկատմամբ մասնավոր սեփականատիրական իրավունքն ամեն ձևով պաշտպանելով, պետության կողմից առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսության ենթակառուցվածքների ամրապնդմանն ու կատարելագործմանը:

Տնտեսապես զարգացած երկրներում գյուղատնտեսության մեջ գրեթե տեղ չի մնացել այսպես կոչված լիբերալ շուկայական հարաբերություններին: Պետությունն իր ագրարային քաղաքականությամբ, բազմակողմանի տնտեսական ու ֆինանսական օգնությամբ ակտիվորեն ներգործում է գյուղատնտեսության զարգացման վրա: Պետական կարգավորումն ու հովանավորությունն այդ երկրներում խարսխվում են պետական բյուջեի միջոցների մոբիլիզացման և կենտրոնացված ու նպատակային ծախսումների վրա, որոնք ուղղվում են ինչպես բուն գյուղատնտեսության, այնպես էլ դրա հետ կապված ճյուղերի զարգացմանը<sup>56</sup>:

<sup>55</sup> Եղիգարյան Լ.Ս. ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավորությունները: Ֆինանսներ և էկոնոմիկա, 9 (159), սեպտեմբեր 2013.- էջ 68-71

<sup>56</sup> Ֆահրադյան Հ. Ագրարային արմատական վերակառուցումներ Հայաստանի Հանրապետությունում. անհրաժեշտություն, արդյունքներ, հիմնախնդիրներ: «Գիտություն» հրատ., Եր., 2003.- էջ 80

ԱՄՆ-ում, օրինակ, գյուղատնտեսության պետական կարգավորումն ու հովանավորությունն իրականացվել է և իրականացվում է երկու «բլոկով»՝ 1) պետության աջակցություն կապիտալի կուտակմանը՝ գյուղատնտեսության նյութատեխնիկական բազայի ամրապնդման ճանապարհով և 2) գյուղատնտեսական մթերքների իրացման և սպառման վրա պետական ներգործություն:

ԱՄՆ-ի ագրարային համալիրը իր զարգացման բարձրագույն մակարդակին է հասել քսաներորդ դարի երկրորդ կեսին: Այդ ժամանակահատվածն ամերիկյան ֆերմերների համար բնորոշվում է որպես գյուղատնտեսությունում գիտատեխնիկական հեղափոխության ժամանակահատված: Չթերագնահատելով ագրոարդյունաբերական համալիրի տեխնիկական, տեխնոլոգիական, կազմակերպական վերափոխման կարևորությունը՝ անհրաժեշտ է նշել, որ դրանցում վերափոխումների հաջողության կարևորագույն բաղադրիչ եղել է պետական կարգավորումը<sup>57</sup>:

ԱՄՆ-ում գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման հիմնական ուղղություններից է եղել գյուղատնտեսությունում արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակի բարձրացումը, հետևաբար, առանձնակի ուշադրություն է դարձվել անհրաժեշտ մեքենաների համակարգի և արտադրական ենթակառուցվածքների ձևավորմանը:

ԱՄՆ-ում լավ զարգացած մեքենաշինության առկայությունը հանդիսացել է գյուղատնտեսությունում ինդուստրիալ տեխնոլոգիաների լայն և արագ տարածման հիմնարար պայման: Չետևաբար, երկրագործության ինտենսիվացումն առաջին հերթին դիտվել է որպես ֆերմերային տնտեսությունների էներգազինվածության արագ աճ, հատկապես տրակտորային հավաքակազմի համար: 1955-1985թթ. տրակտորային հավաքակազմի հզորությունը ավելացել է 2.5 անգամ և հասել է 311 մլն ձիուժի, այդ ժամանակահատվածում տրակտորների քանակությունը ավելացավ 9%-ով՝ 4.3 մլն միավորից հասնելով 4.7 մլն միավորի: Տվյալ ժամանակահատվածում տեխնիկական վերազինման հարցում հատուկ ուշադրություն է դարձվել տարբեր կուլտուրաների մշակության, բերքահավաքի, դրանց սկզբնական վերամշակման, փոխադրման, պահպանման և իրացման բարձր արտադրողական մեքենաների ստեղծմանը: Գյուղատնտեսության ճյուղի տեխնիկական վերազինման մեջ հատուկ դեր է խաղացել քիմիացումը: Դրա ընդլայնմանը զուգընթաց ստեղծվել են ագրեգատներ և ամբողջ մեքենաների համակարգեր՝

<sup>57</sup> Аграрная сектор США в конце XX – века. М. 1997г. -с.34

հանքային պարարտանյութերի և պեստիցիդների ստացման և տարբեր հողակլիմայական պայմաններում հող ներմուծելու համար<sup>58</sup>:

Կարևոր ենք համարել որոշակիորեն անդրադառնալ նաև գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների ճապոնական փորձին:

Ճապոնիան հանդիսանում է գյուղատնտեսական մթերքներ ներմուծող խոշոր երկրներից մեկը, քանի որ մշակության տակ է դրված առկա հողատարածքների 13,3%-ը: Միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում 1.47 հեկտար: Ճապոնական ֆերմերները թվաքանակով քիչ են, սակայն նրանք եռանդով աշխատում են, որպեսզի իրենց սահմանափակ հողատարածքից ստանան առավելագույն արդյունք, այդ իսկ պատճառով այստեղ հողը մշակվում է բարձր արդյունավետությամբ<sup>59</sup>:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում ճապոնիայի գյուղատնտեսության զարգացումը բնութագրվում է տնտեսության այդ հատվածում նշանակալի ներդրումներով, մասնավորապես՝ հիմնական կապիտալի ներդրումներով: «Հիմնական կապիտալ» հասկացության մեջ ճապոնական պաշտոնական վիճակագրությունը ներառում է՝ կապիտալ ներդրումները, որոնք կապված են հողերի բարելավման, մեքենաների համակարգի կիրառման համար դաշտերի կարգավորման և հավասարեցման, ճանապարհաշինության, արտադրական կառույցների շինարարությունը, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների գնումը և նորոգումը, այդ թվում՝ տրանսպորտային միջոցները, բազմամյա տնկարկների հիմնումը:

Ճապոնիայի գյուղատնտեսությունում իրականացված կապիտալ ներդրումները հիմնականում դրվում էին հողի վրա: Այն որոշ չափով զիջում է գյուղատնտեսական մեքենաների ու սարքավորումների ձեռք բերմանն ուղղվող միջոցներին՝ ներդրումների մեկ քառորդը կատարվել է տնտեսական և արտադրական շինությունների կառուցման համար, մնացած մասն ուղղվել է բազմամյա տնկարկների հիմնմանը և գյուղատնտեսական կենդանիների ձեռքբերմանը<sup>60</sup>:

70-ական թվականներին ճապոնիայի գյուղատնտեսական արտադրության մեքենայացման բնագավառում իրականացվեց որակական թռիչք: Այն բնութագրվում է երկու

<sup>58</sup> Аграрная сектор США в конце XX – века. М. 1997г. - с.136

<sup>59</sup> Образ Японии. Авторское право (с) 1996, Урбан Конекши Никорп.- с.26

<sup>60</sup> Маркарян С.В. Проблемы агропромышленной интеграции в Японии. Изд. “Наука”, М. 1982.- с. 29-30



ուղղությամբ՝ բրնձի մշակության համար ինքնագնաց մեքենաների ստեղծումը և մեքենաների կիրառման մասշտաբների նշանակալի ընդլայնումը: Ներկայումս տնտեսություններն ապահովված են բոլոր տեսակի մեքենաներով: Սակայն, արտադրության փոքր ծավալներից ելնելով, մի շարք մեքենաներից, միաժամանակ օգտվում են մի քանի տնտեսություններ, այդ պատճառով էլ գյուղատնտեսական արտադրության մեքենայացման մակարդակը զգալիորեն բարձր է:

80-ական թվականների սկզբից ճապոնիայի գյուղատնտեսությունում փոքր չափեր ունեցող մեքենաների համակարգից անցում կատարվեց միջին և խոշոր չափերի մեքենաների համակարգին, այնուհետև՝ ավտոմատ կառավարվող մեքենաների համակարգին: Մեքենաների չափերի և արտադրողականության մեծացումը և նրանց գները հանգեցրին մեքենաների օգտագործման այնպիսի ձևերի, ինչպիսիք են՝ կոլեկտիվ վարձակալումը, կոոպերացումը, մեքենաների բանկի ստեղծումը և այլն<sup>61</sup>:

ճապոնիայի գյուղատնտեսությունը տարբերվում է արտադրության քիմիացման բարձր մակարդակով, մասնավորապես՝ միավոր մշակվող հողատարածության հաշվով օգտագործվող հանքային պարարտանյութերով և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի համար թունաքիմիկատների օգտագործմամբ:

Առաջատար արտասահմանյան երկրները նշանավորվում են աշխատանքի բարձր էներգաապահովվածությամբ և գրեթե բոլոր տեխնոլոգիական գործընթացների համալիր մեքենայացմամբ: Բավականին բարձր տեխնիկական մակարդակը, արտասահմանյան մեքենաների որակը և հուսալիությունը համալրվում են բազմաձև նոր մոդելներով՝ մեծամասամբ ունիֆիկացված, որոնք համապատասխանում են տարբեր բնակչիմայական և արտադրական պայմաններին և տնտեսությունների չափերին:

Օրինակ, ԱՄՆ-ում թողարկվում են 345 մոդել տրակտորներ, 42 մոդել հացահատիկահավաքներ և 49 մոդել կերահահավաք կոմբայններ<sup>62</sup>:

Մեկ տնտեսությունում և միավորված մի քանի տնտեսությունում մեքենայացված աշխատանքների իրականացման ծախսերի հաշվարկները և փորձը հնարավորություն են տալիս հետևություն անել, որ տեխնիկայի արդյունավետ օգտագործման առումով տեխնիկայի տարեկան ծանրաբեռնվածության ավելացման հաշվին առավելություններ ունեն միջտնտեսային տարբերակները:

<sup>61</sup> Маркарян С.В. Проблемы агропромышленной интеграции в Японии. Изд. “Наука”, М. 1982.- с. 33

<sup>62</sup> <http://www.zerno-ua.com/?p=808>

Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների առումով հետաքրքրություն է ներկայացնում Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Լեհաստանի, Կանադայի փորձը:

Գերմանիայի ֆերմերային տնտեսությունների ուսումնասիրությունների գնահատականներով հզոր էներգետիկ տրակտորների նվազագույն թույլատրելի ծանրաբեռնվածությունը կազմում է 500 ժամ, օպտիմալը՝ 600-700 ժամ: Մեծ Բրիտանիայում իրականացվել են նմանատիպ ուսումնասիրություններ՝ ուղղված տրակտորների օգտագործման արդյունավետության գնահատմանը՝ 100-400 հա չափեր ունեցող ֆերմաներում: Արևմտյան գիտնականները նշում են, որ ամենաօպտիմալ ցուցանիշը ստացվում է 350-400 հա չափեր ունեցող ֆերմաներում<sup>63</sup>: Յետևաբար, ֆերմերային տնտեսությունների մեծամասնությունը, հատկապես փոքր և միջին, հաճախ ձգտում են տեխնիկայի օգտագործման տարբեր կազմակերպական ձևերի ներդրմանը:

Աշխարհում ագրարային առաջատար երկրների փորձը վկայում է գյուղատնտեսական մեքենաօգտագործման բնագավառում կոոպերացիայի նպատակահարմարության մասին: Այսպես օրինակ, այնպիսի զարագացած երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Կանադան, ֆերմերային տնտեսությունների 20-70%-ը ընդգրկված են տեխնիկայի համատեղ օգտագործման և սպասարկման կոոպերացման տարբեր ձևերի մեջ:

Գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման առավել պարզ կազմակերպական ձև է հարևանային փոխօգնությունը, որը ֆերմերների միջև բանավոր պայմանավորվածություն է՝ նոր գնված կամ օգտագործված գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների համատեղ օգտագործման ուղղությամբ:

Գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման մեկ այլ ձև է մեքենայական օղակները: Մեքենայական օղակներն իրենցից ներկայացնում են գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման և այլ կազմակերպություններին մեքենայացված աշխատանքներով ծառայությունների մատուցման համար ֆերմերային տնտեսությունների միավորման ձև: Սովորաբար մեքենայական օղակները չունեն սեփական մեքենաներ, դրանք պատկանում են առանձին անդամների: Օղակը հանդես է գալիս որպես նրա անդամների համար մեքենաների օգտագործման միջնորդ: Մեքենայական օղակները առավել տարածված են Գերմանիայում և Ավստրիայում:

<sup>63</sup> <http://www.zerno-ua.com/?p=808>

Նման միավորման գլխավոր նպատակը ոչ թե եկամտի ստացումն է, այլ մեքենաների օգտագործման վիճակի բարելավումը: Օրինակ, Գերմանիայում մեքենայական օղակներում ներառվում են 100-ից մինչև 1000 մարդ, աշխատանքների կատարման բոլոր հաշվարկները կատարվում են մեքենայական օղակի վարչության կողմից:

Մեքենայական օղակների ծառայություններից հողօգտագործողների մեծ մասն օգտվում է այն դեպքում, երբ կարճ ժամանակահատվածում կարիք է ունենում թանկարժեք, բարձր արտադրողական կամ հատուկ մեքենաների: Բացի նշվածից, մեքենայական օղակները գյուղատնտեսական աշխատանքների առավել ինտենսիվ ժամանակահատվածներում տրամադրում են նաև աշխատուժ:

Արևմտյան Եվրոպայի երկրներում, մասնավորապես՝ Ֆրանսիայում և Լեհաստանում, բավականին տարածված են այնպիսի կազմակերպական ձևեր, ինչպիսիք են գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կոոպերատիվները: Սարքավորումներն ու մեքենաները գտնվում են կոոպերատիվի տրամադրության (տնօրինման) տակ և որպես կանոն հանդիսանում են կոլեկտիվի սեփականությունը: Դիմումների հիման վրա ֆերմերներն իրենց տնտեսություններում անհրաժեշտ աշխատանքներն իրականացնում են վարձու աշխատակազմի միջոցով<sup>64</sup>:

Կոոպերատիվների ֆինանսավորումն իրականացվում է հետևյալ աղբյուրների հաշվին՝ փոխառու միջոցներ, դոտացիաներ, սեփական կապիտալ: Այսպիսի կոոպերատիվները բավականին լուրջ մրցակիցներ են այն ձեռնարկությունների համար, որոնք իրականացնում են մեքենայացված ծառայություններ: Ընդ որում, այդ պայքարում դրանք ունեն որոշակի առավելություններ, քանի որ չեն վճարում մասնագիտական հարկ և օգտվում են այլ արտոնություններից:

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման ձևերից են մեքենայական միավորումները, որոնք ձևավորվում են մեքենաների համատեղ օգտագործման համար: Խոշոր մեքենայական միավորումներում ընդգրկված է 50-100 մարդ: Միավորման կառավարման նպատակով վարձվում են մասնագետներ՝ տեխնիկայի սպասարկման և պահպանման համար:

ԱՄՆ-ում, Կանադայում, արևմտաեվրոպական երկրներում գոյություն ունեն մեծ քանակությամբ ինքնուրույն կազմակերպություններ, որոնք իրականացնում են նեղ մասնագիտացված աշխատանքների մեքենայացված ծառայություններ (հողի հիմնա-

<sup>64</sup> <http://www.zerno-ua.com/?p=808>

կան մշակություն, բերքահավաք և այլն): Օրինակ, առանձին մեքենայացված աշխատանքների նպատակային արժեքը Մեծ Բրիտանիայում (ֆունտ-ստերլինգ/հեկտար) կազմել է՝ վարինը՝ 25-30, ցանքինը՝ 10-24, ցանքների քիմիական մշակմանը՝ 5-9, հանքային պարարտանյութի ներմուծմանը՝ 5-8, բերքահավաքինը՝ 30-50<sup>65</sup>:

Գյուղատնտեսական տեխնիկայի նշանակալի թանկացման պայմաններում բազմաթիվ զարգացած երկրներում լայնորեն օգտագործվում է տեխնիկայի վարձույթը և վարձակալությունը: Վարձույթի և վարձակալության կետերը հնարավորություն են տալիս ռացիոնալ օգտագործել բարդ և թանկարժեք գյուղատնտեսական տեխնիկան և ամբողջությամբ բավարարել սպառողների պատվերները, տնտեսել միջոցները և նյութական ռեսուրսները:

Մի շարք երկրներում գյուղատնտեսական մթերքներ արտադրողներն արտադրության տեխնիկական միջոցներով ապահովվում են մատակարարող-իրացնող կոոպերատիվների միջոցով: Մեքենաների և սարքավորումների մատակարարումից բացի ապահովում են վառելանյութ-քսանյութեր, հանքային պարարտանյութեր, բույսերի պաշտպանության քիմիական միջոցներ: Կոոպերատիվները մատակարարում են նաև մեքենայացված ծառայություններ:

Կանադայում լայն տարածում է գտել տեխնիկայի օգտագործման ֆերմերային կոոպերացիայի ձևը: Այն պաշտպանում է ֆերմերների տնտեսական շահերը, օգնում ձեռք բերել նյութատեխնիկական ռեսուրսներ և կատարել նոր տեխնիկայի տեխնիկական սպասարկում ոչ միայն Կանադայի, այլև ԱՄՆ-ի և Արևմտյան Եվրոպայի բազմաթիվ ֆիրմաների համար: Արտադրանքն իրացվում է միջնորդային կետերի լայն ցանցի միջոցով, որոնք իրենցից ներկայացնում են մանրածախ խանութներ, որոնք սպասարկում են նաև ֆերմերային տնտեսությունների կողմից գնված նոր տեխնիկան (իրականացնում են տրակտորների և մեքենաների երաշխավորված նորոգում, մատակարարում են պահեստամասեր և այլն):

Տեխնիկայի, պահեստամասերի վաճառքից, նորոգումներից բացի միջնորդային կետերը զբաղվում են մեքենաների կոմպլեկտավորմամբ, ոչ բարդ սարքավորումների պատրաստմամբ, հաճախորդների պատվերի հիման վրա մեքենաների մոդեռնիզացմամբ, տեխնիկական մասնագետների պատրաստմամբ, տեխնիկայի գովազդով:

<sup>65</sup> <http://www.zerno-ua.com/?p=808>

Գյուղատնտեսական ձեռնարկություններին մեքենաների և սարքավորումների մատակարարման առավել առաջադիմական ձևերից է հանդիսանում լիզինգը: Այն երկարատև ֆինանսավորման և ապրանքնային վարկի ձև է: Լիզինգի առանձին տեսակներն են տարավճարման և վարձույթով ապրանքի վաճառքին: Լիզինգատուն հանդիսանում է միջնորդ արտադրողի (որը պետք է ստանա իր արտադրանքի (մեքենայի) լրիվ արժեքը) և սպառողի միջև (որը չունի այդ միջոցները): Ջարգացած երկրներում լիզինգային գործարքներն իրականացվում են մասնագիտացված լիզինգային ընկերությունների և խոշոր առևտրային բանկերի կողմից: Տեխնիկա արտադրող ընկերությունների 90%-ից ավելին վաճառքը, մեքենաների երաշխավորված տեխնիկական սպասարկումը և պահեստամասերի իրացումն իրականացնում է անկախ միջնորդային կետերի միջոցով: Ընկերությունը տեխնիկական վաճառում է 10-30% զեղչով: Ջեղչը հաշվարկվում է ծախսերի փոխհատուցմամբ՝ կապված տեխնիկայի ձեռքբերման, նրա վաճառքի կազմակերպման, նշանակված տեղը տեղափոխման, վաճառքից հետո սպասարկման, երաշխավորված նորոգման ծախսերի հետ՝ ներառյալ հնարավոր եկամուտները:

Նոր տեխնիկայի գնի բարձրացման պայմաններում առավել արդիական է դառնում օգտագործված տեխնիկայի շուկան: ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի գյուղատնտեսական ապրանքարտադրողների գնած մեկ նոր տրակտորին բաժին է ընկնում երեք-չորս օգտագործված տրակտոր: Առաջատար երկրների ֆերմերների զգալի մասը տրակտորների և գյուղատնտեսական տեխնիկայի զգալի մասը ձեռք է բերում տեխնիկայի երկրորդային շուկայից: Օրինակ, ԱՄՆ-ի հացահատիկային կոմբայնների երկրորդային շուկան երեք անգամ գերազանցում է նոր մեքենաների շուկային: Դրանից բացի օգտագործված տեխնիկական հաճախ մասնատվում և իրացվում է որպես պահեստամաս:

Արևմտավրոպական երկրների ֆերմերները գյուղատնտեսական աշխատանքների շուրջ 50%-ն իրականացնում են երկրորդային շուկայից ձեռք բերվող տեխնիկայի միջոցով: Օգտագործված տեխնիկայի հիմնական իրացնողները միջնորդային կազմակերպություններն են, որոնք հնարավորություն ունեն նախապատրաստել տեխնիկական իրացման համար, իրականացնել որակյալ տեխնիկական սպասարկում-ներ, անհրաժեշտության դեպքում՝ նորոգումներ<sup>66</sup>:

<sup>66</sup> <http://www.zerno-ua.com/?p=808>

Գիտնականների ուսումնասիրությունները և փորձը վկայում են, որ գյուղատնտեսությունում արտադրական գործընթացների համալիր մեքենայացումը նպատակահարմար է իրականացնել տեխնիկայի օգտագործման ապրանք արտադրողների կոոպերացման ճանապարհով՝ ստեղծելով մեքենաների վարձույթի և վարձակալության մասնագիտացված ինժեներական կառույցներ, ինչպես նաև ներդնել տեխնիկայի օգտագործման այլ ձևեր:

Մեկ ստորաբաժանման մեջ բերքահավաքի և տրանսպորտային տեխնիկայի կենտրոնացումը, նրա արագ սպասարկումը և նորոգման օպերատիվ կազմակերպումը նպաստում են տեխնիկայի ծանրաբեռնվածության բարձրացմանը, պարապուրդների կրճատմանը, զգալիորեն ավելանում են սպասարկման ծավալները, բարելավվում է մեքենայացված աշխատանքի կազմակերպումը և որակը: Նշված մեթոդները հետխորհրդային երկրներից կիրառություն են գտել հատկապես Ուկրաինայի մի շարք մարզերում, որտեղ այդ փորձի կիրառումը տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը բարձրացրել է 2-3 անգամ:

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման ձևերից են նաև ժամանակավոր միջտնտեսային կազմավորումները: Դրանք ստեղծվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում տեխնիկական կենտրոնացնել արտադրական գործընթացների և ագրոտեխնիկայի բոլոր պահանջների պահպանման հոսքայնության և անընդհատության ապահովման համար: Այդպիսի ժամանակավոր ձևավորումները կարելի է կազմակերպել մի քանի տնտեսությունների կոոպերացիայի հիման վրա:

ԱՄՆ-ում և Կանադայում գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական սպասարկումները, նորոգումը և պահեստամասերի մատակարարումը մեծամասամբ իրականացվում է ձեռնարկություն-միջնորդների լավ զարգացած ցանցի միջոցով, որոնց 90%-ը ինքնուրույն է և միայն 10%-ն է պատկանում արտադրող ֆիրմաներին: ԱՄՆ-ի խոշոր մեքենաշինական ֆիրմաները, որոնք ունեն դիլերների ճյուղավորված ցանց, տեխնիկայի վաճառքի հետ միասին իրականացնում են երաշխավորված սպասարկումներ և սպառողների հայտերի հիման վրա պահեստամասերի մատակարարում: Ամերիկյան «John Deere» ֆիրման եվրոպական երկրներ ժամանակին պահեստամասեր մատակարարելու համար Բրյուսելում (Բելգիա) ստեղծել է իրացման կենտրոն, որը մատակարարում է պատվիրատուներին տարեկան մինչև 2 մլն պահեստամասեր՝ 9.0 հազ. տոննա ընդհանուր զանգվածով: Դաշտային աշխատանքների ծանրաբեռնված ժամա-


նակաշրջաններում 1 օրվա ընթացքում մատակարարվող պահեստամասերի քանակը հասնում է 10.0 հազարի<sup>67</sup>:

Ինչպես նշվեց, նոր տեխնիկայի շուկայի հետ միասին արտասահմանում զարգացած է նաև օգտագործված մեքենաների շուկան: ԱՄՆ-ում, Գերմանիայում, ճապոնիայում վերականգնված և մոդեռնացված տեխնիկան կազմում է ընդհանուր հավաքակազմի 40%-ից ավելին: Փորձը վկայում է, որ դիլերների կողմից իրացված գյուղատնտեսական տեխնիկայի ընդհանուր քանակի մեջ մեկ նոր մեքենային բաժին է ընկնում 3-4 նորոգված մեքենա: ԱՄՆ-ում միջին տարեկան իրացման տվյալներով օգտագործված տեխնիկային բաժին է ընկնում 150-200 հազար միավոր, իսկ նոր տեխնիկային՝ շուրջ 100 հազար միավոր: Գերմանիայում օգտագործված տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների առևտրով զբաղվող 6 հազար մանր ձեռնարկությունների հետ մեկտեղ տեխնիկայի զգալի մասի իրացումն իրականացվում է կոոպերատիվների միջոցով: Այսպես «Բայվա ԱԳ» կոոպերատիվների միավորումը, որը գործում է Մյունխենում, տարեկան իրացնում է 14 հազար օգտագործված տրակտոր, կոմբայն և այլ տեխնիկա: Նշվածի 25%-ն իրացվում է Չեխիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Հունաստանում և այլն<sup>68</sup>:

Գյուղատնտեսության նյութատեխնիկական մատակարարումների գործընթացի կարևորությունից ելնելով՝ մեր կողմից ուսումնասիրվել են նաև ճապոնիայի գյուղատնտեսության նյութատեխնիկական մատակարարման և արտադրանքի առևտրի մեխանիզմները: Գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումը ճապոնիայում իրականացվում է հետևյալ սխեմայով: Տեխնիկան սպառողին է հասնում (գյուղացիական տնտեսությանը) գյուղատնտեսական կոոպերատիվների և առևտրային կապիտալի (մանրածախ և մեծածախ) ընկերությունների համակարգի միջոցով, իսկ վերջիններիս մի մասը հանդիսանում են մեքենաշինական ընկերությունների սեփական առևտրային ֆիրմաները: Իրացման երկու ուղղություններն ակնառու ներկայացվում է 6-րդ գծապատկերում:

<sup>67</sup> <http://alldisser.com/part/ref-16411.html>

<sup>68</sup> <http://alldisser.com/part/ref-16411.html>



**Գծապատկեր 6. Արտադրողից դեպի սպառողը գյուղատնտեսական մեքենաների շարժի սխեման ճապոնիայի օրինակով<sup>69</sup>**

Մեքենաշինական գործարաններն ունեն գյուղատնտեսական տեխնիկայի վաճառքի մեծաքանակ մանրածախ խանութներ: Գնորդների ներգրավման նպատակով խանութներն օգտագործում են բոլոր հնարավոր մեթոդները, մասնավորապես՝ նրանց մեծ մասին կից գործում են մեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման կետեր, տեխնիկական զննություններն անց են կացվում տեղերում՝ խանութների ներկայացուցիչների միջոցով, որպես կանոն խանութներն իրենց հաճախորդներին տեղեկացնում են ստացված նոր տեխնիկայի մասին, առանձին դեպքերում մեքենաները վաճառում են զեղչով, մի շարք խանութներ պոստենցիալ գնողի համար վարում են հատուկ քարտարան, որտեղ ներառվում է տնտեսության տեսակը, եկամուտը, երբ և ինչ տեխ-

<sup>69</sup> Маркарян С.В. Проблемы агропромышленной интеграции в Японии. Изд. “Наука”, М. 1982.- с. 69



նիկա է գնել, մշտական և պոտենցիալ գնորդներին ուղարկում են շնորհավորանքներ, ցուցահանդեսների հրավերներ և այլն<sup>70</sup>:

Գյուղատնտեսական կոոպերատիվների և առևտրային ընկերությունների միջև մրցակցության համար կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկումը՝ պրոֆիլակտիկ զննումը, դետալների փոխարինումը, նորոգումը և այլն: Չնայած նրան, որ գյուղատնտեսական կոոպերատիվների համաճապոնական ֆեդերացիան տնտեսական ֆեդերացիայի մակարդակով շրջաններում (պրեֆեկտուրաներում) և տեղական կոոպերատիվներում ձևավորում է նորոգման արհեստանոցներ և պահեստամասերի ապահովման կենտրոններ, ինչպես նաև մեխանիկների պատրաստման կենտրոններ, սակայն պետք է նշել, որ տեխնիկական սպասարկումների իրականացման մակարդակը գյուղատնտեսական կոոպերատիվներում ավելի ցածր է, քան առևտրային ընկերություններում: Գապոնիայում նորոգման արհեստանոցները դասակարգվում են 4 դասի՝ A սուպեր դաս՝ իրականացնում է բոլոր մակնիշի և տեսակի գյուղատնտեսական մեքենաների ամենաբարձր մակարդակի նորոգումներ, A դաս՝ իրականացնում է բոլոր տեսակի նորոգումներ և պարբերական տեխնիկական սպասարկումներ, B դաս՝ կատարում է պարզ նորոգումներ, դետալների փոխարինում և միջին ու խոշոր մեքենաների մասնակի քանդում ու հավաքում, C դաս՝ իրականացնում է ընթացիկ զննում (սպասարկումներ) և սարքավորումների կարգաբերում, փոքր չափեր ունեցող մեքենաների ու շարժիչների նորոգում, տեխնիկական սպասարկումների անցկացում, միջին և խոշոր չափեր ունեցող մեքենաների դետալների փոխարինում առանց սարքավորումների անբողջական մասնատման: Գյուղատնտեսական կոոպերատիվների համակարգի նորոգման արհեստանոցները հիմնականում վերաբերում են C դասին, որը կազմում է բոլոր նորոգման ձեռնարկությունների թվաքանակի 58%-ը, միաժամանակ՝ առևտրային կապիտալի ձեռնարկություններին պատկանում է նորոգման արհեստանոցների հազիվ 40%-ը, 37%-ը՝ B դասին և 7%-ը A սուպեր դասին<sup>71</sup>:

Տեխնիկական սպասարկումները մեծ նշանակություն ունեն մեքենաների շահագործման համար: Հետևաբար, մեծածախ ընկերություններին կից առաջին դասի նորոգման արհեստանոցների առկայությունը լուրջ առավելություններ է տալիս գյուղատնտեսական կոոպերատիվների նկատմամբ, չնայած այն բանին, որ վերջիններիս մոտ երբե-

<sup>70</sup> Маркарян С.В. Проблемы агропромышленной интеграции в Японии. Изд. “Наука”, М. 1982.- с. 69

<sup>71</sup> Маркарян С.В. Проблемы агропромышленной интеграции в Японии. Изд. “Наука”, М. 1982.- с. 70

մն մեքենաների գները լինում են առավել ցածր, քան դիլլերների մոտ և զարմանալի չէ այն, որ վերջին տարիներին, երբ ավելացել է բարձր արտադրողական մեքենաների քանակը, դրանց տեխնիկական սպասարկումները և նորոգումները բավականին բարդ են, հետևաբար, գյուղատնտեսական կոոպերատիվները զիջում են նախկինում նվաճված դիրքերն այդ բնագավառում:

Արտասահմանյան փորձը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում արտադրատեխնիկական սպասարկումների մեխանիզմների առումով, սակայն հանրապետության տնտեսության և գյուղատնտեսության առանձնահատկությունները պահանջում են այլ մոտեցումներ և մեխանիզմներ:

Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գնահատել դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում: Այս տեսակետից հանրապետությունում կիրառման համար հետաքրքրություն են ներկայացնում գյուղատնտեսությունում մեքենայացված աշխատանքներով սպասարկման, տեխնիկական միջոցների տեխնիկական սպասարկումների և նորոգումների, տեխնիկայի մատակարարման որոշակի ձևեր:

Գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքների կազմակերպման համար հանրապետությունում հեռանկարային են համարվում տեխնիկայի օգտագործման հետևյալ ձևերը՝

- կոոպերացման սկզբունքով գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կազմակերպումը,
- տեխնիկայի օգտագործման միջտնտեսային միավորների ձևավորումը,
- մեքենայացված աշխատանքներով սպասարկող մասնագիտացված առանձին կառույցների (ընկերությունների) ձևավորումը, որոնք գործունեությունը կիրականացնեն գյուղացիական տնտեսությունների հայտերի և պայմանագրային հարաբերությունների ձևավորման հիման վրա,
- կոոպերատիվների ձևավորումը, որոնք մեքենայացված աշխատանքներով սպասարկումներ իրականացնում են կոոպերատիվի անդամների համար:

Գյուղատնտեսական տեխնիկայի նորոգումների և տեխնիկական սպասարկումների իրականացումը նպատակահարմար է իրականացնել կոոպերացման սկզբունքով

գործող և մասնագիտացված կառույցների միջոցով, ինչպես նաև տեխնիկա արտադրող և մատակարարող խոշորագույն ընկերությունների՝ հանրապետությունում ձևավորված ներկայացուցչությունների միջոցով:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարմանը, ապա հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները, գյուղացիական տնտեսությունների չափերը և դրանց վճարունակությունը պահանջում են, որ տեխնիկայի մատակարարումն իրականացվի մատչելի լիզինգային մեխանիզմներով, ապրանքային վարկերի միջոցով և այլ մեխանիզմներով:

**ՉԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՏԵԼՆԻԿԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի սարքինության մակարդակի և օգտագործման արդյունավետության վրա տարբեր գործոնների ազդեցության քանակական բնութագիրը**

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության մակարդակի և օգտագործման արդյունավետության վրա ազդում են բազմաթիվ ուղղակի և անուղղակի ազդեցություն ունեցող գործոններ: Այդ գործոնների շարքում կարելի է առանձնացնել հետևյալը՝

- տեխնիկական միջոցների շահագործման ժամկետը,
- նոր տեխնիկական միջոցներով գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի համալրման հնարավորությունները,
- գյուղատնտեսական տեխնիկական միջոցների տեխնիկական սպասարկումների և նորոգումների գործառույթ ունեցող կառույցների առկայությունը,
- շուկայում գյուղատնտեսական տեխնիկական միջոցների պահեստամասերի առկայությունը և դրանց գները,
- դիզելային վառելանյութի գները,
- գյուղատնտեսությունում տնտեսավարողների և տեխնիկա տնօրինող սեփականատերերի եկամուտների մակարդակը,
- մեքենայացված աշխատանքների ձևավորված սակագները,
- գյուղատնտեսության ճյուղում տնտեսական աճը,
- գյուղատնտեսական հիմնական մթերքների ապրանքայնության մակարդակը,
- գյուղատնտեսական մթերքների գների ձևավորված մակարդակը և այլն:

Տվյալ բաժնի շրջանակներում, հիմք ունենալով մի շարք չափելի գործոններ (որոնց բնութագրող ցուցանիշները երակարատև ժամանակահատվածի համար հասանելի են), փորձ ենք արել գնահատել դրանց ազդեցության քանակական գնահատականը գյուղատնտեսական հիմնական տեխնիկայի սարքինության մակարդակի և տեխնիկայի օգտագործման արդյունավետության վրա: Մասնավորապես՝ որպես ար-

դյունքային հատկանիշ ընդունել ենք գյուղատնտեսական տրակտորների, շարքացանների, հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակը, ինչպես նաև տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշ է ընդունվել գյուղատնտեսական տրակտորների համար գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, շարքացանների, հացահատիկահավաք կոմբայնների համար հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները, արտադրության ծավալները և այլն:

Գյուղատնտեսական տեխնիկայի վիճակի և օգտագործման վերաբերյալ ելակետային տվյալները ներկայացված են 3.1.1 աղյուսակում:

Աղյուսակ 3.1.1

**Գյուղատնտեսական տեխնիկայի վիճակի և օգտագործման վերաբերյալ ելակետային տվյալները 2001-2012 թթ. համար<sup>72,73</sup>**

Տարեթվերը	Տրակտորների միջին տարիքը <sup>74</sup> , տարի	Հացահատիկահավաք կոմբայնների միջին տարիքը <sup>75</sup> , տարի	Տրակտորների սարքինության մակարդակը տարեսկզբի դրությամբ, %	Հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակը տարեսկզբի դրությամբ, %	Շարքացանների սարքինության մակարդակը, %	Ցանքատարածությունը, հազ. հա	Հացահատիկային և հատիկաընդդեմային մշակաբույսերի ցանքատարածությունը, հազ. հա	Հացահատիկային և հատիկաընդդեմային մշակաբույսերի, համախառն արտադրանքը, հազ. տոննա
2001	17.2	19.0	75.5	76.0	81.8	317.1	203.4	367.3
2002	18.2	20.0	76.1	76.3	84.0	305.6	191.9	415.5
2003	19.1	20.9	75.1	76.7	84.1	314.6	200.8	310.0
2004	20.0	21.9	76.4	79.1	87.4	325.2	206.8	456.9
2005	20.9	22.9	77.2	82.1	86.8	331.8	209.6	396.2
2006	21.5	23.0	77.8	81.9	88.6	310.2	182.4	212.5
2007	22.5	23.9	78.8	85.4	88.6	306.0	176.2	452.5
2008	23.4	24.8	79.0	85.9	90.4	304.5	172.8	415.4
2009	24.4	25.8	78.7	84.8	89.2	300.0	171.6	374.9
2010	25.1	26.8	79.1	83.1	87.9	283.6	159.3	326.4
2011	25.7	27.5	78.4	81.0	89.1	286.7	157.8	440.7

<sup>72</sup> Գյուղացիական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին: 2001; 2002; 2003; 2004; 2005; 2006; 2007; 2008; 2009; 2010, 2011 և 2012թթ., ՀՀ ԱՎԾ, Երևան 2001; 2002; 2003; 2004; 2005; 2006; 2007; 2008; 2009; 2010, 2011 և 2012թթ.-էջ 4-5;7

<sup>73</sup> Պարենային ապահովություն և աղքատություն: 2005թ. հունվար-դեկտեմբեր, 2006թ. հունվար-դեկտեմբեր, 2012թ. հունվար-դեկտեմբեր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2006; 2007 և 2013թթ.

<sup>74, 75</sup> Փնահատվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեխնիկայի պետական տեսչության տվյալների հիման վրա:

2012	26.1	28.4	77.8	77.1	87.5	304.2	172.2	456.1
------	------	------	------	------	------	-------	-------	-------

Նախ անդրադառնանք տեխնիկական հավաքակազմի սարքինության մակարդակի վրա ազդող գործոնների գնահատմանը:

Տվյալ դեպքում փորձել ենք նախ բացահայտել տրակտորների տարիքային կազմի և սարքինության մակարդակի, այնուհետև՝ կոմբայնների տարիքային կազմի և սարքինության մակարդակի միջև կապի բնույթը:

Որպես արդյունքային հատկանիշ դիտարկել ենք տրակտորների սարքինության մակարդակը (նշանակում ենք  $y_i$ -ով, %), գործոն հատկանիշն ընդունում ենք տրակտորների միջին տարիքը (նշանակում ենք  $x_i$ -ով, տարի): Ելակետային տվյալները ներկայացված են 3.1.2 աղյուսակում:

Աղյուսակ 3.1.2

**Ելակետային տվյալներ ՀՀ-ում գյուղատնտեսական տրակտորների սարքինության մակարդակի և դրա վրա ազդող գործոնի՝ տրակտորների միջին տարիքի միջև**

Տարեթվերը	Տրակտորների միջին տարիքը, տարի	Տրակտորների սարքինության մակարդակը, %
	$x_i$	$y_i$
2001	17.2	75.5
2002	18.2	76.1
2003	19.1	75.1
2004	20.0	76.4
2005	20.9	77.2
2006	21.5	77.8
2007	22.5	78.8
2008	23.4	79.0
2009	24.4	78.7
2010	25.1	79.1
2011	25.7	78.4
2012	26.1	77.8

Սեկ կամ այլ փոփոխականների շեղումը միջինից ընկած է կոռելացիոն կապի գնահատման հիմքում: Գծային կապի դեպքում նրա սերտությունը չափվում է զույգային կոռելացիայի գործակցով, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$r_{xy} = \frac{\sum_i (x_i - \bar{x})(y_i - \bar{y})}{\sqrt{\sum_i (x_i - \bar{x})^2 \sum_i (y_i - \bar{y})^2}} \quad (3.1.1)$$

Եթե միջինից շեղման նշանը համընկնում է, այդ դեպքում կապն ուղիղ է ( $r_{xy} > 0$ ),

եթե շեղման նշանը չի համընկնում, ապա կապը հակադարձ է ( $r_{xy} < 0$ ):

Ձույգային կոռելացիայի գործակիցը չափվում է -1-ից (պատահական լրիվ հակադարձ կապ) մինչև 1 (լիարժեք ուղակի կապի դեպքում): Բացարձակ մեծությամբ՝  $0 \leq |r_{xy}| \leq 1$ : Որքան  $r_{xy}$  նշանակությունը մոտ է 1-ին, այնքան կապը սերտ է, որքան  $r_{xy}$  նշանակությունը մոտ է 0-ին, այնքան կապը թույլ է: Երբ  $|r_{xy}| < 0.30$ -ից, կապը համարվում է թույլ,  $|r_{xy}| = 0.3-0.7$  դեպքում կապը համարվում է միջին, իսկ երբ  $|r_{xy}| > 0.7$ , կապը համարվում է ուժեղ կամ սերտ<sup>76</sup>:

Հիմք ունենալով 3.1.2 աղյուսակի տվյալները, հաշվարկել ենք զույգային կոռելացիայի գործակիցը տրակտորների և դրանց սարքինության մակարդակի միջև: Հաշվարկային տվյալները ներկայացվում են 3.1.3 աղյուսակում:

Աղյուսակ 3.1.3

**ՀՀ-ում գյուղատնտեսական տրակտորների միջին տարիքի և սարքինության մակարդակի միջև զույգային կոռելացիայի գործակցի հաշվարկային աղյուսակ**

Տարեթվերը	$x_i - \bar{x}$	$y_i - \bar{y}$	$(x_i - \bar{x})(y_i - \bar{y})$	$(x_i - \bar{x})^2$	$(y_i - \bar{y})^2$
2001	-4.808	-1.992	9.577	23.120	3.967
2002	-3.808	-1.392	5.300	14.503	1.937
2003	-2.908	-2.392	6.956	8.458	5.720
2004	-2.008	-1.092	2.192	4.033	1.192
2005	-1.108	-0.292	0.323	1.228	0.085
2006	-0.508	0.308	-0.157	0.258	0.095
2007	0.492	1.308	0.643	0.242	1.712
2008	1.392	1.508	2.099	1.937	2.275
2009	2.392	1.208	2.890	5.720	1.460
2010	3.092	1.608	4.972	9.558	2.587
2011	3.692	0.908	3.353	13.628	0.825
2012	4.092	0.308	1.262	16.742	0.095
$\Sigma$	x	x	39.411	99.429	21.949

Տեղադրելով հաշվարկային տվյալները կոռելացիայի գործակցի բանաձևի մեջ՝ ստանում ենք՝

<sup>76</sup> Статистика: учеб. / И.И. Елисеева и др. под. ред И.И. Елисеевой. –М.: Проспект, 2010.- с. 78-81

$$r_{xy} = \frac{39.411}{\sqrt{99.429 * 21.949}} = \frac{39.411}{46.716} = 0.844$$

Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար գյուղատնտեսական տրակտորների միջին տարիքի և սարքինության մակարդակի միջև կապը սերտ է (այն մեծ է 0.7-ից):

Կոռելացիայի գործակցի քառակուսին իրենից ներկայացնում է դետերմինացիայի գործակիցը<sup>77</sup>:

$$\text{Դետերմինացիայի գործակիցը} = r^2 \quad (3.1.2)$$

Դետերմինացիայի գործակիցը հաճախ առավել նախընտրելի է կապերի գնահատման համար: Այն կարող է արտահայտվել տոկոսներով: Դրա արժեքը մեր օրինակի համար կազմում է՝  $r^2=0.712$  կամ 71.2 %: Դետերմինացիայի գործակիցը ունենում է 0-1 արժեք և տվյալ դեպքում ակնհայտ է, որ կապը սերտ է:

Ստացված արդյունքը որոշակիորեն հակասում է տրամաբանությանը: Ըստ էության, տրակտորային հավաքակազմի տարիքային կազմի բարձրացումը պետք է բացասաբար անդրադառնար սարքինության մակարդակի վրա: Սակայն, այստեղ ազդել են նաև այլ գործոններ: Տեխնիկայի սեփականատերերը, հնարավորություն չունենալով նոր տեխնիկական միջոցների ձեռքբերման համար, ստիպված ներդրումներ են անում տեխնիկայի նորոգման և վերականգնման ուղղությամբ և ծառայության մեծ ժամկետ ունեցող տեխնիկական միջոցները պահպանում են տեխնիկապես սարքին վիճակում:

Կիրառելով միևնույն մեթոդական մոտեցումը՝ գնահատել ենք նաև հացահատիկահավաք կոմբայնների միջին տարիքի և սարքինության մակարդակի միջև գոյություն ունեցող կապի բնույթը: Հաշվարկման ընթացքը և արդյունքները ներկայացնում ենք ստորև:

Արդյունքային հատկանիշ դիտարկում ենք հանրապետությունում հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակը (նշանակում ենք  $y_i$ -ով, %), հաջորդ գործոն հատկանիշը ընդունում ենք հացահատիկահավաք կոմբայնների միջին տարիքը (նշանակում ենք  $x_i$ -ով, տարի): Ելակետային տվյալները ներկայացվում են 3.1.4. աղյուսակում:

<sup>77</sup> Статистика: учеб. / И.И. Елисева и др. под. ред И.И. Елисеевой. –М.: Проспект, 2010.- с. 81.



**Ելակետային տվյալներ ՀՀ-ում հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակի և դրա վրա ազդող գործոնի՝ հացահատիկահավաք կոմբայնների միջին տարիքի միջև**

Տարեթվերը	Հացահատիկահավաք կոմբայնների միջին տարիքը, տարի	Հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակը, %
	$x_i$	$y_i$
1	2	3
2001	19.0	76.0
2002	20.0	76.3
2003	20.9	76.7
2004	21.9	79.1
2005	22.9	82.1
2006	23.0	81.9
2007	23.9	85.4
2008	24.8	85.9
2009	25.8	84.8
2010	26.8	83.1
2011	27.5	81.0
2012	28.4	77.1

Հիմք ունենալով 3.1.4 աղյուսակի տվյալները՝ հաշվարկում ենք զույգային կոռելացիայի գործակիցը հացահատիկահավաք կոմբայնների միջին տարիքի և սարքինության մակարդակի միջև: Հաշվարկային տվյալները ներկայացվում են 3.1.5 աղյուսակում:

**ՀՀ-ում հացահատիկահավաք կոմբայնների միջին տարիքի և սարքինության մակարդակի միջև զույգային կոռելացիայի գործակցի հաշվարկային աղյուսակ**

Տարեթվերը	$x_i - \bar{x}$	$y_i - \bar{y}$	$(x_i - \bar{x})(y_i - \bar{y})$	$(x_i - \bar{x})^2$	$(y_i - \bar{y})^2$
2001	-4.742	-4.783	22.681	22.483	22.880
2002	-3.742	-4.483	16.775	14.000	20.100
2003	-2.842	-4.083	11.603	8.075	16.674
2004	-1.842	-1.683	3.100	3.392	2.834
2005	-0.842	1.317	-1.108	0.708	1.734
2006	-0.742	1.117	-0.828	0.550	1.247
2007	0.158	4.617	0.731	0.025	21.314
2008	1.058	5.117	5.415	1.120	26.180
2009	2.058	4.017	8.268	4.237	16.134
2010	3.058	2.317	7.085	9.353	5.367
2011	3.758	0.217	0.814	14.125	0.047
2012	4.658	-3.683	-17.158	21.700	13.567
$\Sigma$	x	x	<b>57.378</b>	<b>99.769</b>	<b>148.077</b>

Հաշվարկային տվյալները տեղադրելով բանաձևում՝ ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{57.378}{\sqrt{99.769 * 148.077}} = \frac{57.378}{121.546} = 0.472$$

Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում հացահատիկահավաք կոմբայնների միջին տարիքի ազդեցությունը սարքինության մակարդակի վրա միջին է (այն գտնվում է 0.3-0.7-ի միջակայքում):

Դետերմինացիայի գործակիցը մեր օրինակի համար կազմում է՝  $r^2=0.223$  կամ 22.3 %: Կապը թույլ է:

Այժմ փորձենք գնահատել տրակտորների սարքինության մակարդակի ազդեցությունը գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների վրա:

Այս դեպքում արդյունքային հատկանիշ դիտարկում ենք գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները (նշանակում ենք  $y_i$ -ով, հազ.հա): Հաջորդ գործոն հատկանիշն ընդունում ենք գյուղատնտեսական տրակտորների սարքինության մակարդակը (նշանակում ենք  $x_i$ -ով, %): Ելակետային տվյալները ներկայացվում են 3.1.6 աղյուսակում:

Աղյուսակ 3.1.6

**Ելակետային տվյալներ ՀՀ-ում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և դրա վրա ազդող գործոնի՝ տրակտորների սարքինության մակարդակի վերաբերյալ**

Տարեթվերը	Տրակտորների սարքինության մակարդակը, %	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը, հազ. հա
	$x_i$	$y_i$
2001	75.5	317.1
2002	76.1	305.6
2003	75.1	314.6
2004	76.4	325.2
2005	77.2	331.8
2006	77.8	310.2
2007	78.8	306.0
2008	79.0	304.5
2009	78.7	300.0
2010	79.1	283.6
2011	78.4	286.7
2012	77.8	304.2

Չիմք ունենալով 3.1.6 աղյուսակի տվյալները՝ հաշվարկում ենք զույգային կոռելացիայի գործակիցը տրակտորների սարքինության մակարդակի և գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածության ցուցանիշների միջև: Չաշվարկային տվյալները ներկայացվում են 3.1.7 աղյուսակում:

Աղյուսակ 3.1.7

**ՉՉ-ում գյուղատնտեսական տրակտորների սարքինության մակարդակի և գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների միջև զույգային կոռելացիայի գործակցի հաշվարկային աղյուսակ**

Տարեթվերը	$x_i - \bar{x}$	$y_i - \bar{y}$	$(x_i - \bar{x})(y_i - \bar{y})$	$(x_i - \bar{x})^2$	$(y_i - \bar{y})^2$
2001	-1.992	9.642	-19.203	3.967	92.962
2002	-1.392	-1.858	2.586	1.937	3.453
2003	-2.392	7.142	-17.080	5.720	51.003
2004	-1.092	17.742	-19.368	1.192	314.767
2005	-0.292	24.342	-7.100	0.085	592.517
2006	0.308	2.742	0.845	0.095	7.517
2007	1.308	-1.458	-1.908	1.712	2.127
2008	1.508	-2.958	-4.462	2.275	8.752
2009	1.208	-7.458	-9.012	1.460	55.627
2010	1.608	-23.858	-38.372	2.587	569.220
2011	0.908	-20.758	-18.855	0.825	430.908
2012	0.308	-3.258	-1.005	0.095	10.617
$\Sigma$	x	x	<b>-132.934</b>	<b>21.949</b>	<b>2139.469</b>

Կոռելացիայի գործակցի տվյալները տեղադրելով բանաձևում՝ ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{-132.934}{\sqrt{21.949 * 2139.469}} = \frac{-132.934}{216.700} = -0.613$$

Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՉՉ-ում գյուղատնտեսական տրակտորների սարքինության մակարդակի և ցանքատարածությունների միջև կապը հակադարձ է, որը տրամաբանությանը հակասող է: Չետևաբար, ցանքատարածությունների փոփոխության վրա, տրակտորների սարքինության մակարդակից բացի, անդրադարձել են այլ գործոններ, որոնք առավել մեծ ազդեցություն են ունեցել:

Այս դեպքում արդյունքային հատկանիշ դիտարկում ենք հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները (նշանակում ենք  $y_i$ -ով, հազ.հա): Չաջորդ գործոն հատկանիշն ընդունում ենք շարքա-

ցանցների սարքինության մակարդակը (նշանակում ենք  $x_i$ -ով, %): Ելակետային տվյալները ներկայացվում են 3.1.8 աղյուսակում:

Աղյուսակ 3.1.8

**Ելակետային տվյալներ ՀՀ-ում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների և դրա վրա ազդող գործոնի՝ տրակտորային շարքացանների սարքինության մակարդակի վերաբերյալ**

Տարեթվերը	Տրակտորային շարքացանների սարքինության մակարդակը, %	Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունը, հազ. հա
	$x_i$	$y_i$
2001	81.8	203.4
2002	84.0	191.9
2003	84.1	200.8
2004	87.4	206.8
2005	86.8	209.6
2006	88.6	182.4
2007	88.6	176.2
2008	90.4	172.8
2009	89.2	171.6
2010	87.9	159.3
2011	89.1	157.8
2012	87.5	172.2

Հիմք ունենալով 3.1.8 աղյուսակի տվյալները հաշվարկում ենք զույգային կոռելացիայի գործակիցը տրակտորային շարքացանների սարքինության մակարդակի և հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների միջև:

Աղյուսակ 3.1.9

**ՀՀ-ում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների և տրակտորային շարքացանների սարքինության մակարդակի միջև զույգային կոռելացիայի գործակցի հաշվարկային աղյուսակ**

Տարեթվերը	$x_i - \bar{x}$	$y_i - \bar{y}$	$(x_i - \bar{x})(y_i - \bar{y})$	$(x_i - \bar{x})^2$	$(y_i - \bar{y})^2$
2001	-5.317	19.667	-104.561	28.267	386.778
2002	-3.117	8.167	-25.453	9.714	66.694
2003	-3.017	17.067	-51.484	9.100	291.271
2004	0.283	23.067	6.536	0.080	532.071
2005	-0.317	25.867	-8.191	0.100	669.084
2006	1.483	-1.333	-1.978	2.200	1.778
2007	1.483	-7.533	-11.174	2.200	56.751
2008	3.283	-10.933	-35.898	10.780	119.538
2009	2.083	-12.133	-25.278	4.340	147.218
2010	0.783	-24.433	-19.139	0.614	596.988
2011	1.983	-25.933	-51.434	3.934	672.538
2012	0.383	-11.533	-4.421	0.147	133.018
$\Sigma$	x	x	-332.477	71.477	3673.727

Տեղադրելով տվյալները կոռելացիայի գործակցի բանաձևում ստանում ենք՝

$$r_{xy} = \frac{-332.477}{\sqrt{71.477 * 3673.727}} = \frac{-332.477}{512.431} = -0.649$$

Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում տրակտորային շարքացանների սարքինության մակարդակի և հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների միջև կապը հակադարձ է, կոռելացիայի գործակիցը կազմել է -0.649: Վերջինս տրամաբանությանը հակասող կապ է, որը վկայում է, որ հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների վրա անդրադարձել են այլ գործոններ, որոնք առավել մեծ ազդեցություն է ունեցել:

Հարկ ենք համարում գնահատել նաև հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակի և հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի արտադրության ծավալների միջև եղած կապը:

Այս դեպքում արդյունքային հատկանիշ դիտարկում ենք հանրապետությունում հացահատիկային հատիկաընդեղենային մշակաբույսերի արտադրության ծավալը (նշանակում ենք  $y_i$ -ով, հազ.տոնն): Հաջորդ գործոն հատկանիշը ընդունում ենք հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակը (նշանակում ենք  $x_i$ -ով, %): Ելակետային տվյալները ներկայացվում է 3.1.10 աղյուսակում:

Հիմք ունենալով 3.1.10 աղյուսակի տվյալները՝ հաշվարկում ենք զույգային կոռելացիայի գործակիցը հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակի և հացահատիկային ու հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն արտադրանքի ցուցանիշների միջև:

Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակի և հացահատիկային ու հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն արտադրանքի միջև կապը հակադարձ է, կոռելացիայի գործակիցը կազմել է -0.826: Վերջինս նույնպես տրամաբանությանը հակասող կապ է, որը վկայում է, որ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի արտադրության ծավալների փոփոխության վրա անդրադարձել են այլ գործոններ, որոնք առավել մեծ ազդեցություն են ունեցել:

**Ելակետային տվյալներ ՀՀ-ում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքի և դրա վրա ազդող գործոնի՝ հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակի վերաբերյալ**

Տարեթվերը	Հացահատիկահավաք կոմբայնների սարքինության մակարդակը, %	Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքը, հազ. տոննա
	$x_i$	$y_i$
2001	76.0	367.3
2002	76.3	415.5
2003	76.7	310.0
2004	79.1	456.9
2005	82.1	396.2
2006	81.9	212.5
2007	85.4	452.5
2008	85.9	415.4
2009	84.8	374.9
2010	83.1	326.4
2011	81.0	440.7
2012	77.1	456.1

**ՀՀ-ում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքի և հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի համախառն արտադրանքի միջև գոյգային կոռելացիայի գործակցի հաշվարկային աղյուսակ**

Տարեթվերը	$x_i - \bar{x}$	$y_i - \bar{y}$	$(x_i - \bar{x})(y_i - \bar{y})$	$(x_i - \bar{x})^2$	$(y_i - \bar{y})^2$
2001	-11.117	183.567	-2040.649	123.580	33696.721
2002	-10.817	231.767	-2506.943	117.000	53715.788
2003	-10.417	126.267	-1315.278	108.507	15943.271
2004	-8.017	273.167	-2189.886	64.267	74620.028
2005	-5.017	212.467	-1065.874	25.167	45142.084
2006	-5.217	28.767	-150.066	27.214	827.521
2007	-1.717	268.767	-461.383	2.947	72235.521
2008	-1.217	231.667	-281.861	1.480	53669.444
2009	-2.317	191.167	-442.869	5.367	36544.694
2010	-4.017	142.667	-573.044	16.134	20353.778
2011	-6.117	256.967	-1571.779	37.414	66031.868
2012	-10.017	272.367	-2728.206	100.334	74183.601
$\Sigma$	x	x	-15327.840	629.410	546964.320

### 3.2. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների սակագների հաշվարկման մեթոդական մոտեցումները

Առաջիկայում գյուղատնտեսությունում տնտեսավարողների բացարձակ գերակշռող մասն արտադրատեխնիկական սպասարկումներն իրականացնելու է տեխնիկայի սեփականատեր հանդիսացող այլ տեխնիկայի սեփականատերերի, ինչպես նաև մասնագիտացված արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող կառույցների, կոոպերատիվների և այլ տեխնիկական միջոցներով: Բոլոր դեպքերում վերը նշված տնտեսություններում, ինչպես նաև գյուղատնտեսական այլ ձեռնարկություններում դաշտային մեքենայացված գործողություններ կատարելու համար կպահանջվեն նախօրոք մշակված և հաստատված սակագներ, որոնք հիմք կծառայեն պատվիրատուների և կատարողների միջև դրամական արժեհաշվումների կատարման համար:

Գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների սակագները կարող են օգտագործվել նաև տնտեսությունների կողմից արտադրված մթերքների ինքնարժեքի հաշվարկման գործընթացում:

Գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների սակագների որոշման համար անհրաժեշտ ենք համարել անդրադառնալ մեքենայացված աշխատանքների գնահատման մեթոդական ցուցումների ներկայացմանը:

Գյուղացիական (ընտանեկան), գյուղացիական ապրանքային տնտեսությունները, գյուղացիական առևտրային կազմակերպությունները, կոոպերատիվները, արտադրատեխնիկական սպասարկման ու գյուղատնտեսական այլ ձեռնարկությունները ներկայումս աշխատում են ինքնաձախսածածկման հիմունքներով, ուստի չափազանց մեծ է գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների կատարման համար նախօրոք մշակված սակագների դերը:

Գյուղատնտեսական մթերքներ արտադրող տնտեսությունները սակագները կարող են օգտագործել արտադրանքի ինքնարժեքի, իսկ արտադրատեխնիկական սպասարկման կազմակերպությունները՝ վերը նշված տնտեսություններում կատարվող գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների սակագների որոշման համար:

Տրակտորային ագրեգատի մեկ ժամվա հաշվով գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների սակագինը առաջարկվում է որոշել հետևյալ բանաձևով՝

$$U = \left( C + \frac{V\delta}{100} \right) \left( 1 + \frac{Q}{100} \right) \left( 1 + \frac{L}{100} \right) \text{ դրամ/ժամ,} \quad (3.2.1.)$$

- որտեղ՝ **Շ**-ն գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման ծախսերն են, դրամ/ժամ
- Վ**-ն՝ տրակտորիստ մեքենավարի և տրակտորային ագրեգատը սպասարկող օժանդակ անձնակազմի աշխատանքի վարձատրությունը, դրամ/ժամ
- Ծ**-ն՝ ընդհանուր արտադրական և ընդհանուր տնտեսական ծախսերի հատկացումը տոկոսներով, որը ստացվում է նշված ծախսերն աշխատանքի վարձատրության հետ հարաբերակցելով (առաջարկվում է ընդունել 25.7 %, այն տնտեսություններում, որտեղ այդպիսի ծախսեր չեն կատարվում, բնականաբար դրանք հաշվի չեն առնվում),
- Չ**-ն՝ կանխորոշվող շահույթն է՝ տոկոսներով (առաջարկվում է ընդունել կատարված արտադրական ծախսերի 20-25%-ի սահմաններում),
- Լ**-ն՝ ավելացված արժեքի հարկի դրույքաչափն է (20 %)։

Գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքի սակագինը մեկ միավոր արտադրանքի (հեկտարի, տոննայի, տոննա-կիլոմետրի, խորանարդ մետրի և այլն) հաշվով արտահայտելու համար վերը բերված բանաձևերով որոշված սակագինը բաժանվում է տնտեսության կոնկրետ պայմաններին համապատասխանող գնահատված արտադրանքի նորմայի վրա: Այսինքն՝

$$U_{\text{ու}} = \frac{U}{V} \text{ դրամ/հա (տ, տկմ, մ}^3), \quad (3.2.2.)$$

որտեղ, **U**-ն՝ մեքենայացված աշխատանքի արտադրանքի ժամային նորման է, հա (տ, տկմ, մ<sup>3</sup>) հերթ:

Իրենց հերթին, մեկ ժամվա հաշվով գյուղատնտեսական տեխնիկայի շահագործական ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$\text{Շ} = \text{Վ} + \text{Ա} + \text{Ե} + \text{Տ} + \text{Դ} \text{ դրամ/ժամ,} \quad (3.2.3.)$$

- որտեղ՝ **Վ**-ն՝ մեկ հերթափոխի հաշվով տրակտորիստ-մեքենավարի և տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի աշխատանքի վարձատրությունն է՝ վրաեկների հետ միասին, դրամ/ժամ,
- Ա**-ն՝ տեխնիկայի ամորտիզացիայի արժեքը, դրամ/ժամ,
- Ե**-ն՝ տեխնիկայի հիմնական (կապիտալ) ու ընթացիկ նորոգումների ծախսերը, դրամ/ժամ,



S-ն՝ տեխնիկայի խնամքի ու պահպանության ծախսերը, դրամ/ժամ,

Դ-ն՝ վառելանյութի, քսայուղերի և գործարկման բենզինի ծախսերը, դրամ/ժամ:

Իր հերթին, մեկ հերթափոխի հաշվով տրակտորիստ-մեքենավարի և տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի աշխատանքի վարձատրությունը վրաեկների հետ միասին հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$V = V_{\text{տ}} \cdot Q_{\text{տ}} + \text{Թ} \cdot V_{\text{օ}} \cdot Q_{\text{օ}} \quad \text{դրամ/ժամ,} \quad (3.2.4.)$$

որտեղ՝  $V_{\text{տ}}$  և  $V_{\text{օ}}$ -ն համապատասխանաբար տրակտորիստ-մեքենավարի և տրակտորային ագրեգատը սպասարկող օժանդակ անձնակազմի աշխատանքի վարձատրությունն է, դրամ/ժամ,

$Q_{\text{տ}}$  և  $Q_{\text{օ}}$ -ն՝ տրակտորիստ-մեքենավարի և տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի աշխատանքի վարձատրության վրաեկները հաշվի առնող գործակիցները,

Թ-ն՝ տրակտորային ագրեգատը սպասարկող օժանդակ անձնակազմի թիվը:

Վերջին անգամ գյուղատնտեսական պետական ձեռնարկություններում տրակտորիստ-մեքենավարի և տրակտորային ագրեգատն սպասարկող և ձեռքի ձիաքարշ աշխատանքներում զբաղված բանվորների աշխատանքի վարձատրության տարիֆային դրույքները ՀՀ կառավարության կողմից հաստատվել են 1999թ. դեկտեմբերի 29-ի թիվ 367 որոշմամբ: Ներկայումս, սակայն, դրանք չեն գործում:

«Ձեռնարկությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն աշխատանքի վարձատրության ձևերը, համակարգերն ու չափերը, ինչպես նաև աշխատողների եկամուտների մյուս տեսակները ձեռնարկությունների կողմից սահմանվում են ինքնուրույնաբար: Կազմակերպությունները կարող են պետական տարիֆային դրույքներն օգտագործել որպես կողմնորոշիչներ աշխատանքի վարձատրության տարբերակման համար՝ կախված աշխատողների մասնագիտությունից, որակավորումից, դրանց կողմից կատարվող աշխատանքների բարդությունից ու պայմաններից:

Ելնելով վերոնշյալից՝ արտադրատեխնիկական սպասարկման և գյուղատնտեսական այլ ձեռնարկությունների տրակտորիստ-մեքենավարների և տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի համար առաջարկվում է աշխատանքի վարձատրության դրույքաչափերի հաշվարկման հետևյալ գործակիցների կիրառումը (աղյուսակ 3.2.1):

Աղյուսակ 3.2.1

Արտադրատեխնիկական սպասարկման և գյուղատնտեսական այլ ձեռնարկությունների տրակտորիստ-մեքենավարների և տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի համար աշխատանքի վարձատրության դրույքաչափերի հաշվարկման համար առաջարկվող գործակիցները (1 միավոր ընդունում ենք տրակտորիստ-մեքենավարների I տարիֆային կարգի համար, որի նկատմամբ կկիրառվեն մյուս գործակիցները)

	Տարիֆային կարգը					
	I	II	III	IV	V	VI
	Դրույքաչափերի հաշվարկման գործակիցները					
Տրակտորիստ-մեքենավարներ.						
առաջին խումբ	1.0	1.085	1.185	1.340	1.545	1.800
երկրորդ խումբ	1.102	1.185	1.320	1.490	1.695	1.980
երրորդ խումբ	1.220	1.320	1.460	1.645	1.880	2.185
Ձեռքի-ձիաքարշ և օժանդակ աշխատանքներ	0.85	0.95	1.035	1.150	1.320	1.680

Աշխատանքի վարձատրության խմբերն ըստ նախկին վարչական շրջանների ներկայացվում են 3.2.2 աղյուսակում:

Աղյուսակ 3.2.2

Աշխատանքի վարձատրության խմբերն ըստ ՀՀ նախկին վարչական շրջանների

Աշխատանքի վարձատրության խմբերը	Խմբերի մեջ ներառվող նախկին ՀՀ տարածաշրջանները
Երրորդ խումբ	Ամասիայի, Ապարանի, Արագածի, Ախուրյանի, Աշոցքի, Վայքի, Վարդենիսի, Գավառի, Գամբարակի, Մարտունու, Սևանի, Սիսիանի, Տաշիրի տարածաշրջանները: Ներքոհիշյալ նախկին տարածաշրջանների այն տնտեսությունները, որոնք գտնվում են ծովի մակերևույթից հետևյալ բարձրությունների վրա. Եղեգնաձորինը՝ 2000 մ-ից, Գորիսինը, Մեղրունը, Կապանինը՝ 1900 մ-ից, Արարատինը, Արտաշատինը՝ 1800 մ-ից, Թալինինը, Աշտարակինը, Կոտայքինը, Նաիրիինը, Հրազդանինը՝ 1700 մ-ից, Իջևանինը, Նոյեմբերյանինը, Գուգարքինը, Ստեփանավանինը, Տավուշինը՝ 1600 մ-ից, Անիինը, Արթիկինը, Սպիտակինը՝ 1500 մ-ից բարձր:
Երկրորդ խմբում	Անիի, Արթիկի, Թումանյանի և Սպիտակի տարածաշրջանները (բացառությամբ այն տեղանքների, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 1500 մ-ից ավելի բարձրության վրա), Գուգարքի և Ստեփանավանի շրջանները (բացառությամբ այն տեղանքների, որոնք գտնվում են ծովի մակերևույթից 1500 մ-ից ավելի բարձրության վրա), Գուգարքի և Ստեփանավանի շրջանները (բացառությամբ այն տեղանքների, որոնք գտնվում են ծովի

	մակերևութից 1600 մ-ից ավել բարձրության վրա), Յրազդանի տարածաշրջանը (բացառությամբ այն տեղանքների, որոնք գտնվում են ծովի մակերևութից 1700 մ-ից ավել բարձրության վրա), Գորիսի և Մեղրու շրջանները (բացառությամբ այն տեղանքների, որոնք գտնվում են ծովի մակերևութից 1900 մ-ից ավել բարձրության վրա), ինչպես նաև ներքոհիշյալ տեղանքների, որոնք գտնվում են ծովի մակերևութից հետևյալ բարձրությունների վրա. Եղեգնաձորինը՝ 1600-2000, Կապանինը՝ 1600-1900, Արարատինը և Արտաշատինը՝ 1600-1800, Թալինինը, Աշտարակինը, Կոտայքինը և Նաիրիինը՝ 1600-1700, Իջևանինը, Նոյեմբերյանինը և Տավուշինը՝ 1400-1600 մ:
Առաջին խմբում	Չանրապետության մյուս շրջաններում և տեղանքներում:

Արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներն առաջին տարիֆային կարգի և առաջին խմբի համար իրենց կողմից սահմանում են դրույքը և, օգտագործելով առաջարկված գործակիցները, տարիֆային կարգին և խմբին համապատասխան հաշվարկում են տարիֆային դրույքները (1 ժամվա կամ հերթափոխի համար (7 ժամ)):

Տրակտորկստ-մեքենավարի և տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի աշխատանքի վարձատրության վրաեկների նախկինում սահմանված համակարգի դեպքում որոշակի դժվարություն է ներկայացնում այն հաշվարկելը կամ համապատասխան գործակիցը մշակելը:

Ստորև բերված բանաձևը որոշակիորեն կհեշտացնի այդ գործակցի որոշելը:

Այսպիսով, աշխատանքի վարձատրության վրաեկները հաշվի առնող գործակիցները կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$Q_{տ} = \left\{ \left[ 1 + \frac{V_d}{100} + \left( 1 + \frac{V_d}{100} \right) \frac{V_d}{100} \right] \left( 1 + \frac{V_{p.l}}{100} \right) \left( 1 + \frac{V_w}{100} \right) + \left[ 1 + \left( 1 + \frac{V_d}{100} \right) \frac{V_d}{100} \right] \frac{V_u}{100} \right\} \left( 1 + \frac{V_{u.w}}{100} \right) \quad (3.2.5.)$$

Տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի համար՝

$$Q_o = \left( 1 + \frac{V_d}{100} \right) \left( 1 + \frac{V_{p.l}}{100} \right) \left( 1 + \frac{V_w}{100} \right) \left( 1 + \frac{V_{u.w}}{100} \right) \quad (3.2.6.)$$

որտեղ՝  $V_d$ -ն՝ վնասակար միջավայրում աշխատելու համար տրվող հավելումն է, որը կազմում աշխատանքի հիմնական վարձատրության 10 %-ը,

$V_u$ -ն՝ տրակտորիստ մեքենավարի կարգայնության համար տրվող հավելումը: Առաջին կարգի դեպքում այն կազմում է 20%, երկրորդ

կարգի դեպքում՝ 10%, երրորդի դեպքում հավելում չի տրվում:  
Միջինը կարելի է ընդունել 10%,

Վբ.լ-ն՝ բարձր լեռնային պայմաններում աշխատելու դեպքում տրվող հավելումը, որը որոշվում է հետևյալ ձևով: Ծովի մակերևույթից 2000 մետրից բարձր դասավորված գյուղատնտեսական հողատեսքերի տարածությունը գյուղատնտեսական ընդհանուր հողատեսքերի նկատմամբ մինչև 49%-ի դեպքում հավելումը առաջարկվում է ընդունել 10%, 50-70%-ի դեպքում՝ 15%, իսկ 71-90%-ի դեպքում՝ 20% հավելում,

Վա-ն՝ արձակուրդայինի համար տրվող հավելումն է: Տասնհինգ օր արձակուրդի դեպքում այն կազմում է 5%, տասնութ օրվա դեպքում՝ 6% և քսանչորս օրվա դեպքում՝ 8%: Տրակտորիստ-մեքենավարների համար միջինը կարելի է ընդունել 7, իսկ տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի համար՝ 6%,

Վս-ն՝ աշխատանքային ստաժի համար տրվող հավելումն է: Տվյալ ձեռնարկությունում 3-5 տարի աշխատելու դեպքում այն կազմում է 8%, 5-10 տարվա դեպքում՝ 10%, 10-15 տարվա դեպքում՝ 13% և 15 տարուց ավելիի դեպքում՝ 16%: Միջինը կարելի է ընդունել 10 %,

Վս.ա-ն՝ սոցիալական վճարումներն են: Սոցիալական վճարումների միջին հավելումը տրակտորիստ մեքենավարների համար կազմում է 18.4, իսկ ագրեգատը սպասարկող անձնակազմի համար՝ 19.4 %:

Կոնկրետ պայմանների համար աշխատանքի վարձատրության վրաեկները հաշվի առնող գործակիցները մեկ անգամ հաշվարկելուց հետո կարելի է կիրառել նույնանման պայմաններում աշխատող, սակայն տարբեր տարիֆային կարգի աշխատանք կատարողների վարձատրությունը սահմանելու համար, քանի որ աշխատանքի բնույթից ու բարդության աստիճանից կախված՝ կփոխվի միայն հաշվարկված տարիֆային դրույթը:

Տրակտորիստ-մեքենավարի և տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի աշխատանքի վարձատրության վրաեկները հաշվի առնող գործակիցները հավելումների միջին ցուցանիշների դեպքում բերված են 3.2.3 աղյուսակում:

Աղյուսակ 3.2.3.

**Տրակտորիստ մեքենավարների և տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի աշխատանքի վարձատրության վրաեկները հաշվի առնող գործակիցները հաշվումների միջին ցուցանիշների դեպքում**

Աշխատանքի վայրի պայմանները	Գործակիցները	
	անվճար միջավայրում աշխատելիս	վճարավար միջավայրում աշխատելիս
Տրակտորիստ-մեքենավարի համր. սովորական բարձր լեռնային՝	10 %	1.54
	15 %	1.68
	20 %	1.75
		1.82
Տրակտորային ագրեգատն սպասարկող օժանդակ անձնակազմի համր. սովորական բարձր լեռնային՝	10 %	1.27
	15 %	1.38
	20 %	1.45
		1.50

Մեկ հերթափոխի հաշվով տեխնիկայի ամորտիզացիայի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \frac{F \cdot a \cdot \theta}{100 \cdot S} \text{ դրամ/հերթ} \quad (3.2.7.)$$

որտեղ՝ F-ն՝ հաշվեկշռում փաստացի նստած տեխնիկայի տվյալ ժամանակաշրջանի

համապատասխան վերագնահատված արժեքն է, դրամով,

a-ն՝ տեխնիկայի ամորտիզացիոն հատկացումների նորման, տոկոսներով,

θ-ն՝ հերթափոխի տևողությունը, ժամերով,

S-ն՝ տեխնիկայի տարեկան ծանրաբեռնվածությունը, ժամերով:

Տեխնիկայի հիմնական և ընթացիկ նորոգումների ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$L = \frac{F \cdot n \cdot \theta}{100 \cdot S} \text{ դրամ/հերթ} \quad (3.2.8.)$$

որտեղ՝ n-ն տեխնիկայի հիմնական և ընթացիկ նորոգումների նորման է, տոկոսներով:

Տեխնիկայի տեխնիկական խնամքի ու պահպանության ծախսերը որոշում են հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{T} = \frac{P \cdot \psi \cdot \sigma}{100 \cdot S} \text{ դրամ/հերթ} \quad (3.2.9.)$$

որտեղ՝  $\psi$ -ն՝ տեխնիկայի տեխնիկական խնամքի ու պահպանման հատկացումներն են, տոկոսներով:

Վերջին տարիներին մեքենաների պահուստային մասերի գների խիստ թանկացման միտում է նկատվում, որը կարող է ազդել նաև մեքենաների նորոգման աշխատանքների սակագների վրա: Պահուստամասերի զգալի թանկացման դեպքում անհրաժեշտ է կիրառել համապատասխան գործակից, որը կարող է որոշվել գործող և հետագայում ներկրվող պահուստամասերի գներն իրար հետ հարաբերակցելով: Երբ մատակարարող ձեռնարկությունների կողմից նախատեսվում է հանրապետություն ներկրել որևէ նոր տեխնիկա, սակայն հայտնի չէ նրա հաշվեկշռային արժեքը, այն կարելի է որոշել հետևյալ կերպ՝

$$P = S \cdot \psi \text{ դրամ,} \quad (3.2.10.)$$

սորտեղ՝  $S$ -ն՝ տեխնիկայի գնացուցակային արժեքն է, դրամով,

$\psi$ -ն՝ տեխնիկայի արտադրման կամ վաճառքի վայրից մինչև ձեռնարկություն կամ տնտեսություն առաքելու հետ կապված ծախսերը հաշվի առնող գործակիցը:

Ղեռևս նախկինում «Հայգյուղտեխնիկա» արտադրական միավորման կողմից հանրապետության համար սահմանված է եղել միջինը 1.19 գործակիցը, որը տարբերակված է նաև ըստ նախկին խումբ շրջանների:

Վերը բերված բանաձևերով ագրեգատի մեջ մտնող յուրաքանչյուր տրակտորի և գյուղատնտեսական մեքենայի համար ծախսերը որոշվում են առանձին, այնուհետև՝ գումարվում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեքենայացված աշխատանքների հիմնավորված սակագների ձևավորման համար կարևոր է վառելանյութերի, քսանյութերի ծախսերի հաշվարկը, հարկ ենք համարել անդրադառնալ նաև վերջինի գնահատման մեթոդական հարցերին:

Տրակտորների և ինքնագնաց կոմբայնների կողմից ծախսվող վառելանյութի և քսայուղերի արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$q = \frac{\xi \cdot \eta \cdot \rho \cdot R \cdot \sigma}{1000} \text{ դրամ/հերթ,} \quad (3.2.11.)$$

որտեղ՝  $\xi$ -ն՝ տրակտորի կամ ինքնագնաց կոմբայնի շարժիչի հզորությունն է կվտ-նե-  
րով կամ ձիաուժերով,

$\eta$ -ն՝ շարժիչի հզորության օգտագործման գործակիցն է: Գյուղատնտեսական  
դաշտային աշխատանքների համար այն գտնվում է 0.7-0.9 սահմաններում,  
թեթև աշխատանքներում՝ 0.7, իսկ ծանր աշխատանքներում՝ 0.9: Միջինը  
կարելի է ընդունել 0.8: Բեռների բարձման, փոխադրման ու դատարկման  
աշխատանքներում այն կարելի է ընդունել 0.5,

$\rho$ -ն՝ վառելանյութի տեսակարար ծախսը, գր/էֆ. կվտ ժամ կամ գր/էֆ. ձիաուժ  
ժամ,

$R$ -ն՝ 1 կգ հիմնական վառելանյութի և դրան համապատասխան ծախսվող քսայու-  
ղերի ու գործարկման բենզինի համալիր գինն է, դրամ:

Վառելանյութի, քսայուղերի և գործարկման բենզինի համալիր գինը կարելի է  
որոշել հետևյալ ձևով՝

$$5 \quad R = R_h + \frac{\mathfrak{Z}_2 \cdot R_2 + \mathfrak{Z}_m \cdot R_m + \mathfrak{Z}_h \cdot R_h + \mathfrak{Z}_y \cdot R_y + \mathfrak{Z}_q \cdot R_q}{100} \text{ դրամ/կգ} \quad (3.2.12.)$$

որտեղ՝  $R_h$ -ն՝ մեկ կգ հիմնական վառելանյութի գինն է, դրամ,

$\mathfrak{Z}_2, \mathfrak{Z}_m, \mathfrak{Z}_h, \mathfrak{Z}_y, \mathfrak{Z}_q$ -ն՝ շարժիչային, տրանսմոսիոն, ինդրուստրիալ և կոնսիստենտ  
քսայուղերի ու գործարկման բենզինի ծախսի նորման է հիմնական վառելա-  
նյութի նկատմամբ, տոկոսներով,

$R_2, R_m, R_h, R_y, R_q$ -ն՝ շարժիչային, տրանսմոսիոն, ինդրուստրիալ և կոնսիստենտ  
քսայուղերի ու գործարկման բենզինի գինն է, դրամ:

Գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման համար անհրաժեշտ մեքենայաց-  
ման միջոցները բազմազան են, հետևաբար, տեղի կոնկրետ պայմաններից ելնելով, այս  
կամ այն մեքենայի ընտրությունը չափազանց կարևոր խնդիր է:

Տրակտորային ագրեգատն ընտրելիս՝ շահագործական ցուցանիշներից, այսինքն՝  
հանրապետության զանազան գոտիների պայմաններում դրանք գործադրելու հնարա-  
վորությունից ու նվազագույն շահագործական ծախսերից բացի, չափազանց կարևոր է  
իմանալ նաև դրանց բերված ծախսերի ցուցանիշը:

Ի վերջո գյուղատնտեսական արտադրությունը մեքենայացնելու համար մեքենաների համակարգում ընդգրկված տեխնիկայի բազմաթիվ միջոցներից հաշվարկման միջոցով ընտրվում է տրակտորային ագրեգատի կամ մեքենայի այն տարբերակը, որում նվազագույնի են հասցվում բերված ծախսերը:

Նվազագույն ծախսերը որոշվում են հետևյալ բանաձևով՝

$$P_{\delta} = \zeta + \epsilon \cdot \gamma \text{ դրամ/հա (տ, տկմ, կմ, մ}^3) \quad (3.2.13.)$$

որտեղ՝  $\zeta$ -ն տեխնիկայի շահագործական ծախսերն են, դրամ/հա (տ, տկմ, կմ, մ<sup>3</sup>),

$\epsilon$ -ն՝ կապիտալ ներդրումների արդյունավետության գործակիցը, որը հավասար է 0,15-ի,

$\gamma$ -ն՝ տեսակարար կապիտալ ներդրումները, որոնք իրենց հերթին հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$\gamma = \frac{P_{\text{տ}} \cdot \frac{S_{\delta}}{S_{\text{տ}}} + P_{\delta}}{U_{\delta} \cdot \sigma \cdot \epsilon \cdot S_{\delta}} \text{ դրամ/հատ, տ.կմ, կմ, մ}^3), \quad (3.2.14.)$$

որտեղ՝  $P_{\text{տ}}$ ,  $P_{\delta}$ -ն՝ համապատասխանաբար տրակտորի և գյուղատնտեսական մեքենայի հաշվեկշռային արժեքն է, դրամ,

$S_{\text{տ}}$ ,  $S_{\delta}$ -ն՝ համապատասխանաբար տրակտորի և գյուղատնտեսական մեքենայի տարեկան ծանրաբեռնվածությունն է, ժամ,

$U_{\delta}$ -ն՝ տրակտորային ագրեգատի մեկ ժամ զուտ աշխատանքի արտադրողականությունն է, հա (տ, տկմ, կմ, մ<sup>3</sup>),

$\sigma$ -ն՝ հերթափոխի տևողությունը, ժամ,

$\epsilon$ -ն՝ հերթափոխի ժամանակի օգտագործման ընդհանրացված գործակիցը:

Հանրապետության պայմաններում թրթուրավոր տրակտորներով վար կատարելիս, միջին հաշվով, այն կազմում է 0.62, անվավոր տրակտորներով՝

0.60, իսկ մնացած աշխատանքներում՝ համապատասխանաբար 0.58 և 0.55:

Վերը բերված բանաձևի հայտարարի տառային արտահայտությունների մի մասը ( $U_{\delta} \cdot \sigma \cdot \epsilon$ ) ներկայացնում է տրակտորային ագրեգատի արտադրական հերթափոխային նորման:

Վերը նշված մեթոդական մոտեցումների կիրառումը կարող է օգտակար լինել մեքենայացված աշխատանքների հիմնավորված սակագների սահմանման համար:

Այսպիսով, տվյալ բաժնում ներկայացվեցին տրակտորային ագրեգատների, բերքահավաքի մեքենաների մեքենայացված սակագների հաշվարկների մեթոդական



մոտեցումները, համաձայն որոնց սակագինը ներառում է մի շարք բաղադրիչներ և ենթաբաղադրիչներ, մասնավորապես՝ այն ներառում է շահագործական ծախսերը, որը ընդգրկում է տրակտորիս մեքենավարի և տրակտորային ագրեգատը սպասարկող օժանդակ անձնակազմի վարձատրությունը, տեխնիկայի ամորտիզացիայի արժեքը, տեխնիկայի հիմնական ու ընթացիկ նորոգումների ծախսերը, տեխնիկայի տեխնիկական խնամքի և պահպանման ծախսերը, վառելանյութի, քսայուղերի և գործարկման բենզինի ծախսերը: Սակագինը ներառում է նաև ընդհանուր արտադրական և տնտեսական ծախսերը, նորմատիվային շահույթը, ինչպես նաև ավելացված արժեքի հարկը:

### **3.3. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղությունները**

Աշխատանքի շրջանակներում նախորդ բաժիններում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն տվեցին բացահայտել գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումների հիմնախնդիրները: Տվյալ բաժնի շրջանակներում փորձել ենք ըստ բացահայտված հիմնախնդիրների ներկայացնել դրանց լուծման հիմնական ուղղությունները:

- Գյուղատնտեսական տեխնիկական հավաքակազմի (ներառյալ տրակտորները, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայնները, գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները) նորացման, տեխնիկական վերազինման տեմպերի արագացման հիմնախնդրի լուծման ուղղությամբ առաջարկվում են որոշակի միջոցառումներ:

Գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման խնդրի լուծման ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը: Մատչելի պայմաններով տեխնիկական միջոցների ներմուծման նպատակով գյուղատնտեսական տեխնիկա արտադրող, մատակարարող, ինչպես նաև ֆինանսական ընկերությունների հետ պետական մակարդակով բանակցությունների վարում և պետական երաշխիքների տրամադրմամբ տեխնիկայի ներմուծման հնարավորությունների ստեղծում:

Նախորդ տարիների փորձից ելնելով (Ճապոնիա, Չինաստան, Հնդկաստան)՝ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման դրամաշնորհային ծրագրերի իրականացման համար տարբեր երկրների հայտերի մշակում, ներկայացում և հետևողական բանակցությունների վարում:

Գյուղատնտեսական տեխնիկայի հագեցվածության մակարդակի բարձրացման կարևոր ուղղություն կարող է լինել Ռուսաստանի, Բելոռուսի, Չինաստանի և այլ երկրների գյուղատնտեսական տեխնիկա արտադրող ընկերությունների կողմից տեխնիկայի հիմնական հանգույցների ներմուծման հիման վրա հավաքման գործընթացի կազմակերպում և տեխնիկան գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով մատակարարում:

- Ինչպես հիշատակել էինք նախորդ բաժիններում, կարևոր հիմնախնդիր է գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակության և հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկություններին համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրումը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է համարվում հետևյալ միջոցառումների իրականացումը:

Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման բնագավառում լիզինգային գործարքներ իրականացնում են սակավաթիվ ընկերություններ, մասնավորապես՝ CARD ագրոկրեդիտը, «Ֆարմ կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպությունը, «Ագբա լիզինգ» ընկերությունը, «Գալոպեր» ՍՊԸ-ն և այլն: Սակայն, այդ ընկերությունների առաջադրած պայմանները չեն բխում գյուղատնտեսության առանձնահատկություններից և ներկայիս վճարունակության պայմաններից:

Չետևաբար, անհրաժեշտ է գյուղատնտեսության առանձնահատկություններին և առկա վճարունակության պայմաններին համապատասխան լիզինգային մեխանիզմների կիրառում: Վերջինս հնարավոր է համարվում պետության մասնակցությամբ լիզինգային մեխանիզմների կիրառման, մասնավորապես՝ պետության կողմից կանխավճարի և տոկոսադրույքի սուբսիդավորման դեպքում: Կարևոր է համարվում նաև գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման համար մատչելի նպատակային, երկարաժամկետ, տոկոսադրույքի սուբսիդավորմամբ վարկերի տրամադրումը:

- Արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի հիմնախնդիրներից է գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումների գործառույթ ունեցող տնտեսավարողների, տեխնիկայի առանձին սեփականատերերի և գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների արմատավորումը: Չինախնդրի լուծման ուղղությամբ առաջարկվում է հետևյալ միջոցառումների իրականացումը:

Արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող սուբյեկտների և գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև կողմերի պատասխանատվության և իրավունքների դրույթները ներառող օրինակելի պայմանագրի մշակում և ներդրում:

Արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառում նպատակային վարկերի տրամադրման, դրամաշնորհային, պետական աջակցության ծրագրերից օգտվելու համար նախապայման համարել գյուղատնտեսությունում տնտեսավարողների հետ պայմանագրային հարաբերությունների առկայությունը:

Արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող կոոպերատիվների կանոնադրության մեջ ամրագրել դրույթ այն մասին, որ մեքենայացված աշխատանքներով սպասարկումներն իրականացվեն նախօրոք կնքված պայմանագրերի հիման վրա:

Մեքենայացված աշխատանքների սակագների հաշվարկման մեթոդաբանության մշակում և դրա հիման վրա հիմնավորված սակագների հաշվարկում և արտադրատեխնիկական սպասարկումների պայմանագրերում դրանց կիրառում:

Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող տարբեր կազմակերպական ձևեր ունեցող մասնագիտացված կառույցների՝ կոոպերատիվների, ընկերությունների ձևավորման և դրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցառումները հետևյալն են:

Պետության մասնակցությամբ մատչելի պայմաններով ներմուծված գյուղատնտեսական տեխնիկայի՝ առաջնահերթ արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող կոոպերատիվներին տրամադրում:

Տեխնիկական հագեցվածության պետական աջակցությամբ ծրագրերի՝ կոոպերատիվների միջոցով իրականացման առաջնահերթության սահմանում:

Արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող առանձին տնտեսավարողների և կոոպերատիվների համար հարկային հավասար պայմանների ստեղծում, մասնավորապես՝ օրենսդրական փոփոխությունների կիրառմամբ գյուղատնտեսական կոոպերատիվների համար ավելացված արժեքի հարկի չհարկվող նվազագույն շեմի հաշվարկում՝ կոոպերատիվի անդամների թվից կախվածության մեջ գտնվող մեխանիզմների կիրառմամբ:

- Արտադրատեխնիկական սպասարկումների ոլորտի զարգացման հիմնախնդիրներից է գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական ռեսուրսների մատակարարում:

րարման արդյունավետ համակարգի ձևավորումը, որի իրականացման համար անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները:

Առաջնահերթ է համարվում գյուղատնտեսության մեջ օգտագործվող նյութական ռեսուրսներ մատակարարող տնտեսավարողների տեղաբաշխման, ռեսուրսների առկայության, դրանց պահանջարկի, գների, իրացման պայմանների վերաբերյալ տեղեկատվական համակարգի ձևավորումը: Տվյալ գործընթացում նպատակահարմար է համարվում համացանցի օգտագործումը:

Հանրապետությունում գործող մատակարար ընկերություններին միջպետական մակարդակով արտերկրի ռեսուրսներ արտադրող և մատակարարող ընկերությունների հետ կապերի հաստատման ուղղությամբ աջակցությունը:

Ներկայումս գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի հիմնախնդիրներից է նաև գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական սպասարկումների գործունեության բարելավումը և կատարելագործումը, վերջինիս ուղղությամբ անհրաժեշտ է համարվում հետևյալ միջոցառումների իրականացումը:

Պետական մակարդակով հանրապետությունում առկա գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական սպասարկումների և նորոգումների գործընթացում մասնագիտացված կարողությունների հաշվառում, առկա խնդիրների բացահայտում և դրանց բարելավման մեխանիզմների մշակում:

Պետական մակարդակով տեխնիկա արտադրող և մատակարարող ընկերությունների կողմից Հայաստանում ներկայացուցչությունների և տեխնիկական սպասարկման կետերի հիմնման ծրագրերի իրականացում:

Մեքենաօգտագործման ներկա վիճակի ուսումնասիրությունից բացահայտվել է հողերի մշակության՝ համատեղ օգտագործման սկզբունքով կազմակերպման խնդրի հրատապությունը և այդ ուղղությամբ համապատասխան մեխանիզմների, միջոցառումների մշակման և ներդրման անհրաժեշտությունը:

Ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների տեխնիկական միջոցներով ապահովվածության ցածր մակարդակի հետևանքով մշտապես ծագում են դժվարություններ և ոչ հավասար պայմաններ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական տեխնիկական տնօրինող սեփականատերերի միջև: Տեխնիկական միջոցների ցածր արտադրողականությունը ևս բացասական ներգործություն է ունենում գյուղատնտեսական արտադրության արդյունավետության վրա:

Գյուղատնտեսության տեխնիկաօգտագործման բնագավառում առկա խնդիրների գնահատման արդյունքում ձևավորվել են առաջարկություններ՝ ուղղված գյուղատնտեսության տեխնիկական միջոցներով սպասարկումների բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը, որոնք մասնավորապես հետևյալն են՝

- գյուղատնտեսության տեխնիկաօգտագործման կազմակերպումը կոոպերացման սկզբունքով, որը հնարավորություն կտա զգալիորեն լուծել գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման մի շարք հարցեր, մասնավորապես՝ տեխնիկայի ծանրաբեռնված օգտագործում, տեխնիկական պատրաստության մակարդակի բարձրացում, տեխնիկական միջոցների նորացման հնարավորությունների ստեղծում, սպասարկումների որակի բարելավում, ագրոտեխնիկական պահանջների ապահովում և այլն,
- համատեղ սկզբունքով հողօգտագործման մեխանիզմների մշակում և ներդրում,
- կոոպերացման և միավորման սկզբունքով տեխնիկա օգտագործող տնտեսավարողների և անհատ սեփականատերերի համար հավասար տնտեսական պայմանների ստեղծում,
- գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների ներկայիս ֆինանսական սուղ պայմաններում տեխնիկական միջոցների նորացումը և դրանց համալրումը հնարավոր է իրականացնել տեխնիկայի մատակարարման լիզինգային մեխանիզմների կիրառմամբ, ինչպես նաև տեխնիկական հագեցվածության համար նպատակային վարկերի տրամադրմամբ: Լիզինգային մեխանիզմներն առավել արդյունավետ կարող են գործել և փոխադարձ պարտավորությունների կատարումն ապահովել, եթե դրանք կիրառվեն կոոպերացման սկզբունքով գործող կառույցների, միավորումների նկատմամբ,
- դրամաշնորհային ծրագրերի հաշվին հանրապետություն ներմուծվող գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման տրամադրման մատչելի և արդարացի մեխանիզմների կիրառում:

Վերը նշված ամփոփ միջոցառումների իրականացման համար համապատասխան մեխանիզմների մշակումն ու դրանց իրականացումը կարող են նպաստել գյուղատնտեսությունում տեխնիկական միջոցների օգտագործման արդյունավետության և արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակի բարձրացմանը:

Հանրապետության համայնքներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկա պայմաններում գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման առավել արդյունավետ ձև կարող է հանդիսանալ դրանց օգտագործման կազմակերպումը կոոպերացման սկզբունքով՝ պահպանելով տեխնիկայի սեփականատերերի սեփականության իրավունքը:

Հաշվի առնելով գյուղատնտեսական տեխնիկայի համայնքից համայնք և տարբեր տարածաշրջաններ փոխադրման բարդությունները և լրացուցիչ ծախսերը, նպատակահարմար է գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցները ձևավորել գյուղական համայնքներում՝ տեխնիկայի սեփականատեր հանդիսացող գյուղացիական տնտեսությունների տեխնիկական միջոցների բազայի վրա:

Առաջարկվում է համատեղ օգտագործման գործընթացում ներառել հետևյալ տեխնիկական միջոցները՝

- տրակտորներ, բեռնատար ավտոմեքենաներ և դրանց կցասայլեր,
- հողամշակ և ցանքի մեքենաներ (գութաններ, կուլտիվատորներ, երեսվարիչներ, տափաններ, շարքացաններ, կարտոֆիլատնկիչներ և այլն),
- բերքահավաքի և հետբերքահավաքային մեքենաներ (հացահատիկահավաք կոմբայններ, կարտոֆիլահանիչներ, կերահավաք և սիլոսահավաք կոմբայններ, խտհնձիչներ, հավաքիչ-մամլիչներ և այլն):

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի տեխնիկական միջոցների հավաքակազմում կարող են ընդգրկվել արտադրության առանձնահատկություններից կախված այլ տեխնիկական միջոցներ:

Գյուղական համայնքներում նշված կառույցը պետք է ստեղծվի կամավորության սկզբունքով՝ տեխնիկայի սեփականատերերի ցանկությամբ:


Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի կազմակերպման սխեման ներկայացված է 7-րդ գծապատկերում:

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի գործունեությունն ապահովելու համար նրա կազմում պետք է լինեն հետևյալ ստորաբաժանումները՝

- գյուղացիական տնտեսությունների պահանջարկի գնահատման, խորհրդատվության և պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման,
- ինժեներական, նորոգման և տեխնիկական խնամքի կազմակերպման,

- Այուրօրհանգիստական ռեսուրսների ապահովման:

Նշված ստորաբաժանումները կունենան իրենց համապատասխան գործառույթները:



Գծապատկեր 7: Գյուղական համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի ձևավորման կազմակերպական սխեման



Գյուղական համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի ձևավորման անհրաժեշտությունը հիմնավորելու համար կատարվել է վերջինի ստեղծման ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և խոչընդոտների (SWOT) վերլուծություն:

#### **Ուժեղ կողմերն են՝**

- գյուղական համայնքներում ներկայումս առկա գյուղատնտեսական տեխնիկայի համակարգված օգտագործում,
- գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական պատրաստության մակարդակի բարձրացում և տեխնիկայի ծանրաբեռնված օգտագործման ապահովում,
- ելնելով ագրոտեխնիկական պահանջներից՝ գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների կատարման որակի բարելավում,
- համեմատաբար ցածր սակագներով գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների իրականացում,
- ռեսուրսներ մատակարարող և գյուղացիական տնտեսությունների հետ պայմանագրային հարաբերությունների հաստատում,
- տեխնիկական միջոցների պահպանման և շահագործման պայմանների բարելավում, նորոգման և տեխնիկական խնամքի աշխատանքների արդյունավետ կազմակերպում,
- գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսների (վառելանյութ-քսանյութեր, պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլն) մատչելի գներով ձեռքբերում և դրանց պահպանման պայմանների բարելավում ու կորուստների կրճատում,
- գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների հետ կապված ընդհանուր (ոչ արտադրական) ծախսերի կրճատում,
- համայնքի բնակիչների համար կայուն աշխատատեղերի ապահովում:

#### **Թույլ կողմերն են՝**

- գյուղական համայնքներում առկա տեխնիկայի ծառայության մեծ ժամկետը, տեխնիկական պատրաստության ցածր մակարդակը,
- տեխնիկայի սեփականատերերի միջոցների սղության պատճառով նոր տեխնիկական միջոցների, պահուստամասերի, վառելանյութ-քսանյութերի և այլ ռեսուրսների ձեռքբերման համար կազմավորման սկզբնական փուլի դժվարությունները,

- գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի կազմավորման սկզբնական փուլում նորոգման բազայի, պահեստային տնտեսության ստեղծման համար որոշակի ներդրումների անհրաժեշտությունը, որը հնարավոր կլինի փոխառու (վարկային) ռեսուրսների ներգրավմամբ,
- կառույցի ձևավորման սկզբնական փուլում գյուղացիական տնտեսությունների հետ պայմանագրային հարաբերությունների ձևավորման և գյուղացիական տնտեսությունների կողմից վարձավճարների փոխհատուցման դժվարությունները,
- նմանատիպ գործառույթ ունեցող մասնավոր տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ անհավասար մրցակցային դաշտի առկայությունը,
- կոոպերացման սկզբունքով գործող կառույցների գործունեությունը խթանող իրավաօրենսդրական դաշտի բացակայությունը:

#### **Յնարավորություններն են՝**

- գյուղական համայնքներում առկա գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ օգտագործումը,
- համայնքի կտրվածքով գյուղատնտեսական դաշտային մեքենայացված աշխատանքների ագրոտեխնիկական պահանջներով և նշված ժամկետներում կատարման ապահովումը,
- տեխնիկական միջոցների շահագործման պայմանների և տեխնիկական վիճակի բարելավման արդյունքում տեխնիկայի արդյունավետ օգտագործման ապահովումը և շահագործման ծախսերի կրճատումը, արդյունքում՝ մատչելի սակագների սահմանումը,
- տեխնիկական միջոցների օգտագործման ծախսերի կրճատման արդյունքում՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության ծախսերի կրճատումը,
- պայմանագրային հարաբերությունների սահմանման միջոցով գյուղատնտեսությունում օգտագործվող ռեսուրսներ մատակարարող մեծածախ ընկերություններից մատչելի պայմաններով բարձրորակ միջոցների ձեռքբերումը,
- օգտագործվող ռեսուրսների (վառելանյութեր, քսանյութեր, պարարտանյութեր, թունաքիմիկատներ) պահպանման պայմանների բարելավման արդյունքում՝ կորուստների կրճատումը և որակական հատկանիշների բարելավումը,

- նորոգման և տեխնիկական սպասարկումների բազայի կազմավորումը, այդ աշխատանքների որակի բարելավումը, տեխնիկայի պատրաստության մակարդակի բարձրացումը ու շահագործական ծախսերի կրճատումը,
- գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների սակագների փոխհատուցման համար գյուղացիական տնտեսություններում մատչելի մեխանիզմների կիրառումը, մասնավորապես՝ բնամթերային հատուցումը, հետագայում այն կառույցի կողմից իրացնելը և գոյացող հասույթների մի մասը բազայի ամրապնդմանը նպատակաուղղումը,
- տեխնիկական միջոցների նորացման հնարավորությունների առկայությունը,
- վարկային միջոցների ձեռքբերման հնարավորությունների ստեղծումը և կառույցի բազայի ամրապնդմանը դրանց նպատակաուղղումը,
- լիզինգային մեխանիզմների կիրառմամբ տեխնիկական միջոցների ձեռքբերումը:

**խոչընդոտներն են՝**

- գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի առավելությունների նկատմամբ տեխնիկայի սեփականատեր գյուղացիական տնտեսությունների անվստահությունը,
- գյուղացիական տնտեսությունների վճարունակության ցածր մակարդակը,
- կոոպերատիվ սկզբունքով գործող սպասարկման գործառույթ ունեցող կառույցների խթանման առումով առկա իրավա-օրենսդրական դաշտի անկատարությունը,
- տեխնիկայի օգտագործման նման մեխանիզմի կիրառման ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմինների փոքր շահագրգռվածությունը:

Գյուղական համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի ուժեղ և թույլ կողմերի հնարավորությունների և խոչընդոտների վերլուծությունից ակնհայտ է, որ ուժեղ կողմերի և հնարավորությունների արդյունավետ օգտագործումը պայմաններ կստեղծի՝ կանխելու թույլ կողմերի հետևանքները և արդյունքում ձևավորելու գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքների իրականացման գործուն մեխանիզմ:

**3.4. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը**

Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը փորձել ենք գնահատել գյուղական համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի գործունեության արդյունքների գնահատման հիման վրա:

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի կազմը և կառուցվածքն ընդունել ենք պայմանականորեն մեկ միջինից մեծ չափեր ունեցող համայնքի կտրվածքով, մասնավորապես, որն ունի շուրջ 2000 հա վարելահողեր, շուրջ 150 հա բազմամյա տնկարկներ, շուրջ 650 հա խոտհարքներ և այլն:

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի կազմում առաջարկվում են հետևյալ տեխնիկական միջոցները՝

- անիվավոր և թրթուրավոր տրակտորներ,
- տրակտորային գութաններ,
- տրակտորային շարքացաններ,
- տրակտորային կուլտիվատորներ,
- տրակտորային խոտհնձիչներ,
- տրակտորային սրսկիչներ,
- հացահատիկահավաք կոմբայններ,
- տրակտորային կցասայլեր:

Արտադրատեխնիկական սպասարկումների համատեղ օգտագործման կառույցի արդյունավետ գործունեության համար կարևոր նախապայման է համարվում տեխնիկայի անհրաժեշտ ծանրաբեռնվածության ապահովումը:

Կառույցի համար առաջարկվում է տեխնիկական միջոցների հետևյալ կազմը (աղյուսակ 3.4.1):

Աղյուսակ 3.4.1

**Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի տեխնիկական միջոցների առաջարկվող կազմը**

Տեխնիկական միջոցի անվանում և մակնիշը	Քանակը, միավոր
Անիվավոր տրակտորներ, ընդամենը	14
այդ թվում`	
ՄՏՁ-80	3
ՄՏՁ-82	4
ՅուՄՁ-6	2
S-40 տարբեր մոդիֆիկացիաների	3
Թրթուրավոր տրակտորներ	
ԴՏ-75ՄՎ	2
Տրակտորային գուբաններ	
ՊԼՆ-3-35	7
ՊԼՆ-5-35	2
ՊԼՍ-5-25Ա	2
Տրակտորային կուլտիվատորներ	
ԿՊՍ-4	9
ԿՈՆ-4.2	6
Տրակտորային շարքացաններ	
ՍՁ-3.6	6
Տրակտորային խոտհնձիչներ	
ԿՍ-2.1	6
ԿՍԳ-2.1	3
Տրակտորային խոտի փոցխ	
ԳՊՊ-6.0Գ	3
Տրակտորային մամլիչ բարդոցիչ	
ՊՊԼ-Ֆ-1.6Գ	3
Տրակտորային սրսկիչներ	
ՕՎՏ-1Վ	5
Հացահատիկահավաք կոմբայն	
ՍԿ-5	2
Տրակտորային կցասայլեր	
2-ՊՏՍՍ-4Ս-785Ա	10

Գյուղատնտեսական տեխնիկայի, մասնավորապես` տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների միավորների թիվը վերցվել է այն համամասնությամբ, որպեսզի հնարավոր լինի ապահովել տեխնիկայի նորմատիվային ծանրաբեռնվածությամբ մոտ ծանրաբեռնվածություն:

Ինչպես նշել էինք, արտադրատեխնիկական սպասարկումների գործընթացում արդյունավետությունը պայմանավորված է գյուղատնտեսական տեխնիկայի, գյուղատնտեսական ագրեգատների համար համապատասխան ծանրաբեռնվածության ապահովման դեպքում: Հակառակ պարագայում գյուղատնտեսական տեխնիկայի թերբեռնվածությունը կհանգեցնի միավորի` 1 հա-ի, 1 տկմ-ի, 1 տոննայի վրա կատարվող տեսակարար ծախսերի ավելացմանը և արդյունավետության անկմանը:

Առաջարկվող գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի մեջ ընդգրկվող տեխնիկական միջոցների տարեկան ծանրաբեռնվածության կողմնորոշիչ նորմաները հետևյալն են (աղյուսակ 3.4.2):

Աղյուսակ 3.4.2

**Տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցում ընդգրկվող տեխնիկական միջոցների տարեկան ծանրաբեռնվածության կողմնորոշիչ նորմաները<sup>78</sup>**

Գյուղատնտեսական տեխնիկայի անվանումը և մակնիշը	Տարեկան ծանրաբեռնվածությունը		
	Պայմանական էտալոնային հեկտարներով	Ֆիզիկական հեկտարներով	Ժամերով
Տրակտորներ			
ՄՏՁ-80	945	-	1335
ՄՏՁ-82	945	-	1335
ՅուՄՁ-6	810	-	1350
ԴՏ-75ՄՎ	1320	-	1200
Գութաններ			
ՊԼՆ-3-35	-	125	250
ՊԼՆ-5-35	-	125	250
ՊԼՍ-5-25Ա	-	125	250
Կուլտիվատորներ			
ԿՊՍ-4	-	240	200
ԿՈՆ-4.2		240	200
Շարքացաններ			
ՍՁ-3.6	-	132	118
Խոտհնձիչներ			
ԿՍ-2.1	-	102	185
ԿՍԳ-2.1	-	102	185
Խոտի փոցիս			
ԳՊՊ-6.0Գ	-	355	188
Հավաքիչ-մամլիչներով			
ՊՊԼ-Ֆ-1.6Գ	-	144	188
Սրսկիչներ			
ՕՎՏ-1Վ	-	336	168
Հացահատիկահավաք կոմբայն			
ՍԿ-5	-	119	209
Տրակտորային կցասայլեր			
2-ՊՏՍ-4Ս-785Ա	-	-	580

Տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի գործունեության արդյունավետության հաշվարկման համար անհրաժեշտ է ունենալ տեխնիկական միջոցների

<sup>78</sup> Հիմք է ընդունվել՝ Ա. Զ. Համբարձումյան, Զ.Ս. Ծպնեցյան, Ա.Ս. Մարգարյան Գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների գնահատումը: «Ասողիկ» հրատարակչություն, Երևան 2001թ.-էջ 17-21 նյութերը

արժեքը (տեխնիկայի հիմնական մասն ընդունել ենք որպես նոր): Տեխնիկայի արժեքը ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ներկայացվում է ստորև (աղյուսակ 3.4.3):

Աղյուսակ 3.4.3

**Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի կազմում գտնվող տեխնիկական միջոցների արժեքը**<sup>79,80,81,82,83,84,85</sup>

Գյուղատնտեսական տեխնիկայի անվանումը և մակնիշը	Տեխնիկայի արժեքը	
	ԱՄՆ դոլար	հազ. ՀՀ դրամ
1	2	3
<b>Տրակտորներ</b>		
ՄՏՁ-80	17150	7061
ՄՏՁ-82	18950	7802
ՅուՄՁ-6	15000	6176
S-40 (տարբեր մոդիֆիկացիայի)	6000	2470
ԴՏ-75ՄՎ	25000	10293
<b>Գութաններ</b>		
ՊԼՆ-3-35	1800	741
ՊԼՆ-5-35	2620	1079
ՊԼՍ-5-25Ա	1850	762
<b>Կուլտիվատորներ</b>		
ԿՊՍ-4	3920	1614
ԿՌՆ-4.2	2000	823
<b>Շարքացաններ</b>		
ՍՁ-3.6	4500	1853
<b>Խոտհնձիչներ</b>		
ԿՍ-2.1	790	325
ԿՍԳ-2.1	975	401
<b>Խոտի փոցխ</b>		
ԳՊՊ-6.0Գ	2000	823
<b>Հավաքիչ-մամլիչներով</b>		
ՊՊԼ-Ֆ-1.6Գ	5400	2223
աղյուսակ 3.4.3-ի շարունակությունը		
1	2	3

<sup>79</sup> www.belagrosnab.ru

<sup>80</sup> kruid-a-agro.kazprom.net

<sup>81</sup> www.zol.ru

<sup>82</sup> mehanizator-ua.ru

<sup>83</sup> www.mtz.ru

<sup>84</sup> www.agroserver.ru

<sup>85</sup> nizhegorodskaya.all.biz

Սրսկիչներ		
ՕՎՏ-1Վ	3000	1235
Հացահատիկահավաք կոմբայն		
ՍԿ-5Ս	70000	28819
Տրակտորային կցասայլեր		
2-ՊՏՍ-4Ս-785Ա	3500	1441

Փորձ ենք արել հաշվարկել գյուղատնտեսական մեքենայացված հիմնական աշխատանքների սակագները: Կիրառելով 3.2. բաժնում առաջադրված մեթոդական մոտեցումները՝ կատարվել են համապատասխան հաշվարկներ՝ գյուղատնտեսական առանձին ագրեգատներով սպասարկումների սակագների հաշվարկման ուղղությամբ: Ընդ որում, սակագնի կազմում ընդգրկվել ենք ինչպես շահույթի մասը ծախսերի 20%-ի չափով, այնպես էլ ավելացված արժեքի հարկը: Ըստ առանձին ագրեգատների և հացահատիկահավաք կոմբայնի սակագնի հաշվարկի արդյունքային մասը ներկայացվում է 3.4.4 աղյուսակում:

Հիմք ունենալով գյուղատնտեսական տեխնիկայի մակնիշային կազմը, թվաքանակը, նորմատիվային (նախընտրելի) ծանրաբեռնվածությունը, ըստ առանձին մեքենայական ագրեգատների սակագնի հաշվարկի տվյալները՝ փորձել ենք գնահատել գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի գործունեության արդյունավետությունը:

Նշված հաշվարկները կատարելու համար տեխնիկայի, մասնավորապես՝ տրակտորների տարեկան ծանրաբեռնվածությունը բաշխել ենք ըստ մեքենայական ագրեգատների և արտադրական գործընթացների: Ինչպես նաև, հաշվարկվել են առաջարկվող ծանրաբեռնվածությամբ աշխատելու պայմաններում առանձին արտադրական գործընթացների ծավալները և դրանց իրականացումից ստացվող հասույթն ու սպասվող շահույթը: Վերջինիս արդյունքները ներկայացված են 3.4.5 աղյուսակում:



**Գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների ագրեգատներով սպասարկումների սակագնի հաշվարկի արդյունքները**

Արտադրական գործընթացի անվանումը	Ագրեգատի կազմը (տրակտոր և գյուղատնտեսական մեքենա)	Տեխնիկայի տարեկան ծանրաբեռնվածությունը, ժամ	1 ժամ աշխատանքի համար շահագործման ծախսերը, դրամ/ժամ	1 ժամ աշխատանքի համար շահագործման ծախսերը՝ ներառյալ 3 % այլ չնախատեսված ծախսեր, դրամ/ժամ	1 ժամ աշխատանքի հաշվով շահույթը 20 %-ի չափով, դրամ	1 ժամ աշխատանքի համար շահագործման ծախսերը և շահույթը, դրամ/ժամ	Ավելացված արժեքի հարկը, 20%, դրամ/ժամ	Սակագինը, դրամ/ժամ	Ագրեգատի ժամային արտադրողականությունը, հա/ժամ, տ.կմ/ժամ	Սակագինը, հա/դրամ, տ.կմ/դրամ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
	<b>USQ-80/82</b>	1350								
Վար	ՊԼՆ-3-35	250	11088.0	11420.6	2284.1	13704.7	2740.9	16445.7	0.8	21358.0
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	200	11072.2	11404.4	2280.9	13685.3	2737.1	16422.3	3.1	5272.0
Կուլտիվացիա միջշարային	ԿՈՆ-4.2	178	10078.8	10381.2	2076.2	12457.4	2491.5	14948.9	1.9	7822.5
Ցանք	ՍԶ-3.6	118	12180.1	12545.5	2509.1	15054.6	3010.9	18065.6	2.5	7168.9
Հունձ	ԿՍ-2.1 (ԿՍԳ-2.1)	185	9500.6	9785.6	1957.1	11742.7	2348.5	14091.3	1.3	10881.3
Հավաքում մամլում	ՊՊԼ-Ֆ-1.6Գ	188	11542.2	11888.4	2377.7	14266.1	2853.2	17119.4	3.5	4891.2
Սրսկում	ՕՎՏ-1Վ	203	9494.8	9779.6	1955.9	11735.5	2347.1	14082.6	2.2	6489.7
դաշտային շակաբույսերի համար									16.8	838.3
Փոխադրում	2-ՊՏՍ-4Ս-785Ա	580	6425.3	6618.0	1323.6	7941.6	1588.3	9529.9	33.6	283.6

աղյուսակ 3.4.4-ի շարունակությունը<sup>86</sup>

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
	<b>ՅուՍՁ-6</b>	1350								
Վար	ՊԼՆ-3-35	250	9233.8	9510.8	1902.2	11413.0	2282.6	13695.6	0.7	19154.6
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	200	9424.1	9706.8	1941.4	11648.1	2329.6	13977.8	2.9	4832.4
Կուլտիվացիա միջշարային	ԿՈՆ-4.2	178	8430.6	8683.6	1736.7	10420.3	2084.1	12504.3	1.8	7046.7
Սրսկում	ՕՎՏ-1Վ	203	8052.6	8294.2	1658.8	9953.0	1990.6	11943.6	2.0	5927.4
				0.0	0.0	0.0	0.0	0.0	15.6	765.6
Փոխադրում	2-ՊՏՍ-4Ս-785Ա	580	5395.2	5557.0	1111.4	6668.4	1333.7	8002.1	31.2	256.5
	<b>S-40 (տարբ. մոդիֆ.)</b>	1200								
Վար	ՊԼՍ-5-25Ա	250	8195.4	8441.3	1688.3	10129.6	2025.9	12155.5	0.3	34929.5
Կուլտիվացիա միջշարային	ԿՈՆ-4.2	178	7482.8	7707.3	1541.5	9248.7	1849.7	11098.5	1.6	6775.6
Հունձ	ԿՍ-2.1 (ԿՍԳ-2.1)	185	6904.6	7111.7	1422.3	8534.0	1706.8	10240.8	1.1	9226.0
Խոտի փոցխում	ԳՊՊ-6.0Գ	188	6684.2	6884.7	1376.9	8261.6	1652.3	9914.0	2.2	4589.8
Փոխադրում	2-ՊՏՍ-4Ս-785Ա	580	4802.7	4946.8	989.4	5936.2	1187.2	7123.4	28.8	247.3
	<b>ՊՏ-75ՍՎ</b>	1200								
Վար	ՊԼՆ-5-35	250	13236.3	13633.4	2726.7	16360.1	3272.0	19632.1	0.8	23796.5
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	200	12592.2	12970.0	2594.0	15564.0	3112.8	18676.8	3.3	5596.0
Ցանք	ՍՁ-3.6	118	13700.1	14111.1	2822.2	16933.4	3386.7	20320.0	2.7	7525.9
	<b>ՍԿ-5Ս</b>	205								
Կոմբայնային բերքահավաք		205	49993.0	51492.7	10298.5	61791.3	12358.3	74149.6	2.6	28063.0

<sup>86</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

**Տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ծանրաբեռնվածության բաշխումը և արտադրական գործընթացների ծավալները, սպասվող հասույթի և շահույթի հաշվարկման արդյունքները<sup>87</sup>**

Արտադրական գործընթացի անվանումը	Ագրեգատի կազմը (տրակտոր և գյուղատնտեսական մեքենա)	Տեխնիկայի միավորները	Առանձին արտադրական գործընթացների վրա ծախսվող աշխատանքային ժամանակը, ժամ	Առանձին արտադրական գործընթացների ծավալը, հա, տ, տ.կմ,	Ծառայություններից սպասվող հասույթը, հազ. դրամ	Շահույթը ծախսերի և հարկերի փոխհատուցումից հետո, հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
	<b>USQ-80/82</b>	7				
Վար	ՊԼՆ-3-35	5	1250	963	20557.12	2855.38
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	5	1000	3115	16422.32	2281.06
Կուլտիվացիա միջշարային	ԿՈՆ-4.2	3	534	1020	7982.71	1108.80
Ցանք	ՍԶ-3.6	4	472	1189	8526.95	1184.39
Հունձ	ԿՍ-2.1 (ԿՍԳ-2.1)	6	1110	1437	15641.30	2172.58
Հավաքում մանրում	ՊՊԼ-Ֆ-1.6Գ	3	564	1974	9655.32	1341.12
Սրսկում	ՕՎՏ-1Վ	4	650	1501	9148.09	1270.67
Սրսկում դաշտային մշակաբույսերի համար			162	2728	2287.02	317.67
Փոխադրում	2-ՊՏՍ-4Ս-785Ա	6	3480	116928	33164.22	4606.51
	<b>ՅուՍԶ-6</b>	2				
Վար	ՊԼՆ-3-35	2	500	358	6847.78	951.16
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	2	400	1157	5591.10	776.60
Կուլտիվացիա միջշարային	ԿՈՆ-4.2	1	178	316	2225.77	309.16
Սրսկում	ՕՎՏ-1Վ	1	162	644	1939.65	269.42
Սրսկում դաշտային մշակաբույսերի համար			41	633	484.91	67.35
Փոխադրում	2-ՊՏՍ-4Ս-785Ա	2	1160	36192	9282.43	1289.33
	<b>S-40 (տարբ. մոդիֆ.)</b>	3				
Վար	ՊԼՍ-5-25Ա	2	500	174	6077.73	844.20
Կուլտիվացիա միջշարային	ԿՈՆ-4.2	2	356	583	3951.05	548.80

<sup>87</sup> Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

աղյուսակ 3.4.5-ի շարունակությունը

	2	3	4	5	6	7
Հունձ	ԿՍ-2.1 (ԿՍԳ-2.1)	3	555	616	5683.66	789.46
Խոտի փոցխում	ԳՊՊ-6.0Գ	3	564	1218	5591.47	776.66
Փոխադրում	2-ՊՏՍ-4Ս-785Ա	2	1160	33408	8263.19	1147.76
	<b>ՊՏ-75ՍՎ</b>	2				
Վար	ՊԼՆ-5-35	2	500	413	9816.05	1363.45
Կուլտիվացիա	ԿՊՍ-4	2	400	1335	7470.71	1037.68
Ցանք	ՍԶ-3.6	2	236	637	4795.53	666.10
	<b>ՍԿ-5Ս</b>	2				
Կոմբայնային բերքահավաք			205	542	15200.66	2111.37
<b>Ընդամենը</b>					<b>216606.74</b>	<b>30086.68</b>

Արտադրական գործընթացների ամփոփ ծավալները հետևյալն են՝

- վար՝ 1907 հա,
- կուլտիվացիա միջշարային՝ 5607 հա,
- կուլտիվացիա՝ 1919 հա,
- ցանք՝ 1827 հա,
- հունձ՝ 2054 հա,
- խոտի փոցխում՝ 1218 հա,
- խոտի հավաքում մանլում՝ 1974 տոննա,
- շարային կուլտուրաների, այգիների սրսկում՝ 2144 հա,
- դաշտային մշակաբույսերի սրսկում՝ 3362 հա,
- փոխադրում՝ 186528 տ.կմ,
- կոմբայնային բերքահավաք՝ 542 հա:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ տարվա կտրվածքով արտադրական սպասարկումների արդյունքում հասույթը տեխնիկայի համատեղ օգտագործման հատույցի հաշվով կազմում է 216.6 մլն դրամ, իսկ հաշվարկային շահույթը բոլոր ծախսերը փոխհատուցելուց հետո կազմում է 30.1 մլն դրամ:

Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ ենք համարում գնահատել այդ կառույցի տեխնիկական միջոցների համալրման համար պահանջվող ծախսերը և գնահատել դրա փոխհատուցման ժամկետը:

Տեխնիկական միջոցների համալրման համար ծախսերի հաշվարկը ներկայացվում է ստորև 3.4.6 աղյուսակում:

**Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի  
տեխնիկական միջոցների համալրման ծախսերի հաշվարկը**

Գյուղատնտեսական տեխնիկայի անվանումը և մակնիշը	Տեխնիկայի արժեքը, հազ. դրամ	Տեխնիկայի միավորները	Ընդհանուր արժեքը, հազ. դրամ
Տրակտորներ			
ՄՏՁ-80	7061	3	21183
ՄՏՁ-82	7802	4	31208
ՅուՄՁ-6	6176	2	12352
S-40 (տարբեր մոդիֆիկացիայի)	2470	3	7410
ԴՏ-75ՄՎ	10293	2	20586
Գութաններ			
ՊԼՆ-3-35	741	7	5187
ՊԼՆ-5-35	1079	2	2158
ՊԼՍ-5-25Ա	762	2	1524
Կուլտիվատորներ			
ԿՊՍ-4	1614	9	14526
ԿՈՆ-4.2	823	6	4938
Շարքացաններ			
ՍՁ-3.6	1853	6	11118
Խոտհնձիչներ			
ԿՍ-2.1	325	6	1950
ԿՍԳ-2.1	401	3	1203
Խոտի փոցխ			
ԳՊՊ-6.0Գ	823	3	2469
Հավաքիչ-մամլիչներով			
ՊՊԼ-Ֆ-1.6Գ	2223	3	6669
Սրսկիչներ			
ՕՎՏ-1Վ	1235	5	6175
Հացահատիկահավաք կոմբայն			
ՍԿ-5Մ	28819	2	57638
Տրակտորային կցասայլեր			
2-ՊՏՍՍ-4Մ-785Ա	1441	10	14410
<b>Ընդամենը</b>			<b>222704</b>

Այսպիսով, սպասվող շահույթի հաշվին գյուղատնտեսական տեխնիկայի համալրման ծախսերը փոխհատուցվում են 7.4 տարվա ընթացքում (222704:30086): Վերջինս հիմնական միջոցների համար փոխհատուցման նորմալ ժամանակահատված է: Սակայն, տեխնիկայի օգտագործման արդյունավետության ապահովման կարևոր նախապայման է տեխնիկայի անհրաժեշտ (նորմատիվային) ծանրաբեռնվածության ապահովումը<sup>88</sup>:

<sup>88</sup> Եղիգարյան Լ.Մ. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը: Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ԳԱԱ, Ս. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, Գիրք 2, Երևան, «Գիտություն», 2013.- էջ 120-126

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում արտադրատեխնիկական սպասարկումների հիմնախնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղիների առաջադրման ուղղությամբ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հանգել ենք որոշակի եզրակացությունների, որոնք հիմնականում հետևյալն են.

1. Գյուղատնտեսական մեքենայական ագրեգատների կամ դրա մեջ մտնող առանձին մեքենաներին ներկայացվող պահանջները տարանջատվում են 3 խմբի՝ ագրոտեխնիկական, շահագործման, տեխնիկաէներգետիկական: Նշվածի հետ մեկտեղ առավել կարևորվում են տնտեսական արդյունավետության ապահովման պահանջները, որոնց մեջ են ներառվում են նաև հիշատակված պահանջները: Տնտեսական հիմնական պահանջներից են համարվում աշխատանքի արտադրողականության բարձրացումը և արտադրանքի ինքնարժեքի իջեցումը:
2. Արտադրության և աշխատանքի ժամանակահատվածի անհամապատասխանությունը պայմանավորում է գյուղատնտեսական արտադրության սեզոնայնությունը: Վերջինս էական ազդեցություն է ունենում արտադրության կազմակերպման, արտադրատեխնիկական սպասարկումների, մասնավորապես՝ տեխնիկայի, աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և, վերջնական արդյունքում, ընդհանուր գյուղատնտեսական արտադրության վրա:
3. Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունների և տարբեր գործոնների առավել համակողմանի գնահատման նպատակով իրականացված Հայաստանի գյուղատնտեսության ուժեղ և թույլ կողմերի, խոչընդոտների և հնարավորությունների վերլուծության արդյունքում հետևություն է արվել, որ գյուղատնտեսության զարգացման հիմնական խոչընդոտները մեծապես պայմանավորված են հանրապետության գյուղատնտեսության ոլորտի արտադրատեխնիկական սպասարկումների վիճակով և դրա արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:
4. Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունների վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտել արտադրատեխնիկական սպասար-

կումների հարաբերությունները պայմանավորող հիմնական գործոնները, որոնք տարանջատվել են 11 խմբերի և մասնավորապես հետևյալն են՝

- տնտեսավարողների տեխնիկական միջոցներով ապահովվածության մակարդակը,
- տեխնիկական հավաքակազմի մակնիշային կազմը, կառուցվածքը և ծառայության ժամկետը,
- տեխնիկական միջոցների միավորների քանակը,
- ըստ հանրապետության մարզերի և տարածաշրջանների տեխնիկական միջոցների ապահովվածությունը,
- տրակտորային հավաքակազմի թվակազմի և գյուղատնտեսական մեքենաների և գործիքների համապատասխանությունը,
- տեխնիկական հավաքակազմի սարքինության մակարդակը,
- մեքենայացված աշխատանքների սպասարկումներ իրականացնող տարբեր կազմակերպական ձևով գործող կառույցների առկայությունը,
- գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակությունը,
- ձևավորված սակագների մակարդակը,
- փաստացի ցանքատարածությունները և բազմամյա տնկարկների տարածքները, դրանց կառուցվածքը,
- անասնապահության մասնագիտացումը:

5. Վերջին 22 տարվա ընթացքում տեխնիկական միջոցների ներմուծման խմբաքանակների կտրուկ կրճատման պատճառով գյուղատնտեսության մեքենայական հավաքակազմի տարիքը մեծացել, տեխնիկայի գերակշռող մասի համար անցել է ամորտիզացիոն նորմաներով սահմանված ժամանակահատվածը: Վերլուծությունից պարզվել է, որ, օրինակ, տրակտորների ընդհանուր թվի 28%-ը շահագործվում է 34 տարուց ավելի, 28.3%-ը՝ 29-33 տարի, 35.1%-ը՝ 14-28 տարի և միայն 8,6%-ը՝ մինչև 13 տարի: Փաստորեն, շահագործվող տրակտորների 91.4%-ն օգտագործվում է 13 տարուց ավելի և անցել է ամորտիզացիայի համար սահմանված ժամկետները: Հացահատիկահավաք կոմբայնների համար վիճակն առավել վատթար է, այսպես՝ հացահատիկահավաք կոմբայնների 37.4%-ը շահագործվում է 34 տարուց ավելի, 41.9 %-ը՝ 29-33 տարի, 14.5 %-ը՝ 14-28 տարի և միայն 6.2 %-ը՝ մինչև 13 տարի:

6. Առկա գյուղատնտեսական տեխնիկայի վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2015 թվականի տարեսկզբին տեխնիկայի սարքինության ցուցանիշը կազմում էր՝

տրակտորներինը՝ 78.9, հացահատիկահավաք կոմբայններինը՝ 74.3, կերահավաք կոմբայններինը՝ 72.8, խոտհնձիչներինը՝ 84.4, տրակտորային կցասայլերինը՝ 87.1, գութաններին՝ 88.3, կուլտիվատորներինը՝ 84.5%: Մաշված տեխնիկայի շահագործումը հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի գերածախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, թանկացնում նորոգման և տեխսպասարկման աշխատանքները: Շահագործման ծախսերը՝ տեխնիկայի շահագործման ժամկետներով պայմանավորված՝ ավելանում են ավելի քան 50%-ով, արտադրողականությունը կրճատվում է 40%-ով, իսկ վառելանյութի ծախսը 1 էտալոնային հա-ի հաշվով՝ գրեթե 67.0%-ով:

7. Գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության բնագավառում ստեղծված վիճակի հետևանքով հաճախ մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով ագրոտեխնիկական կանոններով պահանջվող մի շարք գործընթացներ չեն կատարվում կամ կատարվում են ձեռքով՝ խիստ բարձրացնելով մշակության աշխատատարությունը և խախտելով աշխատանքների կատարման լավագույն ժամկետները: Գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակայանի վերազինման հարցում առկա դժվարություններն առնչվում են տեխնիկական շահագործող սուբյեկտների, սպասարկումների կարիք ունեցող գյուղացիական տնտեսությունների ֆինանսական սուղ հնարավորությունների, ներմուծվող մեքենայացման միջոցների և պահեստամասերի բարձր գների և այլ պատճառների հետ:
8. Գյուղացիական տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների տեխնիկական միջոցներով ապահովվածության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջինիս մակարդակը չափազանց ցածր է, այսպես՝ 100 տնտեսության հաշվով տրակտորների ապահովվածությունը կազմում է 4.43, իսկ բեռնատար ավտոմեքենաներինը՝ 4.44: Մնացած տեխնիկական միջոցներով ապահովվածությունն առավել ցածր է: Առկա իրավիճակը զգալի բարդություններ է առաջացնում մեքենայացված աշխատանքներով սպասարկումներ կազմակերպելիս՝ անհավասար պայմաններ ստեղծելով տեխնիկայի սեփականատերերի և գյուղացիական տնտեսությունների միջև:
9. Կատարված հաշվարկներից բացահայտվել է, որ տեխնիկական միջոցներից տրակտորների փաստացի ծանրաբեռնվածությունը, համեմատած տարեկան ծանրաբեռնվածության կողմնորոշիչ նորմաների հետ, զգալիորեն ցածր է (ընդհա-



նուր նշանակության տրակտորների համար այն տատանվում է 1320-2673 էտալոնային հեկտարի սահմաններում), նույն իրավիճակն է նաև տրակտորային գութանների գծով, միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 91.5 ֆիզիկական հեկտար (կողմնորոշիչ նորման ընդհանուր նշանակության գութանների համար կազմում է 125 հեկտար): Հացահատիկահավաք կոմբայնների համար վիճակը այլ է, մի շարք մարզերում դրանց ծանրաբեռնվածությունը զգալիորեն գերազանցում է կողմնորոշիչ նորմաներին (119 հեկտար), այն հատկապես բարձր է ՀՀ Գեղարքունիքի, Արարատի և Արագածոտնի մարզերում: Ստեղծված իրավիճակը պահանջում է բերքահավաքի ժամկետներից կախված, հացահատիկահավաք կոմբայնների տեղափոխման կազմակերպում:

10. Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեքենայական ագրեգատների արդյունավետությունը մեծապես կախված է մշակվող և բերքահավաքի ենթակա հողակտորի չափերից: Տնտեսագետների կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ հանրապետության գյուղացիական տնտեսություններին պատկանող վարելահողերի և մշակվող հացահատիկային մշակաբույսերի տարածքների միջին չափը համապատասխանաբար կազմում է 1.1 և 0.6 հա: Հաշվի առնելով այն, որ մշակված տարածքը կարող է բաժանվել առնվազն 2 հողակտորի, գյուղացիական տնտեսությունների կողմից մշակվող հողակտորների միջին չափը կկազմի համապատասխանաբար 0.55 և 0.3 հա, որտեղ ագրեգատների արտադրողականությունը, հետևաբար նաև արդյունավետությունն առավել ցածր է: Մեքենաօգտագործման ներկա վիճակից ակնհայտ է հողերի մշակությունը համատեղ օգտագործման սկզբունքով կազմակերպելու խնդրի հրատապությունը և այդ ուղղությամբ համապատասխան մեխանիզմների, միջոցառումների մշակման և ներդրման անհրաժեշտությունը:

11. Ուսումնասիրությունները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների տեխնիկական միջոցներով ապահովվածության ցածր մակարդակի հետևանքով արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառում մշտապես ծագում են դժվարություններ և ոչ հավասար պայմաններ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական տեխնիկական տնօրինող սեփականատերերի միջև: Արտադրատեխնիկական սպասարկումների բացարձակ գերակշռող մասն իրականացվում է առանձին տեխնիկայի սեփականատեր հանդիսացող անձանց և գյուղացիական տնտեսութ-

յունների միջև փոխադարձ պայմանավորվածության հիման վրա: Սպասարկումները, որպես կանոն, հիմնականում իրականացվում են չհամակարգված, չեն գործում պայմանագրային հարաբերությունները և գոյություն չունեն անգամ աշխատանքների կազմակերպման պարզեցված գրաֆիկներ: Ստեղծված վիճակի արդյունքում հանրապետության տարբեր մարզերում և տարածաշրջաններում ձևավորվում են գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքներով սպասարկման տարբեր մակարդակ ունեցող սակագներ, որոնք էականորեն միմյանցից տարբերվում են:

12. Մեքենայացված աշխատանքների սակագների տատանումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնցից հիմնականներն են՝ գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության մակարդակը, սարքինության մակարդակը, գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների իրականացման պահանջարկը, մշակվող հողատեսքերի չափերը, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և բազմամյա տնկարկների տարածքները, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների կառուցվածքը, հացահատիկային և կերային մշակաբույսերի բերքատվության մակարդակը:
13. Գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բնորոշման ցուցանիշներից է համարվում գյուղատնտեսական համապատասխան մեքենաներով գյուղատնտեսական տրակտորների ապահովվածության մակարդակը (ապահովվածության գործակիցը): Գնահատված ցուցանիշները վկայում են նշված տեխնիկական միջոցներով ապահովվածության անհավասար մակարդակի մասին: Հաշվարկված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսական տեխնիկայով տրակտորների ապահովվածության համեմատաբար բարձր մակարդակ գոյություն ունի ՀՀ Շիրակի, Սյունիքի, Արարատի և Արմավիրի մարզերում:
14. Գյուղատնտեսական տեխնիկայի պահեստամասերի, նավթամթերքի և այլ նյութական ռեսուրսների մատակարարումը կրում է չհամակարգված բնույթ: Այս գործընթացը հիմնականում իրականացվում է մասնավոր տնտեսավարողների կողմից: Բնագավառում գրեթե չեն գործում գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների միջև պայմանագրային հարաբերությունները, այդ ռեսուրսները ձեռք են բերվում առքուվաճառքի ժամանակ ձևավորվող գներով, իսկ այդ պարագայում մատակարարները սովորաբար հանդես են գալիս գները թելադրողների դերում:

15. Գյուղատնտեսության մեքենաօգտագործման զարգացման բնագավառում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք ընդհանուր գծերով հետևյալն են՝

- գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող այլ տնտեսավարողների տեխնիկական միջոցների ապահովվածության ցածր մակարդակը, հողօգտագործման ներկայիս չափերի համար մեքենայական ագրեգատների ցածր արտադրողականությունը և արդյունավետությունը,
- տեխնիկական միջոցների ֆիզիկական և բարոյական մաշվածության բարձր մակարդակը, տեխնիկական սպասարկումների և նորոգումների իրականացման պահանջների անտեսումը,
- տեխնիկական միջոցներով սպասարկումներ կատարող տնտեսավարողների միջև անհավասար մրցակցությունը, տեխնիկաօգտագործման արդյունավետ ձևերի կիրառման բացակայությունը, տեխնիկայի թերբեռնվածությունը և ծանրաբեռնվածության անհավասարությունը,
- տեխնիկական միջոցների ապահովման տարբեր դրամաշնորհային ծրագրերի և լիզինգային մեխանիզմների կիրառման դանդաղ ընթացքը,
- առկա տեխնիկայի առավել արդյունավետ օգտագործման մեխանիզմների կիրառման, մասնավորապես՝ բնագավառում կոոպերացման սկզբունքների և այլ արդյունավետ կազմակերպման ձևերի ներդրման դանդաղ ընթացքը,
- նորոգումների և տեխնիկական սպասարկումների բնագավառում համայնքների մակարդակով աշխատանքների կազմակերպման արդյունավետ մեխանիզմների կիրառման բացակայությունը:

16. Կատարված ուսումնասիրություններից բացահայտվել են գյուղատնտեսության տեխնիկական միջոցների սպասարկումների (նորոգում և տեխնիկական խնամք) բնագավառում ծառայած մի շարք խնդիրներ, որոնց բնութագիրը ամփոփ ձևով հետևյալն է՝

- գյուղատնտեսական տեխնիկայի սեփականատերերի ցածր վճարունակության հետևանքով նրանց կողմից հիմնականում չեն պահպանվում նորոգումների և տեխնիկական սպասարկումների անցկացման սահմանված պահանջներն ինչպես պարբերականության, այնպես էլ աշխատանքների ամբողջական կատարման առումով,
- մի շարք գործոններով (սպասարկումների բարձր գներ, ցածր որակ, մասնագիտացված եզակի ընկերությունների հեռավորություն և այլն) պայմանավորված՝ գյուղա-

տնտեսական տեխնիկայի սեփականատերերը հիմնականում չեն դիմում տեխնիկական սպասարկումների և նորոգումների գործառույթ իրականացնող տնտեսավարողների, այլ այն գերադասում են կատարել իրենց ուժերով,

- հանրապետության համայնքներում կազմալուծվել և չեն գործում նախկին տնտեսությունների նորոգման արհեստանոցները և չեն ձևավորվում նման գործառույթ ունեցող գործող կառույցներ,
- տեխնիկական միջոցների ծառայության ժամկետներն անցել են սահմանված նորմաները, նորոգումների ու տեխնիկական սպասարկումների ծախսերը զգալիորեն բարձր են, իսկ հետևանքը այդ աշխատանքների ցածր արդյունավետությունն է:

17. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների բնագավառի վիճակի ուսումնասիրությունները հնարավորություն են տվել բացահայտել նշված ոլորտի զարգացման հիմնախնդիրները և գնահատել դրանց լուծման հնարավորությունները (թվով 17): Այդ հիմնախնդիրներն են՝

- գյուղատնտեսական տեխնիկական հավաքակազմի (ներառյալ տրակտորները, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայնները, գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները) նորացման, տեխնիկական վերազինման տեմպերի արագացումը.
- գյուղատնտեսությունում տնտեսավարողների վճարունակության և հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկություններին համապատասխան գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարման մատչելի մեխանիզմների ներդրումը.
- գյուղատնտեսական արտադրատեխնիկական սպասարկումների գործառույթ ունեցող տնտեսավարողների, տեխնիկայի առանձին սեփականատերերի և գյուղատնտեսությունում տնտեսավարողների միջև պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների արմատավորումը.
- գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումներ իրականացնող տարբեր կազմակերպական ձևեր ունեցող մասնագիտացված կառույցների՝ կոոպերատիվների, ընկերությունների ձևավորումը և դրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումը.
- գյուղատնտեսության մեջ օգտագործվող հիմնական ռեսուրսների (պահեստամասեր, դիզելային վառելանյութ, պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլն) մատակարարման արդյունավետ գործող համակարգի ձևավորումը.

- գյուղատնտեսական տեխնիկայի տեխնիկական սպասարկումների գործունեության բարելավումը և կատարելագործումը:
18. Գյուղատնտեսական ձեռնարկություններին մեքենաների և սարքավորումների մատակարարման առավել առաջադիմական ձևերից է հանդիսանում լիզինգը: Այն երկարատև ֆինանսավորման և ապրանքնային վարկի ձև է: Լիզինգի առանձին տեսակներ նման են տարավճարման և վարձույթով ապրանքի վաճառքին: Ջար-գացած երկրներում լիզինգային գործարքներն իրականացվում են մասնագիտացված լիզինգային ընկերությունների և խոշոր առևտրային բանկերի կողմից: Տեխնիկա արտադրող ընկերությունների 90%-ից ավելին վաճառքը, մեքենաների երաշխավորված տեխնիկական սպասարկումը և պահեստամասերի իրացումն իրականացնում է անկախ միջնորդային կետերի միջոցով:
19. Նոր տեխնիկայի գնի բարձրացման պայմաններում առավել արդիականություն է ստանում օգտագործված տեխնիկայի շուկան: Առաջատար երկրների ֆերմերների զգալի մասը տրակտորների և գյուղատնտեսական տեխնիկայի զգալի մասը ձեռք է բերում տեխնիկայի երկրորդային շուկայից: Օրինակ, ԱՄՆ-ի հացահատիկային կոմբայնների երկրորդային շուկան երեք անգամ գերազանցում է նոր մեքենաների շուկային: Դրանից բացի օգտագործված տեխնիկան հաճախ մասնատվում և իրացվում է որպես պահեստամասեր: Արևմտավրոպական երկրների ֆերմերները գյուղատնտեսական աշխատանքների շուրջ 50%-ն իրականացնում են երկրորդային շուկայից ձեռք բերվող տեխնիկայի միջոցով: Օգտագործված տեխնիկայի հիմնական իրացնողները միջնորդային կազմակերպություններն են, որոնք հնարավորություն ունեն տեխնիկան որակապես նախապատրաստել իրացման համար, իրականացնել որակյալ տեխնիկական սպասարկումներ, անհրաժեշտության դեպքում՝ նաև նորոգումներ:
20. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների միջազգային փորձի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս գնահատել դրանց կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում: Գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքների կազմակերպման համար հանրապետությունում հեռանկարային են համարվում տեխնիկայի օգտագործման հետևյալ ձևերը՝ կոոպերացման սկզբունքով գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման

կազմակերպումը, տեխնիկայի օգտագործման միջ-տնտեսային միավորների ձևավորումը, մեքենայացված աշխատանքներով սպասարկող մասնագիտացված առանձին կառույցների (ընկերությունների) ձևավորումը, որոնք գործունեությունը կիրականացնեն գյուղացիական տնտեսությունների հայտերի և պայմանագրային հարաբերությունների հիման վրա, կոոպերատիվների ձևավորումը, որոնք մեքենայացված աշխատանքներով սպասարկումներ կիրականացնեն կոոպերատիվի անդամների համար:

21. Գյուղատնտեսական տեխնիկայի նորոգումների և տեխնիկական սպասարկումների իրականացումը նպատակահարմար է գտնվում իրականացնել կոոպերացման սկզբունքով գործող և մասնագիտացված կառույցների միջոցով, ինչպես նաև տեխնիկա արտադրող և մատակարարող խոշորագույն ընկերությունների՝ հանրապետությունում ձևավորված ներկայացուցչությունների կողմից: Ինչ վերաբերում է գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարմանը, ապա հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները, գյուղացիական տնտեսությունների չափերը և դրանց վճարունակությունը պահանջում են, որ տեխնիկայի մատակարարումն իրականացվի մատչելի լիզինգային մեխանիզմներով, ապրանքային վարկերի միջոցով:

22. Աշխատանքի շրջանակներում, հիմք ունենալով մի շարք չափելի գործոններ (որոնց բնութագրող ցուցանիշները երակարատև ժամանակահատվածի համար հասանելի են), հաշվարկվել է դրանց քանակական գնահատականը գյուղատնտեսական հիմնական տեխնիկայի սարքինության մակարդակի և տեխնիկայի օգտագործման արդյունավետության հիման վրա: Մասնավորապես՝ զույգային կոռելացիայի գործակիցը տրակտորների տարիքային կազմի և դրանց սարքինության մակարդակի միջև ստացվել է 0.844: Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ հանրապետության համար գյուղատնտեսական տրակտորների միջին տարիքի և սարքինության մակարդակի միջև կապը սերտ է (այն մեծ է 0.7-ից): Ստացված արդյունքը որոշակիորեն հակասում է տրամաբանությանը, ըստ էության տրակտորային հավաքակազմի տարիքային կազմի բարձրացումը պետք է բացասաբար անդրադառնար սարքինության մակարդակի վրա: Սակայն, այստեղ ազդել են նաև այլ գործոններ: Զույգային կոռելացիայի գործակիցը հացահատիկահավաք կոմբայնների միջին տարիքի և սարքինության մակարդակի միջև ստացվել է 0.472:

Կոռելացիոն գործակցի ստացված արժեքը ցույց է տալիս, որ ՀՀ-ում հացահատիկահավաք կոնբայնների միջին տարիքի ազդեցությունը սարքինության մակարդակի վրա միջին է (այն գտնվում է 0.3-0.7-ի միջակայքում): Նշվածի հետ մեկտեղ գնահատվել է գյուղատնտեսական տեխնիկայի սարքինության մակարդակի և այլ ցուցանիշների միջև գոյություն ունեցող կապի բնույթը:

23. Աշխատանքում ներկայացվել են տրակտորային ագրեգատների, բերքահավաքի մեքենանների մեքենայացված սակագների հաշվարկների մեթոդական մոտեցումները, համաձայն որի սակագինը ներառում է մի շարք բաղադրիչներ և ենթաբաղադրիչներ, մասնավորապես՝ այն ներառում է շահագործական ծախսերը, որը ընդգրկում է տրակտորիս մեքենավարի և տրակտորային ագրեգատը սպասարկող օժանդակ անձնակազմի վարձատրությունը, տեխնիկայի ամորտիզացիայի արժեքը, տեխնիկայի հիմնական ու ընթացիկ նորոգումների ծախսերը, տեխնիկայի տեխնիկական խնամքի և պահպանման ծախսերը, վառելանյութի, քսայուղերի և գործարկման բենզինի ծախսերը: Սակագինը ներառում է նաև ընդհանուր արտադրական և տնտեսական ծախսերը, նորմատիվային շահույթը, ինչպես նաև ավելացված արժեքի հարկը: Աշխատանքում տրվում են սակագնի մեջ ներառված բոլոր բաղադրիչների և ենթաբաղադրիչների հաշվարկման մեթոդական մոտեցումները:

24. Գյուղատնտեսության տեխնիկաօգտագործման բնագավառում առկա խնդիրների գնահատման արդյունքում ձևավորվել են առաջարկություններ՝ ուղղված գյուղատնտեսության տեխնիկական միջոցներով սպասարկումների բարելավմանը և արդյունավետության բարձրացմանը, որոնք մասնավորապես հետևյալն են՝

- գյուղատնտեսության տեխնիկաօգտագործման կազմակերպումը կոոպերացման սկզբունքով,
- համատեղ սկզբունքով հողօգտագործման մեխանիզմների մշակումը և ներդրումը,
- կոոպերացման և միավորման սկզբունքով տեխնիկա օգտագործող տնտեսավարողների և անհատ սեփականատերերի համար հավասար տնտեսական պայմանների ստեղծումը,
- տեխնիկական միջոցների նորացումը և դրանց համալրումը հնարավոր է իրականացնել տեխնիկայի մատակարարման լիզինգային մեխանիզմների կիրառմամբ, ինչպես նաև տեխնիկական հագեցվածության համար նպատակային վարկերի տրամադրմամբ,

- դրամաշնորհային ծրագրերի հաշվին հանրապետությունն ներմուծվող գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման տրամադրման մատչելի և արդարացի մեխանիզմների կիրառումը:

25. Հանրապետության համայնքներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ներկա պայմաններում գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման առավել արդյունավետ ձև կարող է հանդիսանալ դրանց օգտագործման կազմակերպումը կոոպերացման սկզբունքով՝ պահպանելով տեխնիկայի սեփականատերերի սեփականության իրավունքը: Առաջարկվում է համատեղ օգտագործման գործընթացում ներառել հետևյալ տեխնիկական միջոցները՝

- տրակտորներ, բեռնատար ավտոմեքենաներ և դրանց կցասայլեր,
- հողամշակ և ցանքի մեքենաներ (գութաններ, կուլտիվատորներ, երեսվարիչներ, տափաններ, շարքացաններ, կարտոֆիլատնկիչներ և այլն),
- բերքահավաքի և հետբերքահավաքային մեքենաներ (հացահատիկահավաք կոմբայններ, կարտոֆիլահանիչներ, կերահավաք և սիլոսահավաք կոմբայններ, խոտհնձիչներ, հավաքիչ-մամլիչներ և այլն):

26. Ներկայացվել է գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի կազմակերպման սխեման: Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի գործունեությունն ապահովելու համար նրա կազմում պետք է լինեն հետևյալ ստորաբաժանումները՝

- գյուղացիական տնտեսությունների պահանջարկի գնահատման, խորհրդատվության և պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման,
- ինժեներական, նորոգման և տեխնիկական խնամքի կազմակերպման,
- նյութատեխնիկական ռեսուրսների ապահովման:

Գյուղական համայնքներում գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի ձևավորման անհրաժեշտությունը հիմնավորելու համար կատարվել է վերջինի ստեղծման ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և խոչընդոտների (SWOT) վերլուծություն:

27. Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման առաջարկվող կառույցը ներառում է 78 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 14 տրակտոր, 2 հացահատիկահավաք կոմբայն և 62 միավոր գյուղատնտեսական մեքենաներ (գութաններ, շարքացաններ, կուլտիվատորներ, խոտհնձիչներ, խոտի փոցխեր, հավաքիչ



մամլիչներ, սրսկիչներ, տրակտորային կցասայլեր և այլն): Հավաքակազմի աշխատանքը ծրագրավորելիս հաշվի են առնվել տրակտորների, ինչպես նաև գյուղատնտեսական մեքենաների ծանրաբեռնվածության կողմնորոշիչ նորմաները, որի ապահովումը կարևորագույն երաշխիք է տեխնիկայի օգտագործման արդյունավետության ապահովման համար: Աշխատանքի ծրագրավորման համար հաշվի է առնվել նաև տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի մեջ ներառվող տեխնիկական միջոցների շուկայական գինը, ընդգրկվել են ինչպես նոր, այնպես էլ օգտագործված, բայց շահագործման համար բավականին բարվոք տեխնիկական միջոցներ: Հիմք ունենալով մեքենայացված աշխատանքների սակագների հաշվարկման համար առաջարկված մեթոդական մոտեցումները, ինչպես նաև հավելելով չնախատեսված այլ ծախսերը, սպասվող շահույթը և ավելացված արժեքի հարկը՝ հաշվարկվել են մեքենայացված աշխատանքների սակագներն ըստ առանձին արտադրական գործընթացների և ագրեգատների: Վերջինս կարող է կողմնորոշիչ լինել գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցների աշխատանքի ծրագրավորման համար: Առանձին մեքենայացված աշխատանքների համար սպասարկումների ծավալից և սակագներից ելնելով հաշվարկվել է գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ օգտագործման կառույցի սպասվող հասույթը տարվա կտրվածքով, որը կազմել է 216.6 մլն դրամ, որից շահույթի մասը կազմում է 30.1 մլն դրամ:

28. Տեխնիկական միջոցների՝ տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների շուկայական գներից և միավորներից ելնելով՝ հաշվարկվել են հավաքակազմի ձևավորման համար պահանջվող ծախսերը, որոնք կազմել են 222.7 մլն դրամ: Վերջինս համադրելով սպասվող շահույթի հետ՝ պարզվել է, որ ներդրումները հնարավոր է փոխհատուցել 7.4 տարվա ընթացքում: Վերջինս հիմնական միջոցների համար փոխհատուցման նորմալ ժամանակահատված է: Սակայն արդյունավետություն հնարավոր է ապահովել միայն տեխնիկայի անհրաժեշտ (նորմատիվային) ծանրաբեռնվածության ապահովման դեպքում:

Նշված և աշխատանքում արված եզրահանգումների ու առաջարկությունների կիրառումը կարող է նպաստել հանրապետության գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների տնտեսագիտական հիմնախնդիրների բացահայտմանը և դրանց լուծման ուղիների առաջադրմանը, արդյունքում՝ հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Պաշտոնական հրապարակումներ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք: ՀՕ-239, 1998թ.
2. «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, 5 հունիսի, 2002թ., ՀՕ-339
3. «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-209-Ն
4. Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիր (հավանության է արժանացել 2013 թվականի, N515-Ա որոշմամբ), Երևան, 2013թ.-84 էջ
5. Կայուն զարգացման ծրագիր: Երևան 2008թ. հաստատվել է ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի N1207-Ն որոշմամբ
6. ՀՀ ագրոպարենային համակարգի հիմնախնդիրները և զարգացման ռազմավարությունը, Երևան, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, 2002թ., 134 էջ
7. ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2012 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» N1221-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն որոշում
9. «ՀՀ մարզերում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմամբ գյուղատնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգ: Հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից 2006թ. ապրիլի 6-ին (արձանագրություն N 13), 20 էջ
10. Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգ: ՀՀ կառավարության 2010թ. նոյեմբերի 4-ի N43 արձանագրային որոշում

### Վիճակագրական նյութեր

11. Գյուղացիական տնտեսությունների, առևտրային կազմակերպությունների քանակի և դրանց պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի մասին, 2006թ. հունվարի 1-ի դրությամբ: Վիճակագրական տեղեկագիր: ՀՀ ԱՎԾ, Երևան 2006թ.- 4 էջ
12. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 1990-1999թթ., վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2001թ.- 168 էջ

13. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005թթ., վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2006թ.- 166 էջ
14. Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2006-2010թթ., վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ.- 163 էջ
15. Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, 2011թ. հունվարի 1-ի դրությամբ: ՀՀ ԱՎԾ, Երևան 2011թ.- 10 էջ
16. Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2012թ. հունվարի 1-ի դրությամբ: Վիճակագրական տեղեկագիր: ՀՀ ԱՎԾ, Երևան 2012թ.- 9 էջ
17. Հայաստանի վիճակագրական տարեգիրք: ՀՀ ԱՎԾ, Երևան 2012թ. - էջ 57
18. Գյուղատնտեսական մթերքների իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից: Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2012թ.- 10 էջ
19. 2012 թվականի բերքի տակ կատարված ցանքատարածությունների համատարած հաշվառման հանրագումարները: Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ԱՎԾ, Երևան 2012թ.- 8 էջ
20. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ԱՎԾ: Երևան 2013թ.- էջ 18-23

#### **Մասնագիտական գրականություն**

21. Ավետիսյան Ս. Գյուղատնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների պահանջների հայտնաբերման և ներդրման առանձնահատկությունները շուկայական հարաբերությունների անցման պայմաններում: Միջազգային գիտաժողով, 6-8 նոյեմբեր, Երևան.- 1997թ.
22. Ավետիսյան Ս. Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում, «Վահան», Երևան, 2002. - 260 էջ
23. Ավետիսյան Ս. Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը: Երևան: «Լիմուշ» հրատարակչություն, 2010.- 237 էջ
24. Ավետիսյան Ս. Ագրոպարենային համալիր՝ շուկայական ենթակառուցվածքների ձևավորման հրատապ խնդիրները, Հայաստան, 2001, թիվ 5
25. Ավետիսյան Ս. և ուրիշներ գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնները որպես տարածաշրջանային մակարդակներում նոր տեխնոլոգիաների զարգացման կարևոր օղակ: Միջազգային գիտաժողով, 6-8 նոյեմբեր, Երևան, 1997թ.

26. Բայադյան Ա.Յ. Ֆինանսավիճակագրական բացատրական բառարան.- Երևան.: Լիմուշ, 2008.- էջ 254
27. Բոստանջյան Վ., Դավթյան Ս. Տնտեսական քաղաքականության ռազմավարության ուղղությունները անցումային շրջանում, ՏՀԻ, Տնտեսագիտական հոդվածների ժողովածու. Գիրք 1, Երևան, 1998.- էջ 117
28. Գրիգորյան Կ., Ոսկանյան Գ. Ագրարային տնտեսագիտության հիմնահարցերը ՀՀ ագրոպարենային համակարգի բարեփոխումների փուլում»: Գիտաժողով «Ագրարային գիտությունը և բարեփոխումները 21-րդ դարի նախաշեմին»: Երևան, 1998.- էջ 454
29. Գրիգորյան Վ., Եսայան Լ., Սմբատյան Ա. Պետության արգրարային քաղաքականության և արտադրության արդյունավետության բարձրացման մի քանի հարցեր, ՀԳԱ, Տնտեսագիտական հոդվածների ժողովածու, Երևան, 1998.- էջ 4-12
30. Գրիգորյան Վ.Գ. Արտադրական պաշարների նորմավորումը և օպտիմալ չափերը: Գյուղատնտեսական գիտությունների տեղեկագիր: 1995.- 7-9, էջ 219-224
31. Գևորգյան Մ. Ա., Եղիազարյան Բ., Թամազյան Ա., Մամիկոնյան Հ. ՀՀ ագրարային համակարգի զարգացման ծրագրի շուրջը, ՏՀԻ, գիտական հոդվածների ժողովածու: Գիրք 2, Երևան 1997, էջ 94-103
32. Գևորգյան Ս.Ա. Գյուղատնտեսական կոոպերացիա. Անցյալը և ներկան: Երևան, Տնտեսագետ, 2002.- 177 էջ
33. Դավթյան Գ., Մարգարյան Լ., Աբգարյան Վ. և ուրիշներ. Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում: Ուսումնական ձեռնարկ ագրոպարենային ոլորտի տնտեսագիտական, ագրոնոմիական ու ճարտարագիտական մասնագիտությունների ուսանողների համար: Երևան: Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, 2004.- 430 էջ
34. Եղիգարյան Լ. Ս. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների առանձնահատկությունները: // Ֆինասներ և էկոնոմիկա, 7 (157) հունիս 2013. - էջ 16-20
35. Եղիգարյան Լ. Ս. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության առանձնահատկությունները և արտադրատեխնիկական սպասարկումների հարաբերությունները պայմանավորող գործոնները: // Ֆինասներ և էկոնոմիկա, 7 (157) հունիս 2013. - էջ 20-22
36. Եղիգարյան Լ. Ս. ՀՀ գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման հնարավորությունները: // Ֆինանսներ և էկոնոմիկա, 9 (159) սեպտեմբեր 2013. - էջ 68-71

37. Եղիգարյան Լ. Ս. Գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը: // «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախդիրները Հայաստանի Հանրապետությունում», ԳԱԱ, Մ. Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ, գիտական հոդվածների ժողովածու, գիրք 2, Երևան, «Գիտություն», 2013. - էջ 120-126
38. Խաչատրյան Ա.Ց., Ավետիսյան Ս.Ս. Արտադրատեխնիկական սպասարկման կենտրոնների ստեղծումը որպես ագրարային շուկայի զարգացման կարևոր օղակ: «Շուկայական տնտեսության զարգացման հիմնահարցերը ՀՀ ագրարային ոլորտում», Երևան, 1998.- էջ 9-10:
39. Խաչատրյան Ա. Ց., Հայրունյան Գ. Գ. Ստորումներ գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Էկոնոմիկա, 1997.- 10-12, էջ 49-55
40. Ծպնեցյան Հ.Ս. Գյուղատնտեսությունում կոոպերացիայի ձևավորման խնդիրները: Ագրոգիտություն, N4, 2003.- էջ 151-158
41. Ծպնեցյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման խնդիրները և դրանց լուծման ուղիները: Ագրոգիտություն, թիվ 9-10, 2003.- էջ 457-461
42. Ծպնեցյան Հ.Ս. Արտադրական ենթակառուցվածքները և դրանց դերը Հայաստանի ագրարային ոլորտի զարգացման գործում: ՀՀ գյուղատնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները, գիտական հոդվածների ժողովածու, IV, գյուղատնտեսության էկոնոմիկայի գ/հ ինստիտուտ, Երևան 2003.- էջ 21-22
43. Ծպնեցյան Հ.Ս. Հայաստանի ագրարային ոլորտի փոքր և միջին ձեռնարկատիրության խթանումը որպես գյուղատնտեսության ենթակառուցվածքների գործունեության բարելավման նախադրյալ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները, Գիտական հոդվածների ժողովածու-2, Երևան: 2004.- էջ 306-313
44. Ծպնեցյան Հ. Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների զարգացումը՝ աղքատության կրճատման կարևորագույն ուղղություն, Հայաստանի սոցիալական միտումները, տեղեկատվական վերլուծական պարբերական, Նոյեմբեր 2004.- էջ 10-14
45. Ծպնեցյան Հ.Ս. Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային

- տնտեսության պայմաններում: Երևան: Հեղինակային հրատարակություն, 2005.- 266 էջ
46. Հակոբյան Լ., Շափաղաթյան Ն. Ագրարային աշխատանքի շուկան և զբաղվածության բարձրացման հիմնախնդիրները Հայաստանի գյուղական բնակավայրերում, Երևան: 1999.- 144 էջ
47. Հակոբյան Լ.Լ., Ճեպեճյան Շ.Ա. Գյուղատնտեսության էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի համար: Երևան: ՀՊԱՀ, 2012.- 268 էջ
48. Համբարձումյան Ա. Հ., Ծպնեցյան Հ. Ս. Գյուղատնտեսության մեքենայացված աշխատանքների գնահատումը, Երևան, Ասողիկ-2001.- 21 էջ
49. Համբարձումյան Ա.Հ., Գրիգորյան Կ.Վ. Գյուղատնտեսության մեքենայացման զարգացման հիմնախնդիրները հանրապետությունում, Շուկայական տնտեսության զարգացման հիմնախնդիրները ՀՀ ագրարային ոլորտում, միջազգային գիտաժողովի նյութեր: Էջմիածին, 1998.- էջ 76
50. Համբարձումյան Ա., Ավետիսյան Ս. Գյուղատնտեսական արտադրության սպասարկման կատարելագործման ուղիները: Ագրարային գիտությունը և բարեփոխումները 21-րդ դարի նախաշեմին, միջազգային գիտաժողովի նյութեր: Երևան, 1998.- էջ 459-461
51. Համբարձումյան Ա., Գրիգորյան Վ., Գրիգորյան Կ. Տնտեսավարման նոր պայմաններում օգտագործվող գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների աշխատունակության պահպանման հիմնախնդիրները հանրապետության գյուղատնտեսությունում, Ագրարային քաղաքականությունը և ագրոմոդել 2000 ծրագիրը, գիտաժողովի թեզիսներ, 1995.- էջ 24-25
52. Հայաստանի սոցիալական միտումները: Տեղեկատվական վերլուծական պարբերական, նոյեմբեր 2004.- 81 էջ
53. Հայրումյան Գ., Դավթյան Գ., Գրիգորյան Վ. Հանրապետության ագրարային հատվածի ինվեստիցիոն քաղաքականության հիմնական ուղղությունները: ՀԳԱ, Տնտեսագիտական հոդվածների ժողովածու: Երևան, 1998.- էջ 63
54. Ղազարյան Ս., Ղազարյան Է. Տնտեսական քաղաքականությունը և գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնադրույթները: ՏՀԻ, ժողովածու, գիրք 2, Երևան, 1997.- էջ 36-42
55. Ղազարյան Ս. ՀՀ գյուղատնտեսության հիմնական ճյուղերի զարգացման միտումները: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (Գիտաժողովի նյութեր). Երևան, «Էդիթ Պրինտ», 2007.- էջ 263-268

56. Ղազարյան Ս., Ղազարյան Է., Փաշինյան Ա. Գյուղացիական տնտեսությունների հեռանկարային զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր).-Երևան, «Գիտություն» հրատ., 2008.- էջ 206-211
57. Ղազարյան Է., Ծպնեցյան Հ. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության հիմնախնդիրները: Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր). գիրք 1, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012.- էջ 183-189
58. Ղազարյան Ս.Գ., Գրիգորյան Վ.Գ. Կոոպերացիան և գյուղատնտեսական արտադրության զարգացումը: Ագրոգիտություն, 1998, 3-4.- էջ 119-122
59. Մամիկոնյան Հ. Գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները, Երևան, 1997.- 123 էջ
60. Մանասերյան Ն. Ագրարային հարցը երեկ և այսօր, Երևան, Տնտեսագետ, 2005.- 266 էջ
61. Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ. Շուկայական տնտեսության հիմունքները: Երևան, «Տիգրան Մեծ» 2002.- 480 էջ
62. «Մենեջմենթ», պրոֆ. Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ (երկրորդ` լրացված, բարեփոխված հրատարակություն),-Երևան: Տնտեսագետ, 2002.- 560 էջ
63. Մկրտչյան Հ., Համբարձումյան Ա. Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների արտադրատեխնիկական սպասարկումների առանձնահատկությունները և կատարելագործման ուղիները, Ագրարային քաղաքականությունը և ագրոմոդել 2000 ծրագիրը, գիտաժողովի թեզիսներ, 1995.-էջ 15-16
64. Շահնազարյան Բ.Հ. Արտադրության օպտիմալացման արդյունավետությունը գների, նորմատիվների և ուղղակի հարկերի միջոցով: «Ագրոգիտություն», թիվ 7-8, 2002թ.-էջ 299-309
65. Ոսկանյան Ա.Ե. ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարություն, (ազգային փորձագետների խմբի ղեկավար, մասնագիտական խմբագիր) Երևան, 2002.- 158 էջ
66. Ոսկանյան Ա.Ե., Հայրապետյան Ա.Ս. Ագրարային գիտության տեխնոլոգիաների ներդրումը որպես գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացն միջոց, Երևան, 2005.-1-2, էջ 5-10

67. Ջավադյան Յ.Ս. Գյուղատնտեսական կոոպերացման հիմնական դրույթները, 100 և ւնկ հարց ու պատասխան: ՈՒսումնական ձեռնարկ: ՅՊԱՅ, 2011.-97 էջ
68. «Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ)»: Ձեռնարկի պատասխանատու խմբագիր տ. գ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Ե. Կիրակոսյան, «Տնտեսագետ հրատարակություն» Երևան, 2000.- 488 էջ
69. Ուռուտյան Վ., Ավետիսյան Ս. Գյուղատնտեսական կոոպերատիվներ: Երևան: Ասողիկ, 2011.- 84 էջ
70. Ֆահրադյան Յ. Ագրարային արմատական վերակառուցումներ Հայաստանի Հանրապետությունում. անհրաժեշտություն, արդյունքներ, հիմնախնդիրներ: «Գիտություն» հրատ., Եր.: 2003.- 212 էջ
71. Аграрная сектор США в конце XX – века. М. 1997г. с. 34, 59,60, 66, 102-103, 136, 145, 303, 305- 306, 315-317, 320
72. Аграрная политика /А.П. Зинченко, В.И. Назаренко, В.В. Шайкин и др.; Под. Ред. А.П. Зинченко.-М.: КолосС, 2004.-304 с.
73. Аграрная экономика: Учебник. 2-е изд., перераб. и доп. / под ред. М.Н. Малыша. Издательство “Лань”, 2002.-688 с.
74. Аветисян С.С. Институциональная структура реализации агропромышленной продукции в Армении. Сборник научных трудов, Московской сельскохозяйственной академии им. К.А. Тимирязева и армянской сельскохозяйственной академии, Ереван - Москва, 2002.- с.200-203
75. Водянков В. Т., Судник Д. Ю. Экономическая оценка инвестиции в агропромышленном комплексе. М.: ЮРКНИГА, 2004.-с.200.
76. Гутман Г. В., Чукин Н. И., Калмыков В. В. Взаимосвязь экономической и социальной функции потребительской кооперации. М.: Издательско-книготорговый центр “Маркетинг” 2002. –176 с.
77. Кантвелл М. Способ и время збора овощей и фруктов как важнейшей элемент послеуборочной обработки: / “Агроогляд: оwoчi та фрукты”, N8 (12) 20 февраля 2006 г.
78. Касл Э. и др., Эффективное фермерское хозяйствование (Пер. с англ. и предисл. А. А. Белозарцева) М.: Агропромиздат, 1991.– 496с.,
79. Колз Ричард Л., Ул Джозеф Н. Маркетинг сельскохозяйственной продукции: / М., “Колос”, 2000.-512 с.
80. Коваленко Н.Я. Экономика сельского хозяйства с оновами аграрных рынков. Курс лекций. М.: Ассоциация авторов и издателей. ТАНДЕМ: Издательство ЭКМОС, 1998.-448 с.



81. Петраневой Г.А. Экономика и управление в сельском хозяйстве. М.: Издательский центр “Академия”, 2003.- 352 с.
82. Попов Н. А. Захарьин В.Р., Карпусь Н.П., Федеренко В.Ф. Предпринимательство в АПК. Учебник. - М.: Ассоциация авторов и издателей “ТАНДЕМ” издательство “ЭКМОЕ”, 2001-с. 352
83. Райзберг Б.А., Лозовский Л.Ш., Стародубцева Е.Б. Современный экономический словарь. М.: ИНФРА-М, 1997.-с. 349
84. Мальша М.Н. Аграрная экономика: Учебник. 2-изд., перераб. и доп. Издательство, “Лань”, 2002.-с. 688
85. Маркарян С.В. Проблемы агропромышленной интеграции в Японии. Изд. “ Наука”, М. 1982.-288 с.
86. Образ Японии. Авторское право (с) 1996, Урбан Конекши Никорп.-с 26
87. Современный экономический словарь: Райзберг Б.А. и др. / М.: ИНФРА-М, 1997.- 496с.
88. Серова Е.В. Аграрная экономика: Учебник для студентов экономических вузов, факультетов и специальностей. - М.: ГУ ВШЭ, 1999.-480 с.
89. Статистика: учеб. под ред. И.И. Елисеевой. М.: Проспект, 2010.-448 с.
90. Ткач А. В. Сельскохозяйственная кооперация: Учебное пособие. М.: Издательско-торговая корпорация “Дашков и Ко” 2002.-304 с.
91. Управление агропромышленным комплексом: Учебное пособие / Серия “Экономика и управление” Под. ред. В.В. Кузнецова. - Москва: ИКЦ “МарТ”; Ростов н / Д: Издательский центр “МарТ”, 2003.-416 с.
92. Цпнецян Г.С. Совершенствование деятельности производственных инфраструктур, как одно из важнейших условий развития органического сельского хозяйства, Материалы XIII международного симпозиума, книга 1, “ Нетрадиционное растениеводство. энология и здоровье”, г. Алушта, 2004г.-с. 129-131
93. Цпнецян Г.С. Развитие малого и среднего предпринимательства как один из важнейших компонентов дальнейшего совершенствования инфраструктуры аграрного сектора Республики Армения. Известия аграрной науки. Тбилиси, 2005, том 3, N 1-стр. 141-144
94. Цпнецян Г.С. Инфраструктурное обеспечения устойчивого развития аграрной сферы, Известия аграрной науки. Тбилиси-2005, том 3, N 2-с. 171-175
95. Шакиров Д. К., Удалов В. А., Грядов С. И. и др., Под. ред. Ф. К. Шакирова, Организация сельскохозяйственного производства, М.: Колос, 2000.-с. 449
96. Экономика и управление в сельском хозяйстве. Под редакцией Г.А. Петраневой.- М.: Издательский центр “Академия”, 2003.-299 с.

97. Экономика сельского хозяйства: Учебник для студентов высших учебных заведений/ Н.Я. Коваленко, Ю.И. Агрибов, Н.А. Серова и др.- М.: ЮРКНИГА, 2004.-384 с.
98. Экономика сельского хозяйства: учеб. пособие / под ред. проф. Н.А. Папова.-М.: Магистр: ИНФРА-М, 2010.-398 с.
99. Яковлев Б.И., Яковлев В.Б. Организация производства и предпринимательство в АПК.- М.: КолосС, 2004.-424 с.
100. <http://www.armstat.am/am/>
101. [www.minagro.am/am/](http://www.minagro.am/am/)
102. <http://www.zerno-ua.com/?p=808>
103. <http://alldisser.com/part/ref-16411.html>